

LGN  
✓ 1005

~~XI 2.~~


28  
h. t.

1999

# Մ Օ Ք Ո Ս

ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ՎԷՊ

(ՉԱՐՄԱՆԾԱԳԻ ԲԱՐԲԱՌՈՎ)



Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի

1896

## ՏԵՂԻՆԱԿԻ ՊԱՏՐԱՍ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

1. Բագրեանդ Բ. մասն. — Բագրեանդայ հայ ժողովրդեան սովորութիւններն, երգերն, երեխայոց եւ պատանեաց խաղերն, աւանդութիւններն, հաւատալիքները, առակ, զրոյցք, հանելուկ, ասացուածք, պոստիւմեր, հեքիաթներ. եւլն. եւլն:

2. Գուլթան — Բագրեանդայ հայ ժողովրդեան իսկական ըստ ըստով նկարագրուած է մանրամասն ժողովրդեան երկրագործական կենցաղավարութիւնը, նաեւ ինսամ տարուած է ժողովրդեան ըստարան, զրոյցն ու ոճը ծանօթութիւններով հանդերձ ամբողջովին պատկերացնել գործիս մէջ եւ ըստական յաջողուած է:

3. Բագրեանդայ հարսանիքն. — Վիպական ձեռի ներքեւ մանրամասն նկարագրուած է Բագրեանդայ ժողովրդեան միջնակարգ դասի մէջ հարսանեաց ամեն սովորութիւն, խնամքներու առ միմեանս ունեցած վարմունքը, յարաբերութիւնը, որոց զրոյցներն, վերջապէս մէջը կը պարունակէ նշանադրութեան եւ հարսանեաց պատկերն իւր ամէն ձեւերով. որ մի հատոր կազմելու չափ ընդարձակ է:

4. Ժողովրդական ըստարան. — Բառարանս գլխաւորապէս կազմուած է Ալաշկերտի եւ Տրապիզոնի գիւղորէից մէջ խօսուած ըստերէ:



5. Մանր զրոյցներ (անեկողոտ) որ մեծաւ մասամբ այլ եւ այլ գաւառացիներու ըստ ըստով, շատ անգամ որոց խօսած ոճով զրի առնուած. մասամբ եւս զրական ոճով որ 800 ի չափ կը լինին:

6. Մեծ զրոյցներ, — հեքիաթածեւ առակներ, ինչ ինչ ըստ ըստով գրուած:

# Մ Օ Բ Ո Մ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ


(ՉԱՐՍԸՆՃԱԳԻ ԲԱՐԲԱՌՈՎ)



Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի

1896

1568.



Մ Ո Ք Օ Մ

ՔՅԻ ԵՄՍԻՐԻՈՐՈՒ


(ԲՈՒՅՊՈՒՐ ԴՐՈՅԵՂՄՈՒՄ)

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏԶԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



39, 1006

4 1005-Ա



ԱՌ ՄԵՄ. ՃԱՐՏԱՐԱԴԵՏ

Պ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Կ.

Ի ՍԻՄՖԵՐՈՊՈԼ

ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵՐԱՐ

„Արձագանքի“ 1895 № 89 եւ 94-ի քանասիրականը, որ յարգելի պ. ն. Բարամանի ստորագրութիւնը կը կրէր, Ձեր հետաքրքրութիւնը գրաւած եւ առիթ տուած է Ձեր վառ գգացմանց Մօքոսի հրատարակութեանց մեկենաս դառնալու վճռական քայլն առնել:

Ձեր այդ նուիրական ընթացք ցոյց կտայ որ դուք ազգային գրական յառաջադիմութեան ցանկացողներու մէջ ուղղակի գործնական ուղղին որոշողներէց մին էք:

Երջանիկ է հայն, որ իւր ամեն յասակարգի մէջ իւր մայրենի գրականութեան յառաջադիմութեան նախանձորդներ ունի. մեր ազգը, որ իւր աներակաց ներքեւ ունի անհաշիւ գրական բեկորներ, մեր հասարակ ժողովուրդն, որ օգտակար աւանդութիւններով լի գանձարան մի է, զորս ի լոյս հանելու համար Ձեր սիրտն կըող մեկենասներու կը կարօտի:

Այս օր գոհ սրտով կը տեսնեմ, յարգելի քարերար, որ իմ ամնշան գործս գնահատող կայ, ուրեմն հաստատուն հաւատով կըրեակայեմ որ եւս առանել պիտի գնահատուին որոց գործերն, որ անելի կարող ձեռքերու մէջ կը գտնուին. միայն թէ մայրենի հողի այդ խառնիխառուն կուտակուած աներակներն պրպտող եւ ի լոյս հանելու առիթ տուողի կը կարօտի, որ մութ ու խոնաւ խորշերէն արեգակի առաջ հանէ, հայի կենցաղավարութիւնը ու հանճարը աշխարհի առաջ պարգէ:

Իսկ ես, յարգելի Բարերար, Ձեր մեծ սրտին փոխարէն հագիւ կարողացած եմ զայս դուզնաքեայ գործ Ձեր յիշատակին նուիրել. ընդունեցէք յարգանքներս:

Ս. ՀԱՅԿՈՒՆՅ



### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Մօքոս» ժողովրդական վէպն, Եփրատի երկու ճիւղերու միջավայրն գտնուած տարածութեան վրայ մանր թափաւորաց մէջ պատահած հետաքրքրական անցքերն, աւանդութիւններն և տեղագրութիւնը կը պարունակէ:

Եփրատի երկու ճիւղի միջավայրն բռնած երկիրն ուր կան Չարսանջագ և Տէրսիմ՝ գաւառներն, կամ ըստ ժողովրդեան Ակնայ (Պև ջուր) և Բալուայ (Արածանի) ջրերու միջավայրն ուր պատահած են Մօքոսի անցքերը:

Վէպս երբեմն իւր սահմանէն դուրս կգայ, կը պատմէ Սև ջրի աջ կողմն գտնուած Երիզայի, Զիմարայի և Ակնայ վերայ, նաև Արածանուոյ ձախ ափի մօտ գտնուած Խարբերգու վերայ:

Վէպս պատմած է այժմ տեղս ներկայ Չարսանձագ գաւառացի, Խսմայիլցիք գիւղացի ութսուն ամեայ ծերունի Մինաս բարբը, որ իւր կենաց մեծ մասն անցուցած է պանդխտութեան մէջ, ի խարբերգու, յԱկն, կամախ (Անի ամրոց) Երիզայ և այժմ ի Վաղարշապատ. նորա երրորդ գալուստն է և այս վերջին գալուստը 7 տարի է՝ նաև է հասարակ բանուոր:

Մինաս ունի միջահասակ՝ հաստատուն կազմուած. կապոյտ ջրալից աչքեր, կարմիր երես, լայն թիկունք, երիտասարդի նման ուղղահայեաց կանգնած՝ առողջ կազմուած՝ չէկ՝ ածիւրած դէմք, Խօսելու և գործելու մէջ դանդաղ, անպէտ տեղն խօսիլ չսիրէր, նրա մօտ միայն կը բացուի, երբ մէկն ընկերաբար հետը կը վարուի. սա գիտէ բազմաթիւ ժողովրդական հէքիաթներ, որոցմէ 20 ի չափ ի գիր առած էմ. «կեցիր, ասաց մի օր խալանտար քրքուն ըսիմ» (սկիզբէն հիմէն) և սկսաւ Մօքոսն հատուած առ հատուած պատմել. զոր սկսայ գրի առնել 1891-1895 թուականի կէսն:

Խարբերգու վիճակին մէջ, Մինաս 10—15 տարեկան եղած միջոցին կար աշղ Օվանէս, որ և սազճի Օվանէս կասէին, շատերն ևս հայի աշուղ կանուանէին հայերէն երգելուն համար. այս Օվանէսը նոյն ժամանակ՝ ըստ Մինասի ասելուն՝ 115 տարեկան էր, նաև խեղճ մի անձ, որ տնէ իտուն կը մտնէր, երգ կասէր, սազ կածէր, մի նուէր առնելով կը գնար, այս «սազճի Օվանէսի տեղը պէյլիսուղ է. մէկ օր դերվիլը վեց հազարեայ կարգըներ էր, Օվանէսին կրսէ՝ բերդին մէջ խաղինայ կայ, հանինք. կը ասանէ Օվանէսը հոն, կը կարգայ, դուռ մի կը բացուի, Օվանէս դուրս կը բերէ փարան, դերվիլն կրսէ—հերիք բերես, դուռը կը փակուի, Օվանէս ներսը կը մնայ, դերվիլը փարան կառնէ կ'էրթայ:

Մինաս խարբերգ եղած միջոցին ապրած է այս աշուղ Օվանէսի հետ, որմէ շատ հէքիաթներ՝ նաև այս Մօքոսը լսած է, մեծ մասամբ մտահան արած լինելով՝ կարգով չէ կարողացած պատմել, շատ անգամ երկու երեք տող կպատմէր, մտահան անելով շարունակութիւնը կը դհատէր, քանի օրէն կը մտաբերեր. շատ անգամ կզգայի որ այլ հէքիաթներու անցքերըն անգիտակցաբար մօքոսին կխառններ, Շատ անգամ Մինասին գտած էմ հող և կիր շաղաղելու ժամանակ, բրջով հող փորելու և թիակով միջկողմ ձգելու ժամանակ, կամ իւր բնակարանը մուտ գոմի մի անկիւնը և կամ այգւոյ մի մի խուլ անկիւնը. հատուածներ կային հինգ կտմ տասն անգամ կրկնել տուած էմ, ամեն ճիգ թափած էմ թերութենէ զերծ պահելու, սակայն բոլորովին չեմ յաջողած:

Բացի սրանից, Մինաս կը գործածէր մի խառնակ բարբառ որ և աշխատած էմ ըստ կարելոյն կարգի դնել. թողլով մէջն դարձեալ խորթ ոճեր, և բառեր, որպէս զի բնականէն հեռացած չլինեմ:

Յոյժ ցանկալի էր իսկապէս Խարբերգի բարբառը Մօքոսի մեջ ներկայացնել, ինձնից շատ հեռի էր, այդ բարբառին անծանօթ լինելու համար, մանաւանդ որ տեղս Խարբերգցի չպատահեցաւ որ ուղղէի:

Շատ անգամ Մինասը վարձած, մօտս նստեցուցած էմ, որպէս զի աւելի շուտ գրի առնեմ, դորանով ևս չեմ յաջողած. զի նա աւելի լաւ կը յիշեր աշխատելու ժամանակ, քան հանդարտ նստած. ինքն ևս գիտէր իւր բնութիւնը, աւելի լաւ կը համարէր 20 կոպէկ օրավարձով աշխատել, քան մօտս հանգիստ նստիլ. նորանից աւելի օգտուած էմ վանքի բաղանիքի առաջ երբ տիղմ կշաղաղէր, աղիւս կը թափէր. շատ անգամ որոյ դէմքը կը գիտէի, յանկարծ ժպտալից դէմքով կերգէր, կամ կը պատմեր մի գեղեցիկ հատուած. գրիչս որոյ ասածներուն չհասնելով՝ կրկին ստիպեալ պատմել կուտայի նախադասութիւն առ նախադասութիւն, այս ժամանակ յիշած հատուածը գեղեցկութիւնից կը մերկանար, կը գառնար չոր կմախք:

Մինաս Մօքոսի դէպքերն, Զինաքեարի գործած գաղաւութիւններն կը նմանեցնէր ներկայ տաճկական բարբարոսութիւններու, պատմելու միջոցին ի խորոց հառաջանքներ կարձակէր. կը թողուր Մօքոսի շարունակութիւնը,—այս, էաս ծերութեան մէջ ընկած իք գունէ գուռ, մի օր ըռահաթ ձեղաք, դուրբէթի մէջ փտաք կորաք, առանց տղի ու բարեկամի էրես տեսելու տի մնունիք, էրմք, ախով վախով դերեզման տի էջնաք, չէղած մարդիկ իմ տունը կուտեն, ես հօսի խաղի ձևառք կը հայիմ. ըսի տանելու կրակ է:

Այս միջոցին բան չէր կարող պատմել, երբ խօսքն վերջացոյց, մի բան էլ հարցնէի, նա իւր յազումը դադարեցնելու

Համար նախ դալիօնը կը լեցնենր, կրակը վերան կը դնենր, քանի շունչ կը քաշէր, ապա կը պատասխանէր: Երբեմն շարունակ կուձենէ կը շեղուէր, միջանկեալ պատմութիւն, կամ անցք ձեռք կաննէր, որպէս «Հայութիւնը աւելի Հաստատ է մեր մէջ. ձեռք չորեքշաբթի ուրբաթ դինի չեն խմեր, ավալքու պերի դահա չորեքշաբթի ուրբաթ դինի չեն խմեր, ավալքու պերի ասի էր Խարբերդու էրկիրը, ընու Համար գիր գրող չի էղեր. ամեն տեղաց անունըկայ պատմութեան մէջ, մեր Խարբերդուն չկայ, դահա տասը գեղի մի տէրտէր կայ ևն»:

Մինաս Մօքոսը տեղ տեղ ձայնով երգած է, մի օրինակ և տխուր եղանակաւ. նա յուզուած միջոցին կուլար:

Սա Մօքոսի անցքերը պատահած վայրերուն լաւ ծանօթ է. առաջին անգամ է որ կը տեսնեմ մի անուում ծերունի. որ այդչափ որոշ կարողանայ երկրի դիրքն և իւրաքանչիւր դէպք որտեղ պատահած լինելը յիշել:

Մօքոս ըստ իս իրրև տեղագրութիւն ևս իւր արժէքը ունի. այս մասին ընթերցողներու ծառայութիւն մի մատուցանելու համար Մօքոսի մէջ զետեղեցի աշխարհացոյց քարտեզ մի, որպէս զի ընթերցողն վէպիս հետ ծանօթանայ երկրի դիրքին, որ կարգ մի վայրեր դեռ շատերու անծանօթ են:

Աշխարհացոյցի մէջ թուանշանով նշանակած եմ այն վայրերն, որ աշխարհացոյցներէ մէկու մէջ չեմ տեսած, կամ այն վայրերն, որոց վերայ աւանդութիւններ կան, և վէպիս հետ կապ ունին:

Իրբիս վերջն նաև յատուկ անուանց բառարան մի դրի ծանօթութեամբ հանդերձ, որը ևս ընթերցողին պիտի դիւրացնէ ծանօթանալ երկրի աշխարհագրական դիրքի հետ:

Մօքոս անծանօթ անունն հետաքրքրութիւնս շարժած էր, գրքիս տպագրութիւնը արդէն լրացած էր, յանկարծ ձեռս ընկաւ Յ. Վ. Ճանիկեանի «Հնութիւնը Ակնայ» երկն, ուշադրութեամբ թղթատելու միջոցին պատահեցայ էջ 51 «Մօքոս թագաւոր խորուձորով Վարուշայէն ի Վամարակապ գնալիք ձանբուն վրայ, ձորոյն քով, կարուշլայի կողմն ապառաժ քար մ'է»: Սա ունի հետևեալ ծանօթութիւնը «Մօքոս մեծ ըսել է, կըսեն, գարբիք և որմնագիրք ևս մեծ մուրճ մ' ունին զոր Մօքոս չաքուճ (չէքիճ) կը կոչեն»:

Մինաս Մօքոսի սկիզբն զետեղուելիք հատուածը նոր մտաքերած լինելով կը գետեղեմ գրքոյկիս յառաջաբանի վերջն, որ վէպիս իբրև սկզբնատրութիւն ընթերցողներն նախ զայս կարդան:

— Բաղ թագաւոր շատ խորու երկիրն էր, չորիստան էր տեղը, ամառ ձմեռ շող էր, Շողուն չէր դայրի, քառսուն խա-

թար դէվէ ունէր, ամե խաթարը քառսունական, բարձաւ, է կաւ հասաւ Պելալի (փորձանած վայր) լեառը. լեառան տակ չաղբըր զարկեց, էրկու տարի կեցաւ, հաեաւ օ ամառ ձմեռ ցուրտ է, — Չեղաւ, խալիֆայ, ըսց, ըսկայ էալ էրթը:

Չաարնին բարձան դեվեստանուն, խապար ձանփեցին հովիկներուն. — սիւրիստանը բերէք օ սկայ տի քոչինք:

Էլան շատ ու քիչ գցին, էկան մի դէօր տեղ. հոսի էրկունց ասղին հասպը կար, խուրմայի ծառին չկար — խալիֆայ, ըսց. գտաք տեղուաննիս, Չատր զարկին խուրմին ծառին տակ, տարին լմնցաւ, խուրմա շատ կար, հեմի իրանք կուտէին, հեմի ձիանուն կը կերցնէին, Թողովուրդը լսեցին օ թագաւորի տեղը ամեն բարիքը կայ, իրանք էալ քոչ էղան, շարուան իրուր էտե եկան, թագաւորը էլաւ օ եաղուն ու լեառը չատր է կը յոււէր, — խալիֆայ, ըսց, մի խապար առ, Խալիֆան ձինը հեծաւ գնըց դէպի չաարնին, հաեաւ օ իրանց մենծերը թովուած՝ փեշկեշաւաւ էկան թագաւորին տեսնել:

— Թագաւոր ապրած, ըսին. քուլի մարդիկ էկան. չատր չատրի վրայ է, սխլեթ էղաւ, ըսոր չարան:

— Խալիֆայ, ըսց, թագաւորը, ո՛ւրէ էք աթլին:

— Վերկու թոփելու է գցեր, ըսց խալիֆան:

Թեք աթլին (միակ ձիաւոր) կանչեց:

— Չիուգ փորը կը կշտացնես, կելլս կը հեծնս. աշխարքը կօլրտիս, ո՛ւր վարպետ մի կայ, կը թոփիս կը բերես, օ քաղաք մի շինեմ, ըսց կէսը հոն գնիմ:

Թեք աթլին ընկաւ ձամփայ, քառասուն օր գնըց, հասաւ մի մենծ խարապայ քաղաք, հոսի մի պառապ կար, էջաւ պառապի տունը, ջուր ուզեց, պառապը ըսց, — Աչք չունեմ օ ջուր բերեմ, խմելու մի ջուր անձախ ըլլի՛ բերըց տուեց:

— Պառապ, ըսց Թեք աթլին, ըսի մենծ քաղաք է էղեր, դու հոսի մինակ կեցեր ես, քաղքի տիրանը ո՛ւր են:

— Էսա քաղքի անունը Յօրօր է, անունը խափանի՛ տարին անգամ մի կօրուի, տակը վրայ կըլլի, ամառը կը շինիք, գարունը կօրուի, կը քանդուի. քաղաքը գարտկեր է, որը մեռեր է, որն է ալ փախեր գացեր է, ըս լեառը տեսար, անունը Բլուլ է, Ե օթը տղայ ունիմ, Եօթն եալ ամառ ձմեռ Բլուլայ գլոխնին. ես ցրտուն հոնի չղայրայ, տղոցս ըսի, տարէք ինձիս իմ հայրենիքի տեղը, հոնի մեռնիմ, Առին, էկան ինձիս հոսի ձգեցին, քովս եալ չեն իգար:

Թեք աթլու անունը աշխարհք ելեր էր, պառապ ըսոր ըսց, — դու Բնչ մարդ ես:

— Բաղ թագաւորի Թեք աթլին եմ, ըսց, եկեր իմ օ վարպետ թոփեմ, տանիմ օ քաղաք շինեն:

— Էնանկ է, ըսց պառապ, հոսի չկայ, քառսուն օր օ էկեր իս, քառսուն եալ տի երթս օ ծովուն քով սեամարգոց հաս

նիս, աւազի միջուն տերթս, ջուր չկայ, Թեք ամթլին թագաւորին գիր մի գրեց, — Տոսի վարպետ չկայ, 40 հաս դեվէ ճամփէ օ ջուր բառնամ, երթամ ծովուն քնարը սեւամարդիկ բերեմ:

Եք ամթլին եկած էր, 40 դեվէ տուեց ընոր, էլաւ դեվետտանը բարձաւ, ընկաւ ճանփայ, հասաւ Թեքամթլուն քով, ըն մեկէն օրը Թեք ամթլին ու Եք ամթլին բարձան. մէկը առաջը ընկաւ, մէկն էալ ետևուն, գցին հասան ծովու քնարը սեւամարդոց քով:

Ետք ցանք՝ հաց չունէին, կերակուրնին ձուկ էր, իրենց վրան գլուխ ձուկ կը հոտիր, օ տեսան, ըսոց ըսին, — Բեր կերթք. Աերթք վարպետի ետև, մեր թագաւորը քաղաք տի շինէ, Թեք ամթլին ու Եք ամթլին հանեցին խուրմա, հաց գինի, սեւամարդիկ թոփուան կերան, ըսին:

— Զեր էրկիրը ինչ բարելի էրկիր է, հոսի մի վարպետ կայ, Բաղինցի է, (1) Բաղին քաղաքը սով ընկաւ, պիթուն քաղաքը անցաւ, փախաւ հոսի եկաւ, Բաղինայ պետները շինողն է, շատ զորպա վարպետ է, իրա անունը՝ Վօքոս է. հերոջ անուն էայ Վօքոս էր, Սկայ Բաղին 40 աւուր ճանփայ է, ընկայ եալ Պընձէ քաղաքը 40 օր է, էկը կուզէք՝ էաս վարպետը տանիք, ձեր կերածը կէրուցէք, օ հաւաս ինէ, գայ:

Վօքոսը կանչեցին, Թեք ամթլին հանաւ Վօքոս էնոց լմանը չէր, երեսը մարդ երկու անգամ չէր կրնրը հայիր:

Թեք ամթլին, Եք ամթլին իրարու պանջին փսփսացին:

— Աղբար, ինչու գողտուկ կը փսփսաք:

— Ըս մարդու համար է, ըսի աղկէկ է, դուք սեխք:


— Ըգի մեր մինէ չէ, ըսին սեւամարդիկ, չէ յիրկուն նախըրաք, իմաց չեղաք, ըգի Բաղինայ քաղաքէն է:

Թեքամթլին ու Եքամթլին առին Վօքոսը ու դարձան ետ էկան պատապի տուն, հոնի ճաղպուան, Թեք ամթլին մէկ ճանփով գնրց, Եք ամթլին մեկէալ ճանփով, թոփեցին 40 վարպետ, էկան թագաւորի քով:



1. Տերսիմն լեռներու մէջ կայ մի աներակ քաղաք Բաղին անուամբ. Վօքոս ի յիշատակ իւր այրեննքի, այս քաղաքը շինած՝ անունը Բաղին դրած է, կասէ Մինաս:

Բաղ թագաւոր եւ Բաղդաստ քաղաք



աղղրտու խող թագաւորը քաղաք չունէր, առաջ չատր (վրան) ունէին, չատրով կը բնակուէր:

Թագաւորը մարդեր ճանբեց աշխարքի չորս թարաւը, օ՛ լաւ լաւ շիւարպետներ գըննըն, առնեն բերեն, իրեն համար մի մենծ քաղաք շինեն:

Էաս մարդեր գըցին, գտան լաւ վարպետներ, բերին թագաւորին քով, թագաւորը հարցոց, հայեաւ օ մէկը կար, 40 տարի վարպետ էղած էր, շատ բան գիտէր, էաս 2 վարպետի անունը մենծ Վօքոս էր. պզտիկը էան Վօքոսն է օ Սուբ Տիկինայ հիմը ձգեց:

Թագաւորը ըս վարպետին ամեն վարպետներուն վրայ մենծ գրաւ, հրաման բըրց օ քաղաքը շինէ:

Էաս վարպետնին խելք խելքի տուին, եօթ տարուան միջուն թագաւորի ուզածին պէս քաղաքը շինեցին, պաշ էրեցին:

Քաղաքը եօթ պարիսպ ունէր, ամէկն ալ կտր էին. մէկը քաղաքի բուրբտիքը փատթած էր. մէկէալ պարիսպնին էալ մէջէ մէջ էր, ներսինը քաղաքի բուրբ բռնած էր:

1. Ար շաղկապը փոխարկուած է. նաև որ յարաբերականը օր ի օր է. էս միահնչում է էս երկու ձայնաւորն թանձրը ո ի որև կոկորդային ո ի տեղ հնչելու է:

Պարիսպներն իրարու վրայ հինգ հինգ արշուճ բարս էր, մէջ տեղունը շատ բարս կըլլէր:

Քաղաքը մի դուռ ունէր, դռնէն ներս մտնողը շիտակ օ էրթը, եօթ պարիսպներու դռներէն տի՛ 1 անցնիր, շուկան էրթը. էկը ալ ու ձախ էրթը պէտէննուն միջուն, 2 օլրտէր օլրտէր, կինէ էան տեղ կուգար:

Բաղ թագաւոր իրեն խելացի մարդիկը կանչեց, ժողովք ըրըց. նոր շինած քաղաքին անունը Բաղդաստ դրաւ իրեն անունով. թագաւորը կանչեց վարպետները, ըսըց.

— Շնորհակալ իմ, քաղաքը իմ ուղածիս պէս շինած իք, շատ փառաւոր էղած է, էնոց պաշխիշ տուեց ու ճանբեց. Մենծ Մօքոսին եալ իցցուն ստակ օրական կըյրեց 3 օ տի օրդոց օրդի տայ:

Քաղաքացիք օ 50 ստակը (3 կոպ.) լսեցին, զարմացան թէ ըս՛ 1 ինչ շատ փարայ տուեց:

Մենծ Մօքոս շնորհակալ էղաւ, առաւ մի աւուր 50 ստակը, էջաւ շուկան, կէս ստակ տուեց 150 հակիթ առաւ, մի ստակով լիը մի միս, մի ստակով բեռ մի խուրմա (արմաւ):

Բաղ թագաւոր վարպետին ճանբեց. Մենծ Մօքոսին շատ սիրեց, իր քով պահեց, իրեն հետ հաց կուտեցնէր:

Մարդ ճանբեց, իր երկրին մէջ ինչքան օ լաւ լաւ մարդ կար. թօփեց բերաւ, էկան էաս քաղքին մէջ իրենց տըլնին (տներնին) շինեցին, բաշայեցին առուտուր ինիլը:

1. Տի կը նշանակէ պիտի, շատ անգամ պիտի, պիտի, պիտի և երբեմն ևս առաջին պատուր միայն կը գրուի ու ձայնաւորէ առաջ:

2. Բառերու վերջը «ն» մասնիկն շատ անգամ բացառականի վերջաւորութեան նշանակութիւն ունի:

3. « տառի փոխարէն » գրուած:

4. Ըս կը նշանակէ պիտի, որ Մինաս անխտիր է, էտ, էր և երբեմն ևս ինձ հասկանալի անելու համար «յ» կը գործածէր:

Աշտարակ. — Քանի մի տարի անցաւ, թագաւորը ամեն բան պատրաստ տեսաւ, հեչ մի բան ետ չթողեց, քաղաքը կարգ ու սարքի մէջ դրաւ, անցաւ եօթ տարի, հրաման ըրեց վարպետ Մօքոսին կինէ վարպետները թօփէ, ժողուէ բերէ, աշտարակ մի շինէ:

Աշխարքի վրայ ինչ զգըր օ վարպետներ կային թօփուեցան. շատ մենծ աշտարակ մի բաշայեցին շինիլը. էանքան բարս շինեցին աշտարակը, օր էջը տակը (ստորտը) էօկիւրի կուգար (կը յղանար), տասուերկու ամսուն վերը, գլոխը կելը, քուռակ կը ցկնէր: 1

Բաղի որդիք. — Բաղ թագաւոր աշտարակը շինելու վախտ իրեն մուժտէ, աւետիս, բերին թէ քիզի աղկէկ (սիրուն) տղայ մի էղաւ:

Թագաւորը ըսըց. — էսի լաւ է. մեք հոսի ճեմ իք (հաւաքուած) էղեր. խայիլլի (բարեբաղդութիւն) է, տղին անունը ճեմալ տի դնիք: Բերին ճեմալ գրին:

Թագաւորը ճեմալին պիթուն տղոց մինէ շատ կը սիրէր:

Անցաւ վախտ մի. ճեմալ մենծըցաւ. պապը իրեն քով պէյեց օ իր տեղը թագաւոր դնէ:

Բաղ ունիր ուրուշ տասներկու տղայ էալ, անուննին է Սինամ, Բելգ, Մազին, և Մազինի տղան Սընտամ, Լամբը, Բալ, Խալ, Շիմշիր, Ակուկ, Չինաքեար, Քեամ, էզիկ, Արզուն:

Մօքոսի որդին — Բաղ թագաւորի սարային մէջ Մենծ Մօքոս կարգուեցաւ, իրեն էղաւ տըղայ մի. տղան ծնելուն քիմի մէարը մեռաւ. քանի օր մնըց Մենծ Մօքոս էալ մեռաւ. թագաւորը էաս Մօքոսին շատ կը սիրէր. էնոր նոր ծնած տղին անունը Մօքոս դրաւ օ իր պապու անունը չկորսուի:

էաս վախտին Խալի կնիկ, Ղարակէօզ (սեւակն)

1 Տիէլ-ծնել (անարգական):

սուլթան պարկաւ, տղայ մի բերրց. տղան մեռաւ նը,  
սուլթանը ըսրց խալին.

— Մօքոս մէար չունի, ես տղայ չունիմ. վարձք  
է, կաթս ծիծս կը ցաւցնէ. Մօքոսը բեր ծիծցընիմ,  
մենծնայ, էնըք տղայ:

Մօքոս Սուլթանի կաթը ծծեց. մենծըցաւ, էղաւ  
տղայ.

Բաղի տղաք կը ճաղպուին. — Բաղ թագաւորի  
տղաք տեսան օ իրենց պապ ձեմալին շատ կը սիրէ,  
հերսոտան, էլան ճաղպուան, քցին հեռու տեղեր,  
էկան էաս թարաւի երկիրներ բնակուան, իրենց հա-  
մար քաղաքներ շինեցին, բնակուան հոնի քուլլին  
էղան մէկ մէկ թագաւոր:

Խալ էկաւ բնակուաւ Չարսանձագու<sup>1</sup> էրկիրը. Սի-  
նամ Խարբերդ կեցաւ, Բալ Բալու, Բելք Բերդակ, օր  
պիթուն պիթունէ ջրին քնարն է. Լամբք Լամբքայ  
քարէ քաղաքը. Շիմշիր Չիմիշկեղէկ. Չինաքեար, որ էփ-  
րատի վրան է, ֆեամ ֆեմախ. Էզիկ Էրզինկեան, Ար-  
զուն Էրզիւրում, Մազին՝ Մեզկերտ, որ քրդեր Մազ-  
կերտ կրսեն. Սնտամ Մազինի տղան Սնտամայ բեր-  
դըն. Ակուկ Ակն, որ ջրի վրան է:

1. Խարբերդ — Սինամ<sup>2</sup> թագաւոր իր մարդերով  
էկաւ բնակուաւ մի քարոտ տեղ, էաս տեղ մենծ քար  
էր. բերդ շինեց, քարի տակը քաղաքը շինեց, անունը  
դրաւ Սինամուտ, քարի գլուխն էալ բերդը շինեց:

Սինամ իրան սայմանը կըյրեց Արզնու մատենը,  
Հալէպ Մալաթիա, Աղձա տաղ, իրեք սայմանը էրկար  
էր, Բելք աղբօր սայմանը մտ էր, դէ ջրին քնարը,  
օ չորս սահաթ է:

1. Չարսանձագ կը նշանակէ չորս գաւառ, մեր Մինաս կը  
պատմէ թէ այս տեղ կար չորս թագաւոր Խողազաճ, Լամբք,  
Մեզկերտ և Բերդակ քաղաքներու մէջ:

2. Պինտ մենծերնին էր Սինամ թագաւոր, օ շատ խել-  
քով մարդ էր. «դուն էալ խելքով էղիր» կասէր Սաղճի Օվա-  
նէս Մինաս բարարին:

էլայ Սինամանու բերդին վրայ.  
Լէանութինը օվին (դաշտ) հայեա,<sup>1</sup>  
Եօթ սահաթ դէօր (տափարակ) է,  
Տասներկու սահաթ էրկանութինն է,  
Մէջ տեղը պաղ ու պողջա է.

Միջու մարդը շատ միամիտ է,  
Բերդին իրեք կողմ խոր ձորեր կայ.

Արևպատքին<sup>2</sup> ձորին գլուխը էր.

Իրեք հատ պաղ աղբիւր կը վազէր.

Արեւցաթին ձորին մէջ մի աղբիւր կայ.

Գլուխն էալ հինգ պաղ աղբիւր կայ.

Ըն(միւս) գլուխը կաթնաղբիւրն է,

կաթի պէր ջուրը կը վազէ.

Բերդի չորս դին օլրտայ

Մի էրկրթէ դուռ կայ

Հէմալ (միանգամ ևս) բերդի վրուն հաեա

Մաստարու<sup>3</sup> մենծ լեառը կերեայ,

Առջին դէօր էտին կօլճկայ ծովնէ.

Ծովուն մէջ Ս. Նշան վանքն է.

Քնարէն ճնճղումի պար կ'էրեայ,

Չուրը էլեր շեմիքը տահա չէ ծածկեր,<sup>4</sup>

Քելլըքով էագ տեղ ուխտ կերթն.

Ծովը օվսյու պէս մենծ դաղա էր.

1. Սուլթան Մուրատ Բաղդատի վերայ գնալու միջոցին  
բարձրացած է այս բերդի վերան, տեսած և զմայլած է այս  
դաշտի դիրքին, գեղեցկութեան և ընդարձակութեան վերայ,  
ասած է եղեր ըստ Մինասի. «հայ հայ, մի թագաւորի համար  
շատ շատ է, սակայն ինչ անեմ որ երկու թագաւորի համար  
քիչ է.»

2. Մինաս աշխարհի չորս կողմերն յայտնելու համար  
արևելքին ալ-յուր, արևմտեան ալ-յուր, հարաւին ճաշ-արեւ,  
հիւսիսին հուսի կամ Սնտամու դին կասէ:

3. Մաստարան մեծ լեռ մի է, որոյ մեծութիւնը ցոյց  
տալու համար թուրք առածը կասէ — «Մաստարան գօտիս այլք  
ոտիս.»

4. Զուրն երբ շատացաւ, կղզին ծածկեց, միայն վանքը  
մնաց, բնակիչներն փախան, այժմ միայն մի տուն մնացած  
է քաղաքն, որոյ Ծովեցիք կասուի:

Չուրն օ էլաւ, տեղը լեցաւ,  
 Գեղացիք փախան, օվան տարտղնան: 1  
 Մաստարու լեառան Չուրը կուգայ,  
 Էագ կողմիկայ ծովը կը թափի,  
 Մէկէտալ թարաւէն Իմէու Չուրը կուգայ  
 Մէկ սահաթէն Մուրատ գետը կը վազէ:  
 Սինամու քարէ բերդը բարս է,  
 Լեռտանը բարս ու ցած է,  
 Չորտանը լիք պաղ ու պաղչա է,  
 Մուրատին քնարը չորս սահաթ է:  
 Արևպատքը Աւանու աւեր քաղաքն է,  
 Հողը սև, քարը սև, տախտակի պէս թէթև,  
 Չէչ չէչ ծակ քար է շատ թէթև.  
 Ջրի երեսը դարմնի պէս կը մնայ թէթև:  
 Չուրը, բոլորի ամեն բանը սև.  
 Սև սև, արաբի պէս սև.  
 Ճնճուղը վարանաթաք սև.  
 Օձը ու մողոզիկն էալ սև.  
 Զիժին (ճպուռն) ու կարիճն էալ սև: 2

1. Խարբերդի դաշտի բերրութեան համար թուրք առածը կասէ: «Խարբերդու դաշտը, ոսկոյ հանքը» Երկու դաշտագետիներու կը բաժանուի այս դաշտը արևելեան և արևմտեան. արևելեանը Աւրի օվան է որև մեծը, որ տարածուած է քաղաքի առաջ, իսկ երկրորդը արևմտեանը փոքրն է որ Խուզ օվայ կասուի:

2. Սևան քաղաքն որ և Մուրութլի կասուի, քաղաքի ներքեն երկու ժամ երկայնութեամբ ներքնուղի շինուած է, կամարակապ, սորա հիւսիսային ծայրն Հարսեկ գիւղն է, որը Բերդակի կը հայի, միւս ծայրն Քորիէ գիւղն, որ 700 տուն հայ բնակիչ ունի: Ըստ աւանդութեան Սևանու քաղաքը կը բնակէր Սինամ թագաւորի որդին, այս ներքնուղիով կանցնէր. ուստի և դուրս մի ժամու չափ գալով խիստ նեղ և անձուկ ճանապարհով կիջնէր մեծ անտառն յորսի, յորմէ լողալով կանցնէր Եփրատն, այլ ներքնուղիով, կը բարձրանար հանդէպն գտնուած բերդն, ուր իւր սիրաջար հարսն կը տեսնէր և կը դառնար նոյն ներքնուղիներով հարսի համար գնալուն է որ գիւղն ևս Հարսեկ կասուի: Արդ ներքնուղւոյն մտնելու ծակն Եփրատի եզրին վերայ կերևեայ, Զինաքեար իւր մեծ պատերազմին այս ծակը գոցած է, որ երթևեկութիւն չլինի:

Քարէ բերդի առաջ մենծ Աւրի Օվան կայ.  
 Մատենի թարաւը օլրուայ,  
 Հայեա Խուզ 1 Օվան կերևայ,  
 Գետը միջուն վազէ կուգայ:  
 Բոլորը չայիր չիմէն տեսայ.  
 Գեղերն էալ իրարու վրայ.  
 Հեմէալ հայեա դէպի Խոզ, 2  
 Տեսայ կանաչ կակարչ կող:  
 Ղարէ՛՛Ֆիլ, զէնճէ՛՛Ֆիլ, մազտանոս,  
 Ի՞նչ ըսիս հոն չկայ,  
 Հովը կը փչէ անուշ անուշ:  
 Քալամին մէկը մի լիւր կըլլի,  
 Զմեւը ձիւնի տակ կը պահուի:  
 Տեսայ Մաստարու թարաւը շատ հողեր  
 Սաղ արտերը արևը օ զինէր,  
 Աստուածածնին բանբալը խճճեն օ բացուէր.  
 Կըսիս ճերմակ կտաւ է խարսըմուն 3  
 Ըսկայ դէ լեարը շտկըմուն:  
 Պուզլուղին թարաւը դէ Մուրատին քնարը՝  
 Լեառ ու լէանը էգի ու պաղչա է.  
 Չուրն օ կանցնիս լեառ ու լէանը մէշէ է,  
 Լեարան հետ է Իմէու Չուրը,  
 Միջու աղբիւրը գոմէշ կը տանէ,  
 Էրկու Փարչանչ մի Էրդմնեկ, 4  
 Հապուսին կը վարէ Օվային կէսը:

1. Խուզ Օվայի լեռան վերայ Ս. Յովհաննէս ուխտատեղին կայ, ուր ուխտի օրն երկու այժեամ կը գահան, կը զոհուին:

2. Վերին և ներքին Խոզ գիւղերն հանդէպ քաղաքի, ուստի 7 ժամ ի հարսու, Մաստարու լեռան կուրսը, մատին վրայ:

3. Կտաւն շարունակ ջրելով արեգակի առաջ փռել, որով կսպիտականայ:

4. Փարչանչցիք ու Երդմնեկցիք միշտ ջրի վերայ կը կուռէին, Փարչանչցիք մի Երդմնեկցի սպանեցին, Երդմնեկցու գլուխն մի ժամ գետնի վերայ պլտըրաւ ու կասէր—«Երկու փարչանչ, մի երդմնեկ», ասել կուզէր ջրի մէկ մասն իրենց գիւղն հանի. միւս մասը երկու Երդմնեկ գիւղացոց:

Պուզլուխ,

Ուստայ Յայրօ մի կար էլէմէլիբցի,<sup>1</sup>  
 էլաւ գընըց ֆեքենէկ.  
 Փեքենէկու գէ Պուզլուխը,  
 Քարը փորեց քառսուն արշուն  
 Պասամախ էալ շինեց քառսուն.  
 — Էաս էալ իմ յիշատակը մնայ, ըսըց:  
 Զուրը գէ վերէն կը վազէր,  
 Տակը իջնէր սառոց կը կապէր,<sup>2</sup>  
 Ըդոր քով անջուր ճանքսյ կար,  
 Ծարաւ ճանքորդի համար ջուր տի հանէր:

1. Էլէմէլիբ գիւղ մի է Պուզլուխէն 7 ժամ յարեւելս, Պուզլուխը շինող Ս. Յայրօն, որ և Ուստայ Յայրօն կասուի, այս գիւղացի էր, այս գիւղն ևս ուխտի կը գան:

2. Այս բնական սառցատունը շատ օգտակար եղած է ժողովրդեան, որ ամառ միջոցին քաղաք տանելով կը վաճառեն, կօզտուին. Օսմանեան ներկայ թագաւորը՝ կասէ Մինաս, սորա վերայ տուրք դրաւ. Աստուծոյ հրամանով ջուրն այլ ևս չսառեցաւ քանի տարի. թագաւորը զգաց իւր սխալն տուրքն բարձաւ, և գարձեալ սխաւ սառիլ, Թուրքերն ևս ուխտի կգան այս տեղ. Աստի մընչև Եփրատի եզրն 5 ժամ է և շատ զառիվայր. ձորերու մէջ, ճանապարհներու վերան պարտէզներ ու այգիներ կան. այս ձորը որ Քեփենէկու ձոր կասուի, ջրիվայր գնացողն ստիպեալ է միշտ ջրի այս ու այն եզրն անցնիլ ջուրն ոչոր մոլոր գնալու պատճառաւ. Այս ձորի ետէն կայ նաև մի այլ ձորակ, որոյ ի Մուրատ խառնուրդի վայրն կայ Ատատինայ Իսկելէն (Ջրեզրն կայանք), ուստի որ անցար Սև լեռն կսկսիս բարձրանալ. այս լեռնէն ամբողջ Խարբերդի վիճակին գերան, տախտակ և վառելու փայտ կը մատակարարուի, ուր ևս կայ բնտիր իշխուն բոյսն, որ ըստ Մինասի, « Առեկու բոլորն էաք լեռտանը մէշէնուն մէջը իշխուն շատ կայ, կուգան ժողուին, կը տանեն ծախեն, շատ լաւ է, 6 ի՞նչ կըսիս, էանանկ թըթուրջալ է, համ ու հոտուն չես կշտընար, հա կեր, կերակուրի մէջ ձգէ, շատ սաղլամ է (առողջարար), օգէն է օ էանանկ շատ համ ունի»:

Սև լեռն և Սր. Յայրօն հանդէպ միմեանց են, որոց միջավայրէն կանցնի Եփրատ. Սև լեռան առաջ Առեկու աւերակ քաղաքը կայ, ետէն ևս Զոչեկու բերդն, Առեկէն մինչև Պուզլուխը 1/2 ժամ է մօտաւորապես:

Տկուն լաղմ զարկեց ու գնըց,  
 Զուրը ճանփու վրան հանեց.  
 Պաղած ջուրը պողի պուզ կըլլի,  
 Մնացածը սիւզմիշ կըլլի:  
 Անցաւ օրթըլխի քարը, — հոս էալ հանիմ, ըսըց.  
 Փորեց դէ, գօտի մի, հոնի մեռաւ մնըց,  
 Միջուն չհանեցին, գերեզման էրին.  
 Վրան հող լեցոցին՝ քար էալ գրին:  
 Ուխտ կերթն Ս. Յայրօն էրին,  
 Շաբաթ օրեր կերթն ուխտ կինեն,  
 Կիրակի օրեր պուզ կառնին, կը դառնան:<sup>1</sup>

2. Բելը. — Բելք. թագաւոր Բերդըկու հիմը ձգեց Եփրատի քով, սսյման կըյրեց Մերձրմեք, Փիլիվանք, Զուխէք, Յազման, Թիւրուշմեք, օ Մուզուրայ ջրի վրան է. Ծառգովիկ օ մէշէ է ջրի քով, ծառները մուսի պէս էլեր է գէ էրկինքը:

Բերդըկու բերդը Խարբերդու բերդինմինէ բարս է, հողէ սարի վրան շինած է. բերդի գլխուն արևպատք քար նետես, կը հասնի Խարնճա կամուրճին. օ էրկու աչք ունի, օրթըլխի քէմերին օտքը մենձ քարի վրան է. ըս քարի բոլորը ջուր է, ամառը կը ցամքի. մըջմնին բնը ըս քարի մէջն է. ջուրն օ պակսի կը բանին (կերթեկեն):

Բերդի տակը, ճաշուայ ու արևպատքի զին սալմուն է գէ ջրին քնարը, օ կէսը եամած է (քիչ զառիվայր), կեսը գէօր, գէօր տեղը ջրին քնարը համամն (բաղանիք) է, համամին վէարդին լաղըմին ծախէ, հասկայ ջուր կը տանէին բերդը:

Հիմա բերդը քակուած է. ուրբաթ օրեր ըս տեղ կուգան ժողովուրդը, առուտուր կինեն ու կը դառնան: Քաղաքը բերդի արևցթին քովն է:

3. Մազկերտ — Մեծկերտ. — Մազին թագաւորը էկաւ Մեզկերտը շինեց. էսոր էրկու թարաւը բարս

1. «Աչըն Օփանէս 15 տարուայ տղի ձէան ունէր. Սուրբ Յայրօնի վրայ վերի երգը կըսէր». կասէ Մինաս:

լեռներ կան. բարս հողէ սար կայ, գլխը բերդն է, մէկ ղուրշունի մենզիլ բարս է, քաղաքն էալ արեցթու գին տակը շինած է. արեցթու գինն Կէօկէռեկայ լեռուն է:

Մագին շատ հարուստ թագաւոր էրէր է, քաղաքը շինեց, աւելցած փարան լեցոց պղնձի մէջ, հորեց բերդի արեցթու գինն էրած մատուռին մէջ: <sup>1</sup>

Մնտամու քարի ու Կէօկէռեկայ օրթալախը Ս. Գանիէլի գերեզմանը կայ. քաղքին տակ շատ մատուռ կայ, բոլորն էալ իրարու մօտիկ պղտիկ բլուրներու վրայ սև կակուղ քարէ շինած:

Քաղաքը հաշուէ դուս շատ մեծ է էրած:

Հայաստան օ Հայաստան էրաւ շատ ըխտաւորներ կուգային էաս սրբի տեղ. Թաթոս առաքեալ շինեց է. Ժամկոչ դրած է վանքի վրայ—«Տարին ուխտի շատ մարդ կուգային, էտք տի ունենային քառսուն խաթար (ամէկ խաթար քառսունական հատ) խըռ ջորի, քառսուն էալ սև, քառսուն էալ կարմիր, քառսուն էալ գեղին գէվէ տոնի (ուղտի ասրի գոյն):»

4. ՂԱՄՔՔ.— Ղամբք թագաւորն էալ մի տեղ գտաւ իրեն համար. ըս տեղուն էրկու թարաւը ու տակը ձոր է. մէջ տեղ բարս մեծ քար է. քարին վրու էրեսը մորի (անտառ) է. ըգ տեղաց ջաղջի մի ջուր կերթայ ճաշուաղին, էտու ջուրը կերթայ արեւպատք Մուրատին կը խառնուի:»

էտին ձորու գին մենծ դուռ մի կայ քարի մէջ փորած, մէկէալ գին 107 դուռ կայ: Քաղաքը ու չարշին քարի մէջն է փորած, գրովրնին ու տրվնին արեցաթը կը հայի՝ գրովրնուն առջի գին քարէ հանած քեմէր կայ, ներսի գին քարի միջուն փորած (կոփած) է իրեք հարիր քառսուն օղայ, ամէկ օղան իրեք արշուն էրկէան, իրեք արշուն լէան. գրովրնուն վրայ կը փինչերէ կայ, լոս տալու համար. տրվնին ու

1. 1886 թուին Խարբերգցի թուրք մի իրը երազ տեսած՝ գանձի տեղն իմացած է, և հանած տարած է:

քաղաքը քարի միջուն մէջէ մէջ փորած է: Կրսէն իրեք թարաւը բարս է. Մնտամու գին (ի հիւսիս) գէօր է. վրուն ճանփայ ջկայ, քարի մէջ էրած քաղքի միջուն ճանփայ կելլայ վրան: էաս է Օրդուն ղափուսին, օ «կիսէն կելմէգ» էալ կրսեն (գացողն ջլերադառնար): էաս ճանփուն վրան մորին բարսնալու տեղը Ղամբք թագաւոր շինած է սարայ մի, էաս ճանփով համար ու ավի կերթը:

Մէշէլիկը պիթուն քաղքի վրու էրեսը բռնած էր, քաղքին մէջ էրկու տեղ ջրի հափուղ կայ, քարէ փորած աղկէկ տեղեր կան: Ճանփաները շիտակ փորած է:

Չորկայ ձորի ջուրն քաղքի կուշան կը լեցուի Ֆիրինայ ջրի մէջ, օր քիչ մի ճաշուաղին կերթայ, կը դառնայ արեւպատք, կոլրտի Մուրատին կը խառնուի:

Ղամբքայ սայմանն է Պաղին, ըստեղ ղուտրէթ համամին (բնական բաղանիս, որ ջերմուկն է) կայ, օ Օրդուն ղափուսիէն կերթն. մի սայմանն Ղուան, Շոռտան, Գրդին, Խոզնգեղ, Տէրօվան, <sup>1</sup> Ղզըլքիլիսէ, Քիւրեքէն և լն:

5. ԲԱՒ.— Բալ թագաւոր Բալու քաղաքին հիմը ձգեց Մուրատ ջրի վրան, քաղաքը էաս թարաւն էր, էգի տեղ ջկար. գետի վրան կամուրջ շինեց, քաղաքացիք անցան էան թարաւը էգի տնկեցին: Սայմանին մէկը կերթայ Բինկէօլ կը հասնի, արեցաթը, մէկն էալ կերթայ Մուշ, Կեղի (Քղի), Իզօլ, արեւպատքին թարաւը սայմանին իրեք չորս սահաթ կը մնայ, ջրերու խափուշ է (Մուրատի և Մուղուրայ միացման վայր) ընկից գէն Չարսանճագ կըսեն:

1. Տէր Օվան և Բասունայ Օվան առանձին երկու գաշտեր են, ունին բազմաթիւ հայ գեղօրայք. «Տէր Օվան» Սայմանի մէջ կան շատ գեղեր՝ քուլլին էալ հայ են, Պասուն Իլանլուն, Բաղնիք, Խուշին, Մրգէն, Վուլխսոցթիլ, Հայվացիք, Չորակ, Խայաչին, Արձ, Շոյմի, Ղզըլխալա, Շիլք, Չանդալ:

6. Խոզաղամբ. — Խալ կամ Խալիս թագաւորը օլըրտաւ էկաւ աղբրի մի վրայ. տեսաւ ճաշուայ շոքուն ինչ օ խոզ կայ, պաղ ջուրը խմած ու պարկած է. խոզեր օ իրան տեսան, էլան փախան մէշէն (անտառն որ սյժմեան խոզաղամբի եզրն է). թագաւորը ըստեղաց հաւնաւ քաղաք շինեց, անունը դրաւ Խոզաղամբ: Լոս աղբրի սրթը բարս է, ըստեղաց օ հայիս, Սև լեառան գլխու վրուն Պուզուխը կերեայ, արեցաթը մի աւուր հեռուն բալուն էալ կերեայ, դէ հեռուն հինգ աւուր ճանփայ կեղուայ Սուբ Լոսայ լեառը կերեայ արեցաթը. օ Մասրսայ պէս լեառ մի է: Քաղքին տեղ շատ բարս է, արեպատքը իրեք աւուր հեռուն դէ Ծառգօսփիկ կերեայ:

Մօքոս Խալի համար խոզաղամբ շինելէն ետքը Խալաճուզն էալ շինեց, օ իրեք սահաթ խոզաղամբէն արեպատք կրնկնի. էաս քաղքին մէջ մի սիրուն սարայ ու բերդ էալ շինեց:

Խոզաղամբի բերդի իրեք թարաւը շատ բարս 340 ահան արշուն է, մէկ թարաւը անձախ (հազիւ) 30—40 արշուն ըլլի, մինակ էն թարաւէն բերդի վրան կեւլըն: էաս բերդը հողէ է, վրան էրկանութիւնը լէանութիւնը 250 ահան արշուն կըլլի, կուսերու (կուրծք) վրայ արա կայ, բերդի վրու խաթը քակուած է, տակը մուկի ծակերու պէս ծակ կայ, ըս ծակերէն քար օ ձգեցիր, կէս սահաթ կը զնկրտայ, ինչպէս խապուն էրած տեղը կը ձէնոտի (արձագանգ կտայ): Քիւթուկը (թագաւորական տօմար) գրմուն է, հին ժամանակին էաս քաղքին անունը Խսկենտէր էր, կասէ Մինաս:

7. Շիմշիր — Շիմշիր Մուրատին քնարէն իրեք սահաթ հեռուն ձորուն մէջ քաղաքի մի հիմը ձգեց:

Հոսկայ ջուր մի կանցնի Մուրատին կը խառնուի, օ սև ջրին պարա է:

Քաղաքին ներքևն ու ջրի քօվը շինեց պարտէզներ, պարտէզներու տակն էալ կարմունջ կապեց, ըս կարմունջի էրկէանութիւնը քառսուն արշուն է, քաղ-

քին վերի քնարը վերի կարմունջը շինեց, քեմերին օրթլխի էրկու թարաւը քարէ հանած էրկու ձմերուկ կայ շինած:

Շիմշիրի սայմանն է Արաբկեր, Մատէն, Խտրոս, Չափղուռան, Սարաճուխ, Օվաճուխ, Շնկախ, Կարմրէ, Թութըռապատ, դէ կը հասնի Խօստայու լեառը:

8. Ակուկ — Ակին ձորին գլխին բռնած էր Ակուկ, իրան սայման չունէր: Զինաքեարէն սայման ուզեց, էան չտուեց, ինքն վախկոտ էր ձէան չհանեց:

Ակուկի ֆանփուկ Սուլթանը շատ կըյրիճ էր. ըսը — Զինաքեարի սայմանին կէսը ինձի կը հասնի, կուզիմ քի կուզիմ:

Վզէին աղբրին ընդին մի նեղ տեղ էրկըթէ դուռ շինեց, օ հիմայ Դէմուր դափու կըսին, արեցթուն դին կը հայի. ճանփայ չկար, քարը ծակեց, ըս տեղուն կեւլը բերդը: Միջուն Մուրատ գետը կանցնէր:

Չորս դին քարէ լեառ է:

Փանփուկ կուի ըրըց, իրան սայման<sup>1</sup> կըյրեց. Կաշոյ, Մշական,<sup>2</sup> Փետրխան, Կէճէկուն, Մարայլու, Ագրակ,<sup>3</sup> Լիճքը, Փարղաշտաշ,<sup>4</sup> Շրջուն, Սանգուխ, Բակեր,<sup>5</sup> Ապուչախ, Վզէ, Էփրատ, Նարվել, Սօսիկ ևլն:

9. Զինաւոր կամ Զինաքեար. — Զինաւոր թագաւոր Տիվրիկու սայմանին մէջ մի քաղաք շինեց, անունը դրեց Զիմս, որ սյթմ Զմարայ կասուի. քաղաքի

1. Շատ անգամ — ձայնաւորէն վերջ յաջորդող հ տառն, փոխուած:

2. Յունագաւան հայեր են այս գիւղացիք:

3. Շիմշիրի սահմանի վերան, ուստի մի ժամ հեռի է Խօստայու լեառն:

4. Ակնայ բերդն Սանգուխայ ջրի այն կողմն, Չորկայ ու Շրջունայ գլխին է:

5. Այս գիւղացիք Թուրք են, և բոլորն էլ ջորեպան:

քարձր վայրն իւր ապարանքը շինեց, որոյ մի ժամ յարեւելս խոր ձորի մի մէջ ևս մի այլ քաղաք, որոյ անուն կոչեց Ջինաքեար, ուր այժմ կարմիր գլուխ կոչուած Ղլլպաշներն կը բնակեն. այս տեղ ևս ունէր թագաւոր մի պալատ, ուր է նաև Ջինաքեարի գերեզմանն<sup>1</sup> որ մեծ տարածութիւն մի բռնած է. Ղլլպաշներն յարգանք կը մատուցանեն:

Ձիմա բերդի քարերն խիստ մեծ են, որ տաս տաս կանգուն երկարութիւն և հինգ հինգ կանգուն լայնութիւն ունին, <sup>2</sup> «քարերու զըլիններն (եզր) արդա արդա (ատամնաձև) է հանած՝ իրար մէջ անցած. քարը սև է, 15 արշուն բարս. մի եայեան (հետիտն) ճանփայ կելլայ վրան, որ Մուրատէն էրկու սահաթ հեռուն, բարս լեռան գլոխ շինած է:

«Ջինաքեարի սայմանն է՝ Սըվազ (Սերաստիա), Թոխաթ (Եւզոկիա), Տիվրիկ, Սուրբ Թորոս օ Խօստա-յու<sup>4</sup> լեռան վրան է, Ղուրի չայ, ճարճանոս:

10. Գեամ — Գեամ թագաւոր օլրտաւ էկաւ իսկ Ակին ջրին վրայ իրեն համար քաղաք շինեց, անունը դրաւ Գեամ. օր հիմի Գեմախն է:

«Քաղքին մի թարաւը գետը շատ խորուն կերթայ, քաղքին մէջ տեղն է քարէ բերդը. խանութները բերդի տակն է, կարմունջը քաղքի գլոխն է, կարմունջի ըսգին, ընդին պէքճիներու (պահապան) համար տեղ կար, քաղքին տակ դէօր<sup>4</sup> տեղ մի պաղչա է, կարմունջը կընցնենք էն մէկէլ չայի վրան էրկու ջա-

1. Կարմիր գլուխներն կասենթէ՝ Ջինաքեարի մեծ պատերազմին սպանուածներուն դիակներն այս վայրը ամփոփուած է, ուր նաև քանի թագաւորներու գերեզմաններ կան:

2. Մինաս՝ որ գաւառի մէջ որ երկար մնացած է, նոցա վերայ ճիշդ տեղեկութիւն կտայ, կարծես մի հետախոյզ պատմաբան:

3. Այս վայրն թագաւորներ խոստացան Ջինաքեարի տալ, որոյ համար Խոստայ ասուած է:

4. Դէօր միավանկ է, է և օ միանգամէն հընչելու է:

ղացք կայ, էադ ջաղցներու ջուրը Գեմախու դուզլայէն (աղահանքէն) կուգայ, Քէօմիւր Սուլի (ածխաջուր) կասուի: Գարունը մարդ չկրնր անցնիր, կարմունջի վերդին Ակնայ ջրին<sup>1</sup> կը խառնուի: Լու թեթև (միջակ) չայ է: Տուզլային տեղը սպիտակ է, հարիբ հատ մէարգ (աւազան) ունի, աղբիրը կը վագէ:

Գեմախու սայմանն Աղսուլա ջրէն կը բռնէ կելլայ Հողիտ, Այվալու, մի ճոթը Օվաճուխ կը հասնի, ընկայ կերթայ Ղուլօ, Ավազ, կը հասնի թա Մամախաթուն, Մեղիքէն, օ Խալանդարի տեղն է. Մըրճան սօղազի:

11. Ազիկ - Էզիկ թագաւորը երիզայի հիմը ձգեց Եփրատի մօտ:

Էրզնկեանի մի սայմանը կերթայ Համայու աղքանը կը հասնի. օր արեւպատքին թարաւն է, Բայպուրգ, կօլլուի Մամախաթունայ կուգայ Դերճան. ճաշուադին Գեմախու դուզլան:

12. Արզուն. — Արզուն թագաւոր ևս էրզրումի հիմը ձգեց, որը կարին ևս կասուի:

13. Մնտամ. — Մադին թագաւորի Մնտամ որդին, իւր հօրմէ բաժանուեցաւ, գնաց Մնտամու քարին վրայ բարձր բերդը շինեց, այս բերդն տափարակի մի միջավայրն բարձրացած սարի մի գագաթն է. այս սարն քարէ կազմուած է բոլորովին, որ այժմ ևս «Մնտամու Սև քարը» կասեն. քարը սև լինելուն: Այս ժայռի գագաթն աղբիւր մի կայ, որոյ «Քոս աղբիր» կասեն, ուր բորոտներն երբ լողացնեն, կառողջանան:

Թագաւորաց ընսակութեան վայրերն.

Ակին ջրին վրայ (Եփրատ) չորս աղբէրը բնակուան, Արզուն օ պինդ գլոխնէ, ընկայ վէար (5 օր)

1 Ակնայ ջուր կասուի Եփրատի այն ճիւղն, որ Կարնոյ հիւսիսէն կը բղնի:

էզիկ, օ չային քնարնէ, ընկայ վէար էրիու աւուր խոնախ ֆեամնէ. ջուրը քաղքին հետուն (քերուելով) կանցնի. մի զընար տեղ է, սկայ էրիու աւուր վէար էալ Չինաքեար, օ ջրին մի սահաթ հեռու է. ընկայ մի աւուր ընդին Ակնէ, օ պիթուն պիթունէ ջրին քնարնէ, քար օ նետես կը հասնի գետը:

Մուրատի ջրի վրայ բնակուան Բալ Բալ օ Մուշէն գնացող ջրի հետնէ շինած Բալու քաղաքը, ընկայ վէար Առեկ, օ Բալուայ 1 1/2 օր է, Բերդակ օ շինած է Բելք, սկայ մի սահաթ հեռու Մուք Տիկին է, Մուրատի ջրէն չորս սահաթ հեռուն է Սինամ, օ Խարբերդ քաղաքը շինած է:

Մուղուրայ ջրի վրայ Մաղին շինեց Մեզկերտ. Լամբք օ շինած է Լամբայ քարէ քաղաքը Փիրինայ ջրի մօտ. Խալ օ շինած է Խոզաղաճը Մուրայ ու Փիրինայ ջրի օրթալախը:

Շիմշիր օ շինած է Չիմիշկեղէկ քաղաքը Ակին ջրին ու Մուրատի խափուշէն (ջրերու միացման վայր) դիմաց՝ իրեք սահաթ բարս:

Մուղուրայ ու Փիրինայ ջուրն օ կը խառնուի իրուր ընկայ Չոչեկու բերդը 1 1/2 սահաթ, Չոչեկու բերդէն 1 սահաթուն էալ Մուրատ. օ հոն է Աւտօնին գեղը Սև լեռան տակ:



1568.

Բ.

Բերդակու բերդը.

ալի սայմանի քովնէր Բելք Թագաւոր, իրա քառսուն մարդերով երբ գնաց սայման կըյրելու, տեսաւ դէ Մառգովիկայ Խալ աղբօրը բերդը, օ մէրմէր քարի պէս քընց գած պիտակ (սպիտակ) աղկէկ. զարմանք մնրց, ըսրց.

— Ա՛նվ է շիներ էաս բերդը.

- Մօքոսն է շիներ, ըսրց Խալ Թագաւոր.
- Մօքոսի պապը Բաղդըտու պէս քաղաքնէ շիներ, հարկ է իրա պապու փեշենկը տի անէ:
- Բելք Խալ իրարու հետ շատ սիր ունին, նստէին, կանէին, իրարու հետ խօսութին կինէին, ուզեց օ Մօքոսը իրեն ճանիէ.
- Խալ տուեց, Բելք առաւ գնրց, ըսրց Մօքոսին.
- Մօքոս էանանկ բերդ մի տի շինիս օ քընց մենծ աղբօրս բերդը գահա աղկէկ ըլի: Երկու օր մնրց, գնրց մենծ աղբօր քով ստկի, հոնի մնրց մի ամիս: Մօքոս Բերդակու հիմը ձգեց, եօթ տարուան միջուն բաշըրըց, Թագաւորի համար էալ մի սարայ շինեց

Շուշայ Մուլթան. — Բելքի Թագուհին էր Չինաս-

տանի թագաւորի աղջիկը Շուշայ Սուլթան, Շուշայ սուլթան մէկ օր ըսրց Մօքոսին:

— Մօքոս, շատ աղկէկ շիներ էս բերդը, մի տեղ էալ չգտնուիր: ամա օ էջնաք վար, ծառ չկայ, բան չկայ, արևը տի նստիք:

Մօքոս բերըց ծառներ ծաղկըներ տընկեց, պաղչա շինեց, Շուշայ տեսաւ խաս պաղչան, ըսրց:

— Մի բան պակաս է, էաս ծաղկընուն մէջ բաղնիք մի պէտք է:

Մօքոս չափ ու ձև ըրրց: Հաշիւ ըրրց օ հազար քառսուն դէվի (ուղտ) բեռ չինի պէտք է:

Շուշայ Սուլթան թուղթ գրեց պապուն, պապը կարմիր կապտո, սև ձերմակ, դեղին չինի դրկեց, Մօքոս սիրուն բաղնիք մի շինեց: <sup>1</sup> պաղնիքի տակ կամուրջը շինեց:

Մօքոս անմահական ջուրը կը գտնէ:— Լսեց Սինամ թագաւոր օ Մօքոս Բելզի համար շատ լաւ լաւ շէնքեր է շինած, օ մի աշխարհք չի գտնուիր, կանչեց Բելզ թագաւորին, հարց ու փորց ըրրց, մի ժամանակ քովը պահեց, իրուր վրուն շատ սիր ունէին: Ըս վախտին օ Բելզ աղբօր քովներ: Շուշայ Սուլթան Մօքոսի հետ կօլրտիր, ինչի օ Մօքոսի վրայ սիր ունէր, մէկ օր առաւ Մօքոսը, էլան քաղաքէն օ մէկ սահաթուայ տեղ, դադրեցան, մէ աղկէկ տեղ նստան: Սուլթան ըսրց:

— Տղայ, քու անունը ի՞նչ է:

— Սուլթան ապրած մեր, ըսրց Մօքոս: Իդա զգըր տարի ձեր մօտնիմ, դահա անունս նոր կհարցնես:

— Ես ի՞նչ գիտեմ, վարպետ կըսիք, իսկի անունդ ինչ տի իմաց ըլլիմ:

— Էան բերդը վե՛վ է շիներ, վե՛վ է վարպետունուն գլոխը:

— Է՛, դուն էիր, անուն չունիս:

<sup>1</sup> Այժմ ևս կան շարուած գեղեցիկ յախճապակիք, որք շատ կարծր են, տեղացիք մանր մանր կը կոտորեն, մատանի ալ կը շինեն:

— Ինձիս ուստայ (վարպետ) Մօքոս կըսին:

— Ուստայ Մօքոս, ես շատ ծարաւ իմ ըսրց:

— Դուն հօսի նստիր: Ըս խոտերն օր հօսի էղած ին: հելպէթ ջուր էալ կըլլի:

Սուլթանը հոտի նստաւ, Մօքոս օլըրտաւ, հաեաւ օ ջայիրին գլոխը հողէ լեառան տակ մի ծակ կայ, ջուրը խըլխըլալէն կերթայ: մի ջուր հանց բերըց տուեց Սուլթանին: Սուլթանը օ խմեց շատ հաւնաւ, ըսրց:

— Էօֆ, Մօքոս, էաս ջուրը անմահական է, ապուհայեաթ է: գին չունի, թագաւորը ը՛նդուր էաս աղկէկ տեղը թողեց, գնըց չոր քարի վրայ քաղաք շինեց: Վարմինս տկար հօգիս ծայր էր, ջուր խմեցի շատ ֆէրայիմ: Էլան գցին ջրին վրայ, Սուլթանը տեսաւ ջուրը խուշուրտալէն կուգայ:— Մօքոս, ըսրց, առտուն քառսուն մարդ կառնես օ հոս փորես, մի աղկէկ տեղ շինես:

Մօքոս Ս. Տիկին կը շինէ:— Ետ դարձան տուն, թագուհին աղբրի վրան կը մտածէր, օ իրա համար սէյրանի տեղ շինէր, թագաւորն էալ մի ամիս մնըց աղբօրը քով թագուհին հայեաւ օ չգար թագաւորը: Մօքոսին ըսրց:

— Մօքոս, թագաւորդ չէկաւ, արի էան ջուրը հանէ: թագաւորդ էկաւ, տեսաւ շատ կուրախանայ:

Մօքոս քառսուն վարպետ թովեց, շուտով մի շինեց ջրի վրայ խապուն շէնք մի, վրան էալ ամառանոց մի, որ էազ տեղ կիւրակէ օրեր գալսով ուրախանային թագաւորն ու թագուհին:

Հոն լաւ քարեր շատ կային, Մօքոս շինած կամարին գլոխն մի մենծ օդա շինեց, մի պուճուր օդա էալ իրա համար շինեց, որ էան տեղ թէյնա տեղ էր: հոն մնալով Աստուծոյ աղօթք ինէ:

Մօքոս Աստուած կճանչնար գիտէր օր էրկնուց, գետնուց տեղձող կայ, էնոք կուռք կը պաշտէին:

Շատ ու քիչ վախտ անցաւ: Բելզ թագաւոր Սի-

նամ թագաւորի քովուն էկաւ իրա սարայը, նստաւ ջուր ուզեց:

Մօքոս օսկի թասով հանած ջուրէն տուեց թագաւորին, թագաւորին հոգին թող էր, ջուրը օ խմեց կրսիս տահա մօրը մինէ նոր էղաւ:

— Ըս ամեն աւուր ջուրը չէ, Մօքոս, ըսրց թագաւոր:

— Մօքոս շատ աղկէկ աղբիւր մի գտեր, շիներ է, ըսրց Սուլթան, թագաւորը հանեց 3 ստակ<sup>1</sup> տուեց Մօքոսին պախշիշ (նուէր):

— Մօքոս, հազր էղի օր էրթք էան աղբիւր:

Աւտուն թագաւորը, սուլթանը և Մօքոսը էլան գըցին աղբիւրի վրան, մասն շինուած մատուռը, տեսան աղբիւրն, օ խորանի տրկուն կելլը՝ խլխլալէն կերթըր:

Թագաւորը ըստեղաց հաւնաւ, ըսրց.  
— Մօքոս, շատ շնորհակալ իմ, ի՛նչպէս էաս ջուրը գտար:

— Թագաւոր ապրած, սուլթանի հետ օլրտանք. ինձիս ջրի զրկեց, ես օլրտայ, գտայ, բերի, Սուլթան օ խմեց սաղցաւ, ինձիս ըսրց—էաս աղբիւրն բոլորը թեմել կինիս. կը պատես, մեր ջուրը սգա կը բերես, օ խմիք<sup>2</sup>

Թագաւորը ձեռքը նետեց քեսէն, տաս ստակ տուեց Մօքոսին, Մօքոս օ դրեց ձեպը, շատ ուրախացաւ, էաս տեղուն դարձան բերդը, էան իրիկունը թագաւորնը ու սուլթանը իրարու հետ գրուցեցին:

— Մեր Աստուածը<sup>3</sup> տանըք էադ աղբիւրի վրան, լաւ կըլլի մեր էան տեղ, իմէ ա՛մ մահական ջուրը:

Մէկէալ օր էլան, հայով հոլով (մեծ գըրդիւնով) առին գցին, գրին մատուռին մէջ, էրկըթէ դուռը գրին, բաշխըր տուին Մօքոսին ու գարձան տուն:

1 Ստակը մի փարայի երրորդ մասն է.

2 Այդ ժամանակներու անցքերն ու պատմութիւնը Մօքոս գրած և Ս. Տիկին պահած էր, կասէ Մինաս աղբար:

3 Արցրէ ցուլուած այս կուռքն թուրքեր ցուլիչին տուած են և տեղը աշտանակներ շինել տուած՝ կասէ պատմոյս:

կիրակի օրեր կուգային, աղօթք կինէին, Մօքոս էալ Աստուծոյ աղօթք կինէր.

Անցաւ մի տարի, էան լմանը կերթն, կը դառնան, Մօքոս էալ օրը էրկու ֆասըլ ջուր կը բերէր:

Բեւը աղբօրը քովուն չէր կըյրեր, իմաց տուեց խալին օ Մօքոս ըսանկ ըսանկ աղկէկ տեղ մի է շիներ, Բեւը ու խալ էկան տեսան, երկսով էլան գցին Շիմշիրի քաղաքը իրեք աղբրտանքը իրուր համբուրեցին.

Մօքոս կոոց իրկըպագութիւն չանէր:

Մօքոս մնրց կինէ Շուշայ սուլթանի քով:

— Մօքոս, ըսրց սուլթանը, արի, էրթանք մեր Աստուածը տեսնելու:

Գըցին, Մօքոս դուռը բացաւ, սուլթան համբուրեց կուռքը, Մօքոս չը համբուրեց:

— Մօքոս ըսրց, ես հէջ տեսած չեմ՝ օ դուն մեր Աստուածը պաշտես, պատճառը ի՛նչ է:

— Սուլթան ապրած, էաս ջուրը վե՛վ է հաներ:

— Մեր Աստուածն է հաներ, օ էկանք գտանք:

— Չէ, չէ, եանլիշիս (կսիալուիս) Աստուած չէ:

Սուլթանը էաս օ լսեց, շատ հերստտաւ, գլխը պատ է պատ գարկեց, ընկեր գետնի վրայ նստեր, հերսէն կուլայ:

Մօքոս սուլթանի թեւէն բռնեց, ըսրց:

— Էկըց դուս օ քիզի ըսիմ: Տարաւ դուս, ըսրց.

— Հայիր էրկինք, էրկիր, հայիր Մուրատ ջուրը, հայիր էաս լեռտանը:

— Հայեա՛, ինչ կայ, ըսրց սուլթան:

— Մեր Աստուածը էադ ամէն բաները տեղծողն է. էղի օ կը տեսնըք, թու՛ճ է. մ՛ աւտաք:

Սուլթանը էաս խօսքի վրուն շատ հերստտաւ քէն ինեղէն էկաւ տունը, Մօքոսին ըսրց:

— Մօքոս, քիզի աչքիս լոսին պէս կուզէի, դաւ

ինձիս<sup>1</sup> արեցիր, եզն օ գանակը կը հայի, անանկ էալ ես քիզի կը հայիմ, աչիցս էլար: Սուլթան հերսոտաւ տի կորսնցնէր Մօքոսին:

Մօքոս Ս. Տիկին կը կանգնէ.— Մօքոսին էրազին մէջ մի ծերունի էկաւ,— գլխդ կը յընդ կուտայ ըսըց, ճրագը կը վառես, էաս փէատը մի կին կը շինես. կայնեցնես, արթըցաւ օ մարդ չկայ: մի փէատ կայ, շինմուն է մարդու կերպարանաց:

Մօքոս սուլթանի էրեսը հատաւ գնըց, փէատըն կարգի դրաւ, կնոջ հագուստ հագցոց, բերաւ սուլթանի դռան վրան կայնեցոց, մտաւ ներս ու ըսըց:

— Արի, սուլթան, քեզի մարդ կը կանչէ:

— Վե՛ղ է կուզէ իզիս:

— Ի՞ սիմ (ի՞նչ գիտեմ) մէկ կընիկմն է:

— Հայիր, կնկայ անունը ի՞նչ է:

Մօքոս օլրտաւ, դարձաւ ըսըց.

— կնկայ անունը Սուտ Տիկին է, դու օ իզիս կուզես, (կը սիրես) էկոյ՛ տես:

Սուլթանը էկաւ տեսաւ օ մի աղկէկ կնիկ կայներ է, աշխրբին էրեսը չգտնուիր, հայեաւ օ պզտիկ էրախայ մի գիրկն է, ծիծը բերանը կուտէ, ինք պաղաւ մնըց, լեզուն կապուաւ, սորա բացուաւ:

— Էագ ի՞նչ կնիկ է. հարցոց Մօքոսին:

— Էաս է իմ Աստուածը ըսըց Մօքոս, էրկնուց գեանուց տեղծողն է. ձեր Աստուածը մեռեր է:

— Զիմ աւտար, Մօքոս, լուսուն էրթք, տեսնըք:

Մօքոս գողտուկ գիշերը տարաւ Սուրբ Տիկին<sup>2</sup> աղբրի վրայի շինութան մէջ կայնեցոց. կուռքն կործեց. ետ դարձաւ, առաւօտ առաւ սուլթանը

<sup>1</sup> Եւ ուղղական ինչ սեռական և տրական, ինչ հայցական հորովներ են:

<sup>2</sup> Այժմ Սուրբ Տիկին անունով ուխտատեղին կայ նայն վայրը:

գնըց, երբ մտան ներս, տեսան օ կուռքը գետին ընկած<sup>1</sup> և Սուրբ Տիկին կանգնած:

Էաս ի՞նչ է հօս, Մօքոս հարցոց սուլթան:

— Սուլթան, էրագս տեսայ օ ձեր Աստուածը մեռաւ, էաս էջաւ տեղը:

Սուլթան պաշայեց լացը, ըսըց:

— Մօքոս, թագաւորն օ լսեց խելացը կելլէ. ի՞նչ դուր իմաց տի տանք:

— Էագ էալ դերտ կինիս. քու Աստուածդ մեռաւ նա. իմ Աստուածս տեղը կայնաւ:

Մօքոս պաշայեց (սկսեց) էառջին աղօթք ինիլը: Սուլթանը տեսաւ օ շատ պօզառ (պայծառ) է, ինքն էլ պաշայեց աղօթք ինիլը, ու ըսըց:

— Է, լաւ, լաւ, հաւանաք քու Աստուածը, թագաւորին ի՞նչ դուր իմաց տի տանք:

— Ըսէ, մեր Աստուածը մեռաւ. էաս մեր Աստուծոյ մէտրը էջաւ, տեղը կայնաւ:

Ըս տեղուն էլան գցին. շատ քիչ մնըց իրեք թագաւորներ դարձան Նիմշիրի քովուն:

Էան գիշերն կերան, խմեցին, առաւօտ Բելդ ըսըց աղբրտոցը, որ էրթն Մօքոսի շինած աղբրի վրան, իրանց Աստուծոյն երկրպագութիւն անեն:

Բելդ տեսիլ կը տեսնայ.— Էլան գցին, երբ ներս մտան, Բելդ տեսաւ օ մի կնիկ երախան կիրգն, շնին աջուկ փիծին վրայ ծամուն, զէպի գերեզման կը հայի. զարմանք մնըց. պաղաւ կայնաւ, սուլթանը պաշայեց թագաւորի հետ զրուցիլը. թագաւոր չխօսար. մէկէալ թագաւորնուն կը պատմէ ըսանկ ըսանկ էղաւ:

Բելդ թագաւորի լեզուն կապուաւ:

Էաս ի՞նչ դուր տի ըլլի ըսին մէկալ թագաւորնին:

— Մեր Աստուծոյ խաս մէտրն է, զասաֆէթ մի նէք, էնի լեզուն կը բանայ, ըսըց սուլթանը:

Թագաւորի լեզուն բացուաւ, պաշայեց նախ ինիլը:

<sup>1</sup> Մօքոս նոյն կուռքի կտորներն հաւաքած, հօղի մէջ հորած է իբրև գերեզման:

— Էան մեր Աստուծոյ խաս մէարն է, ըսըց Բելզ: Էազ ֆինճանով բերանս ի վեար կարմիր ջուր լեցոց, լեզուս բացուաւ. էաս քան զմեր Աստուածը զօրաւոր է. ըսըց ինձի, խմէ, խմեցի, մեր Աստուածը մի գի հետ չէր զրուցեր. էաս կը զրուցէ:

— Թագաւորներ, ըսըց սուլթան, էսի մեր Մօքոսին Աստուածն է:

— Մօքոս, քու Աստուածդ ո՞ր էր դէ՛ իմա, ըսըց Բելզ Թագաւոր:

— Էաս վերը կապտ տեղն էր. մի օր էջեր, ձեր Աստուծոյ տեղ կայներ է:

— Մօքոս, քու Աստուածը զօրաւոր է, իմ հետ էալ զրուցեց:

Թագաւորնին սկսան Սուրբ Տիկիկնայ առջև մատաղ կը յընէ:

Ժողովուրդը լսեց օ իրենց Աստուծոյ մէարը էջեր է տեղը, աշխրբի ճոթ ու ճոթեղրէն պիթուն աշխրբի մարդ թոփուան, էկան բաշայեցին ուխտ ինիլը:

Ժողովուրդը օ տեսաւ էաս անմահական ջուրը, հասան օ իրանց Աստուածը հոս էկեր շատ մարդ կուգային, շատ մատաղներ կը կը յընէին, կուտէին կը խմէին, կերթային:

Ըս տեղուն պահապանը Մօքոսն էր:

Աշխարքը պիթուն լսեցին, էաս անմահական ջուրը տարին ամեն տեղ:

Խալ Թագաւոր տղայ չունէր, տղայ էրած էր Մօքոսին. իրա ծերութեան վախտին Աստուած մի տղայ տուեց, անունը Խալանտար դրաւ. պապու անունի պէս Խալի էր. Խալանտար կը կանչէին օ գոտը չղինէ Չինաքեար:

Խալին շատ մարդիկ աչքի լոսի էկան. ինքն էալ տեսութան գնըց աղբօրր, Բելզ Թագաւորին, իրա հոգէորդի Մօքոսին:

Բելզ Խալ ու Նիմշիր իրեքով Աստուածապաշտ էղան, իրեքին էալ սայմանը իրուր մօտիկ էին:

Մօքոս Սուրբ Տիկիկն կերթր, Ժողովուրդին, իշխաննուն կը քարոզէր, բոլորը հոն կուգային, Մօքո-

սին կլսէին. բոլորն էալ Քրիստոսի աւտըցին: Թագաւորներ օ դարձան, Ժողովուրդը օ լսեցին պիթուն դարձան, ինդուր չաւտային, էանանկ հրաշք տեսան. հարկ է օ աւտային:

ՄՕՔՕՍ ԿԸ ԲՈՒՆՈՒՒՅ:

Չինաքեար Թագաւորը կուպաշտ, զօրպա ու բռնաւոր էր, եր լսեց օ իրա աղբրտիք Քրիստոսի աւտըցին, կաղտաւ. ըսըց, — Էնոք մեր պապու Աստուած չեն աւտար, Մօքոսին Աստրճուն է վուրուլմիշ էղած (սիրահարուած). ես քանի օ Մօքոսը չեմ բերէր. գէալուն տունը (գիշատոյ գազանաց առջև) նետեր, էնոք մեր Աստուածը չեն աւտար:

Բելզ տունը չէր. իրա աղբրտոցը հետ գցեր էր. Չինաքեար իրա իրան ըսըց, հեմի վախան է:

Թուղթ գրեց Շուշայ սուլթանին — պակաս տեղ ունիմ շինելու. իմացած իմ օ Մօքոս շատ լաւ վարպետ է, կը ինդուրիմ, ճանփէ գայ:

Շուշայ սուլթան միամիտ էր, Մօքոսը ճանփեց, Մօքոսն օ ճանփեց, Չինաքեար բռնեց, գէալուն տունը նետեց. ընկայ էալ հանեց զնտանը նետեց, անտա ասկերը (զօրք) առաւ, ընկաւ ճանփա օ էրթայ Խալին բռնէ, Խարակէօղ սուլթանին առնէ. երկիրը անցընէ (աւերակ դարձնէ):

Բելզ Թագաւոր տուն դարձաւ, հայեաւ օ Մօքոսը ճանփած է Չինաքեարին: Չինաքեար գէալուն տունը նետեր է, շատ հերսոտաւ: Խալ էալ Մօքոսի համար տամա ըրըց մեռաւ:

Ղարակէօղ սուլթան մնըց շատ նեղը պաշայեց խաղ ըսիլը:

- Դմբուկը գարկուաւ Խաճրրու սրթր,
- Ասկերը անցաւ Սրճովու կարմունջը,
- Պայրախտարը (գրօշակիր) հասաւ Կորճնայ մօրին.
- Քոհիկ տէրի ձորի վեր կուգան:
- Սիւսիկը փչեցին, թոփուան պաղ աղբրի գլուխը,
- Չորս պէօլիկ էղաւ մի պէօլիկը հասաւ Քօր աղբրը:

Մի պէօլիւկը գնըց էլաւ Տաղպաղու գլոխը.  
 Մի պէօլիւկն էալ էլաւ Ղոս աղբրի գլոխը.  
 Մի պէլիւկն էալ հասաւ խալածուխ.  
 Չորս թարաւը չեվիրմիշ էրած է Փախնելու տեղ չկայ

Մօքոսի չարչարանքը զնտանի մէջ:

Խապար տուին Զինաքեարին— Աւստա Մօքոս էկաւ  
 Թագաւորը— Բռնեցէք, քովս բերէք ըսաւ:  
 Իրեք հոգիով Զինաքեարի քով հանեցին,  
 Թագաւորը սաստիկ պոռաց.  
 — Մօքոս, դու մեր Աստուածը պաներ, հորը էս ձգեր:  
 — Հա՛, ես իմ՛, ինչ կըսիս:  
 — Տարէք, ըսրց, նետեցէք Գէալուն տունը:  
 Առին գցին, Գէալուն տունը ձգեցին:  
 Խեղճ Մօքոս. — վայ ըսրց.  
 Մի ասլան, մի դափլան, մի գէալ,  
 Շաբթով անօթի կը պէյէին.  
 Մօքոսն օ էսոց առաջ ձգեցին  
 Ասլանը թւը բռնեց,  
 Ղափլանը ձուռը պատուեց,  
 Գէալը փորը ծակեծ,  
 Աստուծոյ աղաչեց, ասլանը ճղեց.  
 Ղափլանը խեղդեց, գէալը քերթեց:  
 Զինաքեար ավլա հերսոտաւ,  
 — Գցէք, կապեցէք Մօքոսին, ըսաւ.  
 Բերէք իմ՛ էառչին ըն գարշելին:  
 — Մօքոս, դու մեր Աստուածը կործեր՝  
 Տարեր հորը ես ձգեր,  
 Տեսնըմ՛ հալա, քու Աստուածդ ի՛նչուր է,  
 Օ քեզի իմ՛ ափուցս ազատ ինէ,  
 Ըսրց, զնտանը նետեց, գուռն էալ դրեց:

Մօքոս զնտանի մէջ տրտունջ կանէ:

Չնտանին մէջ ընկայ եսիր (գերի),  
 Տակս չկար չոր խսիր:

Մէկ թարաւս էր լիք լիք ասեղ,  
 Մէկ թարաւս սուր սուր մեխ,  
 Վէր մի թարաւ օ կօջրուէի,  
 Էան թարաւի կոմս կը մտնէր,  
 Կը կանչիմ՛ Մանուկ տղին, ...:  
 Զնտընին գուռը էրկաթ է.  
 Չեմ՛ կրնրը պարկիր, տակս չամուր է.  
 Ծարաւ իմ՛, չունիմ՛ բարեկամ.  
 Օ գայ, թաս մի պաղ չուր տայ.  
 Օ մեռնիմ՛, մարմինս վերցնէ.  
 Մնացեր իմ՛ խարիպ ու խարիպ.  
 Կը կանչիմ՛ . . .  
 Շատ էր Մօքոսիս ցաւը. դէ գօտիս էլաւ ցելը,  
 Եօթ տարի մնացի բանտը, փտաւ շապիք ու վարտիքս  
 Մարմինիս վրայ եարա բացուաւ,  
 Մօքոսը ու բեղերս ձերմըկաւ:  
 Խորողիսունն զնտանին դուռը բացուաւ.  
 Բերանս գոցուաւ, լեզուս գլորուաւ.  
 Մանուկ տղան դէմս կայնաւ,  
 — Մի՛ լար, Մօքոս, մի՛ լար, ըսրց,  
 Իմ՛ հայրս քու լացդ ընդունեց,  
 Իմ՛ հայրս օ երկինքնէ,  
 Իմ՛ մէարս շինած մատուռիդ Ս. Տիկիննէ:  
 — Ինձի կըսիս «Մօքոս, մի լար»  
 Արտի տախտակներս փորս լցուեր է,  
 Միս ու օսկարներս էալ խլրսեր է.  
 Արինս ցամքեր՝ աւուիս էալ բռնուեց քորցեց է,  
 Ես զլամ՛ դէ, վե՛վ տի լայ:  
 Մօքոս էաս նեղութան մէջ կըսէ—  
 — Կը կանչիմ՛ Մանուկ տղին, ...  
 Մանուկ տղան մրսին մէջ էղաւ,  
 Հովիկներուն էալ տեսնուեցաւ,  
 Պոչով ասղը էրկինքը էրեցաւ.  
 Կը կանչիմ՛ Մանուկ տղին. ...  
 Չարողս օտացս հանեցին, բուռն կըյրեցին.  
 Մատներս քերդեցին, կրակ վառեցին,  
 Թասը կարմրցոցին, գլոխս անցոցին:



Գոտիս քակեցին, լեաթերս հանեցին,  
 Տարին իզիս դժոխք նետեցին.  
 Էրկըթէ դուռն էալ գոցեցին:  
 Կռեցաւ աչիւրնուս քունը.  
 Մեղաւորին տեղնէ դժողքը.  
 Մեղաւոր իմ՝ օ կը քաշիմ էա տանջանքը:  
 Կը կանչիմ Մանուկ տղին...  
 Չնտընին միջու տիւր (տիղմ),  
 Կերած հացս էր կըլկըլը.  
 Կը վառուի հոգիս ու ճկերս.  
 Խողազաճին ջուրը կը պաղեցնէ սիրտս:  
 Կը կանչիմ . . .  
 Չնտընին մէջ մնացի մինակ մինաւոր.  
 Մանուկ տղան ճերմակ ձիաւոր.  
 Էկը վաղտս լեցեր է էաս օր.  
 Առ հոգիս, տէր երկնաւոր.  
 Էկը ժամանակ շատ ունիմ,  
 Օգնէ օ էաս բանտէն ազատիմ:  
 Օր մի երկնաւոր թագաւոր տի բարկանայ,  
 Էաս զալմ (անգուլթ) թագաւորի վրայ,  
 Օ նետեր է ինձիս էաս զնտանը.  
 Կը կանչիմ . . .  
 Գարլելական փողը տի փչուի.  
 Թով ու լեռտանը ժաժ տի էլլան.  
 Հալաճը Մանսուլը տի գայ, տ'աղնէ (դատէ),  
 Արեցթուն արեւպատը հաւկթի մի պար տ'երեւայ,  
 Կը կանչիմ . . .  
 Սև սև ամպերը էրկինք տի պատէ.  
 Արարիչ աշխար պիթուն տի մթնէ,  
 Մեռելները տի կենդանանան.  
 Մանուկ տղան աթոռ տի գնէ,  
 — Էկէք կըսէ դատաստան կայ տեսնալու,  
 Պատասխան կայ տալու,  
 Կը կանչիմ Մանուկ տղին: ...

Մօքոս հրաշքով կազատուի:

Կէս գիշերին ճերմակ հագած երիտասարդ մի

Դխրտալէն բացաւ զնտընին դուռը.  
 Ձեռացս բռնեց—էրթս բարի, ըսքը,  
 Դու օր ինձիս չես մոռնար,  
 Քիզի նեղութան մէջ չեմ թողեր.  
 Կանչեցի Մանուկ տղին, հասաւ օգնական.  
 Շաբաթ գիշեր զնտնէն էլայ, էփրատ անցայ.  
 Խոստայու լեառը<sup>1</sup> օ բարսըցայ, դուժմանը նստաւ.  
 Քսանը չորս սահաթ փորս բան չէր մտեր,  
 Աչքս մթնեց, խելքս անցաւ.  
 Կանչեցի Մանուկ տղին, օ գննայ ինձի Ս. տիկին:  
 Աչքս բացի՛ տեսայ Մանուկ տղան.  
 Հրեղէն ձիով կայներ է իմ վրան,  
 Ձեռացս բռնեց, առաւ թերթին,  
 Էջոց ինձիս Մուզուրայ ջրի գլխին:  
 Չուրը քառսունը օխտը տեղէ կը վազէր,  
 Քառսուն աղբիւրը ջուր էր.  
 Մէջ տեղու օխտը<sup>2</sup> աղբիւրը կաթ էր,  
 Մանուկ տղան ինձիս բռնեց,  
 Մէջ տեղու կաթոտ աղբրին ալը նետեց.  
 Լողացայ, լողացայ, էլայ քնարը,  
 Էալ ինչ կինիմ՝ աշխրբի մալը,  
 Մարմինս քարաքոս կապեր էր, թափեցաւ,  
 Մօրուքս ճերմակ էր, սըպ սև էղաւ,  
 Հոգիս ու մարմինս թող էր, սաղցաւ.  
 Կանչեցի Աստուած, ըգկայ էլայ,  
 Ճանիայ ընկայ օար ձոր անցայ

<sup>1</sup> Հիմշիր թագաւորի սայմանին մէջնէ Խոստայ լեառը որ Խոստացած էին Ձինաքեարին տալու, չէին առած, որոյ համար Ձինաքեար պատերազմած և առած էր. Այս լեռան մէջ 160ի չափ քրդ գիւղեր կան. որք ամբողջօրին Սուրբ Թորոսի գիւղեր կասուին. Չմարայէն մինչև այս լեռը 7 ժամ կը տևէ.  
<sup>2</sup> Մժուրայ ջրի սկզբնաւորութիւնը Կ7 ակներէ կը գոյանայ, որք նախ մի վայր կը լճանան, մէջ տեղի եօթն կաթագոյն և կաթնահամ են, ուր կը լողանան և ջրէն կը խմեն ախտացեալք. կառողջանան.

Շատ քիչ է կայ, Հալւորու<sup>1</sup> լեառը հասայ,  
 Ըս տե կիւնեշը (արեգդէմ) նստայ, հացս կերայ,  
 Հայեա բոլորս, մի թարաւս սխտոր էր,  
 Մի թարաւս էալ սոխ ու կանաչ էր,  
 Ամշայ արևը զարկեր հողը տաքցեր էր,  
 Տեսայ օսկին հալեր կերթայ, փրձոցի օսկի սէօն մի,  
 Գնացի մէշէն էրկու չպուխ գտայ,  
 Կըյրեցի, օզրեցի, կեմ շինեցի,  
 Օսկի սէօնը կասեցի, մտայ տակը շալկեցի,  
 Չիմ կրնրը վերցնէր, ծայր է քարի պէս,  
 Էլայ կէսը կըյրեցի, շալկեցի, խարակետիկ անցայ,  
 Տնկուայ Կէօկեռիկայ<sup>1</sup> սարն ի վեր,  
 Էլայ էաս լեառան գլխը նստայ,  
 Աշխարքը լսեր է օ քառսուն Մանուկ էկեր,  
 էաս լեառան գլխուն վրայ են էջեր,  
 Գիւլունկ գտան, քարը փորեցին,  
 Իրենց համար բնակարան շինեցին,  
 Միջուն աղբիւր հանեցին, հալուղ շինեցին,  
 Կալ մի շինեցին, հող ու ցանք էրին,  
 էսոք օ ինձիս տեսան, իրեք օր թող չտուին:  
 Օսկին տուի պէյութան (իպահ),  
 էրթալու էղայ, ճանփա սարխոցուցին,  
 — էաս լեռնի վէար շիտակ մէշէն կէջնաս:  
 — Մնա՛ բարի, ըսի ու էջայ,  
 Գարերու միջուն իյնալէն կայնելէն մէշէն հասայ,  
 էրկինքը սև ամպ էլաւ, հովով արդևը իղիս առաւ,  
 Թեղ ու դերձան չմնրց վրաս, թրչաւ,  
 Կէօփտէս (ամշողջ մարմին) պաղեցաւ, մնաւ,  
 Արևն օ պատեց, ավլա տումանը առաւ,  
 Կեծեկը կէծկտաց, մէշէն վառաւ,  
 Ավլա կարկուտ ու աղրև էկաւ վրաս,

<sup>1</sup> Հալւոր կամ հալւոր ծեր կը նշանակէս. այս լեռան վերայ կայ վանք մի, ուր կայ Սուրբ Յովհաննու Կարապետի մատուցը, տաճիկներն Հալվայ դաղի կասեն. այս տեղ հաւք շատ կան:

Շաշուրմիշ էրի ճանփաս,  
 Գէալերը ո՛ւ ո՛ւ կինէն մէկ դիուն,  
 Արջերը կը կմռտան մէկէալ դիուն,  
 Խոզերը արզանին իրուր կը զինեն,  
 Չեմ կրնրը էլլըր ընկած տեղէս,  
 Կանչեցի Մանուկ տղին, ...

Դանիէլ ճգնաւոր:

Խելքս զիւանէէս (գատողութիւն) էլաւ  
 Չիմ գիտէր, վեր մի դի տերթըմ,  
 Տեսայ հեռուն մէկ ճրագ կը վառի,  
 չրագին հայեա, ընկայ ճանփայ ու գցի,  
 Գցի գցի, հասայ մաղարի մի դուռը,  
 չրագը մէկէն անցաւ, ես վախեցայ,  
 Շատ պաղեր էի, դողս առաւ,  
 չրագը փակաւ, ես մտայ ներս,  
 Տեսայ քարը փորած՝ պղտի օդա շինած է,  
 Մազոտ մարդ մի հոնի կայնած է,  
 Բարև տուի, բարևս չառաւ,  
 Հեմալ ժիր բարև տուի, ըսըց,  
 էառջի բարևդ մտօքս առի,  
 Ինչո՛ւ ժիր կը պոռաս, Աստուծու բարին:  
 Գցի նստայ մազոտ մարդու քով,  
 — Բարի էս էկեր, ուսկա կուգաս, ո՛ւր կերթաս,  
 — Կէօկեռիկայ կուգամ, ըսի,  
 — Վեր մի թագաւորի սայմանէ էս,  
 — Խալ թագաւորի սայմանէն:  
 — Օղորմի խալա թագաւորին,  
 Աստուածապաշտ մարդ էր:  
 Մօքոս ըսի օ լսեց, մէջքը կոյրաւ,  
 — Մեռած է օ օղորմի, կըսիս:  
 — Խալ թագաւոր վաղճանաւ,  
 Խարակէօղ տղացկան պարկաւ,  
 Չինաքեար ուրախացաւ,  
 Իրեն համար ճանփա բացուաւ:  
 Մօքոսը գնտընը մնրց

- Խալ թագաւոր տամլա ըրըց՝
- Սուլթանը նստեր է կուլայ՝
- Խալանտար էլեր է կը խաղայ՝
- Բերդ խասաֆէթ կինէ։
- Պատճառը ինչ էր, վեր տեղաց իմաց էղար։
- Չինաքեար Վօքոսը խափելով զնտանը նետեց՝
- էգոր համար թագաւորը ղասաֆէթ կինէր,
- Տամլա ըրըց վազճանաւ,
- Չինաքեար գնըց էրկիրը տակն ու վրայ ըրըց։
- Դու վեր մինէ խապար առիր.
- Օխտը տարի կայ, էաս քարը ճգնել չէի էկեր,
- Վօքոսը տարան, զնտանը նետեցին.
- Շատ էալ չարչարանք տուեցին.
- Ես էալ իմ մինէ վախեցայ, քարը փորեցի.
- Մտայ մէջը մնացի։
- Եօթը տարի ըս տեղ իս մնացեր,
- Քիզի ո՞վ խապար կը բերէր։
- Հովիկ մի խատեմի (միշտ) հոս կուգար,
- Դաւարը բերեր ջուր կը խմցնէր,
- Ինձի ամեն բան կըսէր։
- Դու որ էադ խապարը տուեցիր,
- Իմ մէջքս կոյրեցիր,
- Ես Վօքոսն իմ, Խալիսի ազան իմ։
- Մազոտ մարդը երբ լսեց, խնդաց,
- Չհաւտուաց էգոր խօսքին, ըսրց
- Չինաքեարի զնտանը մարդ օ մննայ,
- Էլլայ գայ, անկարելի բան է,
- Էրկնուց գեանուց տեղձսզն օ կայ,
- Կարելի է օ զնտանը մնամ,
- Կանչեցի Մանուկ տղին,
- Ճանփեց ինձի Սուրբ Տիկին։
- Կճկաւ մազոտ մարդը, համբուրեց Վօքոսին օտքը.
- Լալելէն էլաւ պագեց էրեսը.
- Վօքոս, ըսրց դու բարի, աչքիս վրայ.
- Մեր Սուրբ Աստուածը տայ
- Ուր օր էրթըր, սւր օր ըլիքնէ
- Խալրսէ, լսէ ազատ ինէ։

Գ.

Դանիէլի երազը։



ազոտ մարդը ուրախացաւ, ըսրց  
 — Ինձիս կը ճանչնաս, ես Դանի-  
 էլն իմ։<sup>1</sup>  
 — Էանանկ է ես քիզի կը ճանչ-  
 նամ, ըսրց,  
 Ինչ օ գիտէր, մէկ մէկ գրուցեց։  
 — Վօքոս, ըսրց Դանիէլ, պոչով  
 ասղը էրածս տեսայ, էկաւ Սուրբ  
 Տիկինայ վրան կայնաւ. վեց օր գիշեր,  
 ցորեկ կայնուկ էր. գիշերը արեւի պէս լոս  
 կը ցաթեր, արթընցայ, ինչուր օ տեսայ, էանանկ  
 էալ էրկինքը կ'էրեայ, լոսը կամար էր կապեր։  
 Շատ մտածէցու մէջ մնացի. չեմ գիտեր ինչ  
 նշանակ է. հեմէալ հայիմ հովիկը էկաւ. բռնեցի հո-  
 վիկան թեւը, ինձի ըսրց. — Էաս կայ թամամ մի ամիս.  
 Դաւարը ըսգին չիմ բերեր վախուս.  
 Ջրին վրայ պառկեր, քնացէր էի,  
 Հազար օխչար ծառին տակ ետթախ ըրեր էի,  
 Հինգ գէալ սիւրբին (հօտին) մէջ կը յնին։

<sup>1</sup> Սնտամու քարէն մի սահաթ է Ս. Դանիէլի այրը, Մեգկերտ ճգնաւորենք անունով մի տուն կայ, փոքր եղբայրնին մի բեռ հաց կը շալակէ, կերթայ Ս. Դանիէլի այրը ճգնելու. կորոնեն. հովիւը լուր կտայ, մեծ եղբայրն կը կանչէ ներքէն — Ղազար, Ղազար, — կգայ, — վե՛վ է կասէ Ղազար ձեռքը աչքին զնելով, չեմ ճանչնար — գէ անիճած, իջիր ցած, գարին է կճղեր, փախած ես որ քաղ չանես, կասէ եղբայրն.

կը խեղդին, կը թափին փորերնին.  
 Մնացողը կը փախնի, կը պէյուհի.  
 Էլայ օ օխչար բան չկայ հոն,  
 Մէմի հոս է մորթած՝ մէմի ձորն իվէար ձգած.  
 Լէաշերը թոփեցի, ճռուընուն բռնեցի.  
 Քաշքըշեցի, ծառին տակ բերի,  
 Կէսը գցած՝ կուտէին կտաւատ.  
 Քշեցի, բերի ծառին տակ.  
 Զուր խմեցին՝ ուռան, գետնի վրան պառկան.  
 Քաշեցի կօլը, լողկցուցի մէկ քանին սաղցան:  
 — Հովիկ, ըսի, էագ ինչ չպիտու բան կը խօսիս.  
 Աշխրքէն խապար մի տուր ինձի, ի՞նչ էղաւ:

Հովիւի պատմութիւնը առաջ կը բերէ Դանիէլ.

— Կրիկուն տուն գցի իրեք մարդ կը խօսաին.  
 Ինչ օ էղած է, աղայիս կըսէին,  
 Պոչով ասղը էլեր Ս. Տիկինայ վրայ կայներ էր.  
 Մենք էալ հոն ասղին թամաշա կինէաք, ըսին.  
 Իրեք թագաւոր շատ ասկէրով էկան հասան Էրկան<sup>1</sup>  
 Բելլք թագաւորի ժողովուրդն էալ էկան Սուրբ  
 Տիկին թոփեցան, մատաղ կը յրեցին, փեշկեշ տուին.  
 Էրկանու մի մարդ էկաւ վազելին,  
 Խաբար տուեց Բելլք թագաւորին,  
 — Պատրաստ կեցիր օ Զինաքեար մենձ թագաւոր՝

1 Երկան գիւղ մի է մերձ Յաղմանու, 8 տուն բնակիչ ունի, ուր առաջ 600 տուն բնակիչ ունէր, գիւղս կայ մի լաւ եկեղեցի. շուրջ օր Երկանու ժամը չէ տեսեր. կասէ Մինաս, թող չըսէ թէ ես ժամ իմ տեսեր, էնի ու Սուրբ Տիկին մէկ տեղ շինուած է. Այս գիւղը 600 լուծք կը վարէին, երբ շարաթ օրեր եկեղեցի կերթային՝ իւրաքանչիւր լծուոր իր մասուսայն (խթան) կը տնկէր եկեղեցւոյ դուրսն. մի օր պատարագից ելան, տեսան որ մէկին մասուսան կանանչցեր է. սորա կը հարցնեն թէ ինչ բարեգործութիւն արած է. նա կը պատասխանէ, թէ Երկու չպիտու (անպէտ) եղ ունիմ, մէկը պոչ չունի, մէկը քէօրէ, քէօրին քէօր չիմ ըսիր. մէկէալ եզան էալ պօթէ չիմ ըսիր. էաս մասուսան մենձցեր, ծառ էղեր է, հիմի էալ կայ, տակը չոր, վրան կանանչ է.

իւր հետը առած իրեք թագաւոր, հերսոտեր, քու վրայ է ճանփեր:

Բելլք գիտեր թէ Զինաքեարնէ, կանչեց ժողովուրդին, ըսը.

— Ուր օ զօրապետ մի կայ զօռ, Թլայ բերդը ձգեցէք. էասկըրին կէսը Ս. Տիկին ճանփեցէք. մնացողը բերդը պէյին, գալողին զինին:

Մի վսխիք, տղաքս, ըսըց, մի թարաւը Մուրատ չայն է, Մի գին Թլայ բերդը կայնուկ է.

Մի գին Սուրբ Տիկինայ հողէ լեառը բռնած է. Բարս է, մարդ չկրնր հոն էլլր.

Էնոք տի գան ընդիուն, Աղսույա կամուրջը անցնին. Դուք կամրջին դուռնին լաւ գոցեցէք.

Զուրը կեչուտ չէ, վէ՛վ օ կեչուտը մտաւ՝ զարկէք. Թող ջուրը առնէ տանէ, կորսնցնէ:

Մարդ ճանփեցին օ կեչուտը եօխլա ինէ (զննէ). Կըյրիձ տողոց կանչեցին.

Էկան, գլոխ տուին թագաւորին,  
 Հազար հինգ հարիւր մարդ էին,  
 Տաս տաս ստակ տուեց թագաւորը ամեկուն.

Էսոք գցին, առաւօտնը հաեան օ երկնուց ասղին հասար կայ, ասկրին չկայ:

Էնոք սուս ու փուս էկան, կարմնջին դուռը կայնան, Խափուջին (գունապան)—ինչ մարդ իք, հարցոց.

- Դուռը բաց.
- Դուռը չիմ բանար, դէ չըսիք ինչ մարդիք:
- Մենք կուիւ էնոյ մարդ չիք.
- Ուր տ'երթըք, ի՞նչ կըսիք.
- Քրիստոս ո՛ւր է ծներ, տեսութիւն տ'երթք,  
 Դուռը բացին, ասկերը ըստի կեչեն անցոցին.  
 չատրնին զուրմիշ էրին:

Առաւօտնը ընկան ճանփայ Ս. Տիկին հասան Մատաղ կը յրեցին, փեշկեշ տուին.  
 Տեսան Քրիստոս ընտե չէր, պառկան Ս. Տիկին:  
 Առաւօտնը ընկան ճանփա օ Քրիստոս գըննան:  
 Պոչով ասղը օ լրուաւ ճաշուայ դին (հարաւ),  
 Մեղքոն թագաւոր ըսըց:

Մենք ասողը բռնեցիք կուգաք, կինէ բռնիք էրթըք:  
 Ասողը գնըց մտուրը էջաւ,  
 Բարէ մտուրին վրայ կորաւ:  
 Մի մարդ էկաւ իշուն ջուր տուաւ,  
 Ասկերը տեսաւ, վախցաւ:  
 Էջը թողեց հոտի ու փախաւ:  
 Բաղդասար թագաւոր իրա զօրապետին ըսաւ՝  
 Ձինը քշէ՛, էան մարդու մինէ պատասխան բեր:  
 — Կայնիր մարդ. ձէան տուեց զօրապետը:  
 Փախչողը մատուրը հունց տուեց մտուրը,  
 — Հան է՛, ըսըց ու բաշլայեց փախիլը:  
 Գցին մաղարի դուռը բացին,  
 Էասկերը մաղարի բոլորը չատը զարկին.  
 Իրեք թագաւոր մի չատը կեցան  
 Էլան գցին, Մանուկ տղան տեսան,  
 Մեւքոն թագաւոր սև մօրուքով տեսաւ,  
 Համբուրեց, դուս էլաւ, պատմեց ինչ օ տեսաւ.  
 Գասսար թագաւոր ձերմակ մօրուքով տեսաւ,  
 Բաղդասար Մանուկ տղայ տեսաւ.  
 Թագաւորներ իրուր ըսին — էաս չ'էղաւ:  
 Իրեքն էալ մէկ տեղ գցին, մանուկ տղայ տեսան.  
 Օ. Աստուածամօր գիրկը, օսկի, արզաթ, շատ  
 փեշկեշներ տուին. մատաղներ կըյրեցին, թողին գցին:<sup>2</sup>

Դանիէլ կըմննի:

Դանիէլ էսօք Մօքոսին օ պատմեց, կէս գիշեր էր, ըսըց Մօքոսին.

— Բրիստոսի աշխարք գալը ինձի այտին էղաւ. Մօքոս, ես պաի մեռնիմ, չթողես օ գէպերը ինձիս ուտեն:

Հոգ ու գերեզման կինիս, վրաս քար կը դնես.  
 Մօքոս քանի օր մնըց, Դանիէլ հիւրնդցաւ, մեռաւ.  
 Մօքոս շուար մնըց, կըսէր իրա իրա.  
 — Թեւերս թուլցաւ, չեմ կրնր փորէր.  
 Ծընկուրներս կոյրաւ, չեմ կրնըր կայնիր.  
 Թռայ դուրս էլայ, հայեա բոլորս, մարդ չկայ.

Իլաճը ի՛նչ է՛, էստի փորիմհոջ ու գերեզման ինիմ:  
 Կանչեցի Մանուկ տղին, օ ճանփէ ինձի Ս. Տիկին,  
 Սիրոս Ֆարայլամիշ էղաւ, վրաս դուվաթ էկաւ.  
 Փորեցի գետինը, լոգցուցի, էջուցի գերեզմանը.  
 Վրան քաշեցի քարը, գրեցի անուըր.

Չեչել չերքեգ:

Էլայ ընկայ ճանփայ, մէշի մէջ կորայ.  
 Նէ էրկինք նիմ, նէ գետին, բոլորս խոշոր օձեր՝ կայ.  
 Մէշէն խլրոսայ, ճանփան գտայ.  
 Տնկուայ քարէ բերդի մի վրայ.  
 Բարս Մնամու բերդնէ.  
 Բոլորը մէշի ծառ ու ձեղ է,  
 Վրան անմահական տղբիր կայ,  
 Աղբիրն էալ քոսի դեղ է:  
 Մօքոս սգայ էալ էլաւ, Մարու զայի գլոխը էկաւ,  
 Տեսաւ Չեչել չերքեգ նստեր է ծառի վրայ,  
 Իրա ձագերուն համար կուլայ.  
 — Չեչել չերքեգ, ինչո՞ւ կուլաս, ըսըց:  
 — Ահ, Մօքոս, գէրտերս մի քակեր, <sup>2</sup> (յիշեցնէր)  
 կրակ ձգեցին բոնս, վառեցին ձագս,  
 Օխոյ(նետ) պանին կնիկս, քակեցին վաթանս,  
 Ես փախայ, բարսըցայ, էրկնուց կէսը էլայ,  
 Էջնալու օ էղայ կնկաս ու ձագուս վրայ,  
 Սէապեցին վրաս շահինը, էտեուըն էալ տողանը.  
 Շահինը վերեուըն կը զինէր, տողանն էալ տկուը.  
 Կոիւ ինելէն էրկուըց էրկիր ընձանը,  
 Զարկուանը իրեք օր իրեք գիշեր,  
 Լեառէ լեառ, ձորէ ձոր ընկաք,

<sup>1</sup> Այժմ ևս այս վայրերը բազմաթիւ անհաշիւ խոշոր օձեր կան.

<sup>2</sup> Մօքոս ամեն ճանափարի լեզուն կը հասկընար, Չեչել չերքեգ օ տեսաւ Մօքոսին, իրեն գերտերը քակեց. բաշլայեց իրա գլխուն գալաճը նախ ինիլ:

Զմբուլթ ղուշին ինձի հասաւ իմտաւ,  
Զարկեց կոյրեց էնոց թե ու ղանաւ.  
Էջանք էրկիր, օ աշխարք վառմուն է,  
Մնացեր իմ շուար ինչ տէնիմ:

— Զեչել չերքեզ, ի նգուր է սուլթանս, մեռաւ զը սաղ է. հարցոց Վօքոս:

— Սուլթանը սաղ է, բերդի մէջ է, վերի խաթը փլած է Զինաքեար, տկու ղաթի մէջ է փակուեր:

— Զեչել չերքեզ շուս գնա, խապար տար օ Վօքոս էլեր է, ըսըց Վօքոս: Զեչել չերքեզ կուժուրտալէն գնըց բերդի չորս ղին պլտրտաց, ծակ չգտաւ, ետ ղարձաւ:

Խողաղաճին աղբրին վրան, արտի քնարը կար ժամանակաւ Զեչել չերքեզին քարը, օ փորած է, մէջը Վօքոս կերակուր կորկոտ կը լնար. սորուեր էին. կուտէին Վօքոսին, կը ճանչնային, ուր էրթր, հետուին կերթային: 1

Նուիրական ըոխնչը: 2

Վօքոս սկայ (Սարուղայա) էլաւ, գնըց Խողաղաճի

Երկու Զեչել չերքեզները, կասէ Մինաս, միշտ Սարու ղայի գլուխն կան, Այս թուշունը սագի չափ հաւի ձևով, գլխու վերան մազ չկայ, սպիտակ է քիչ գեղնագոյն. վիզը հաւի նման, կողերն զուտ սպիտակ, կաուցը դեղին, գոյգ կը բնակին, միւկնոյն զոյգը մինչև 150 տարի տեսնուած է. մահ չունի, միայն նրա մահն այն ժամանակ է, երբ բարձրէն սրընթաց «կուժուրտալէն կեջնայ» քարի ծառի կը գպի, Բունբուլը (փետուր) եր վերայէն կը թափի, կը մերկանայ, գեռ կենդանի կը մնայ, երբ չէ կարող թուշիլ, ընկեր կը կերակրէ, Մինաս կասէ նաև թէ հաւը Զեչել չերքեզին ըսըց-ըսոր թուշը, Զեչել չերքեզ ըսըց կեցիք Նստուծու մինէ խապար առնիմ. տեսնամինչ կը հրամայի, ընանկ կը թուշը. հաւը մտիկ չըրըց, թուաւ. ընկաւ գեաին. Զեչել չերքեզ բարսըցաւ էրկինք, շատ օ էլաւ նը արեւ զարկեց, էրաւ (այրեցաւ) գլուխը, ընու համար չեչել չերքեզ կըսեն:

— Զինաքեարի պատերազմի, Զեչել չերքեզին օխով զարկած են, աւքին կոպը գահա շուլվեր է օխը, էարինը լցուեր է աչիցը կոպին տակ, որով վկայել կուզէ Մինաս թէ պատմուածներն ճիշդ են:

2 Մառս նման է թեղիի, մանր, սաջմայի չափ պտուղ կտայ. որ նախ կանանչ, յետոյ դեղին, ապա կարմիր կը փոխուի:

աղբրի վրայ բռնչը տեսաւ. էան ջուրին կարօտը շատ կը քաշեր, մառըցաւ ջուր խմիլը, բռնչը տեսաւ, ախ քաշեց, միտքը բերց թէ ինչ ղտի հոսի ջուր խմած, ծառի շուքի տակ նստած է ամրայ շոքուն. էաս ծառը չորս չաթալ ունէր, իրեքը Զինաքեար վառած էր, էան մէկը կար, օ ծառչոր (կիսուայուկէս չորացած) էղած էր, միտքը բերց թէ ինչուր լաւ լաւ օրեր տեսած է էաս ծառի տակ: Վօքոս ընկաւ մտածեցու մէջ, խելքը գլխուն գնըց, էլաւ ջուրը խմեց, խմեց տը չէ, խելքը գլուխը էկաւ, իրա իրա ըսըց. — Ըս պիթուն աւերումը ըն անասուածին (Զինաքեար) գործն է, բաշայեց երգ ասիլը:

Եօթը սրայ (կարգ) սելուի ծառ տնկեցի.  
Տակը ճերմակ, կարմիր ծաղիկ ժմնցուցի.  
Քէլլան ձիանը տակդ կը կապէի:  
Պաղ պաղ ջուրը կը խմցնէի:  
Գետինը փորեցի, քիզի տնկեցի, ծառուկ.  
Շատ էմեկ կերայ, քիզի մենծցուցի, ծառուկ.  
Կը ծաղկէիր, կը կանանչէիր, դուն ծառուկ  
Կը դեղնէիր, պարգ կը կարմրցնէիր, ծառուկ.  
Աղջները ու հարսները ջուրը օ գային, ծառուկ.  
Արպըշմէ այլըղը գետինը կը մըյնէին, ծառուկ,  
Պարգ կը քաղէին, սնտուկը կը պէյէին, ծառուկ.  
Հարսանեքին փեսանուն ճեպը կը ընային, ծառուկ.  
Վօքոս էաս ծառին վրայ շատ ցաւեցաւ, էլաւ բանբակէ թելերով էարած տեղերը կապեց, պաշայեց աղօթք ինիլը:

Կը կանչիմ Մանուկ տղին,  
Որ գայ գովէ ծառս, որ ծաղկի.  
Ծառս, որ ծաղկի, ծառս, որ ծաղկի,  
Տուփնու տերև կանանչ լինի:

շատ քաղցր և համեղ է. չորացած պտուղն սանգի մէջ կը ծեծեն, կուտեն, քան զարմաւը քաղցր է, հազի ևս դեղ է, կեփեն, ջուրը կը խմեն, Բուինչը (պտուղ) կը տանեն, փեսայ մանկափք որ պիտի գովեն փեսան, ժողովուրդը կը բերեն, փեսայի գրպանը կը լեցնեն, փեսան ևս փեսայ մանկաոցը կտայ, բռնչ որ չլինի, հարսանիքը անշան կը համարուի:

կը կանչիմ արդար ծերին.

Որ գայ գովէ ծառս, որ ծաղկի,

Ծառս, որ ծաղկի, ծառս, որ ծաղկի,

Տուվինու տերև կանանչ լինի:

Գցէք, բերէք Սուբ Տիկինը,

Որ գայ գովէ ծառս, որ ծաղկի,

Ծառս, որ ծաղկի, ծառս որ ծաղկի,<sup>1</sup>

Տուվինու ելն....

«Գցէք բերէք Քառսուն Մանուկը», «Դանիէլ ճրգ-  
նաւորը», երեք Մանուկը» և այլ սրբերու անուն  
տուեց, բռինչը կանչցաւ. Չեչել չերքեզ օ Մօքոսի հետ  
էր. հոնի կը լսեր, ըսըց.

— Մօքոս, բու տունը չքանդուի. դու բռինչին  
ծառը է մէկ էս կերեր, կուլաս: հպի Սուլթան օ քիզի  
էմէկ է տուեր, կաթ է տուեր, ընկեր է բերդի մէջ,  
թեղ գնը օ աղատիս:

Մօքոս օ ըսի լսեց, առաւ Չեչել չերքեզը հետը,  
գնըց սուլթանը աղատիլ:

Մօքոս ըզկայ էալ ճանփա ընկաւ, տեսաւ Չի-  
նաքեարի ասկերը էնքան շատ է, օ մէկ ճոթը քա-  
ղաքնէ գցեր հասեր, մէկ ճոթը դահա Չիմիշկեզեկ է:

Մօքոս կանչեց Մանուկ տղին, հասոց իրեն Սուբ  
Տիկին:

Մօքոս ինքնիրա ըսըց.

Խալ վախճանաւ գնըց, ինչ ինիմ.

Թեղ էլլմ, սուլթանին առնիմ, փախցնիմ.

Չեչել չերքեզ ըսըց. — Թագաւորդ վաղճաներ է.

Քաղաքը տակն ու վրայ էղեր է.

Մէարդ հողէ բերդը մտեր է.

1 Մօքոս երբ յափշտակուած կերգէր, որոյ ևս ան, մի  
առանձին վայր նստած էին երկու Խուզուլճուլսցի հայ, որք  
շուկան գացած՝ իրենց հարսանեաց պիտոյք գնած. նստած էին,  
որք երբ լսեցին թէ Մօքոս ինչ կերպ երգեց, սովորեցան. երբ  
Մօքոս մեկնեցաւ, դորս այդ ծառէն երկու ճիւղ կանոնն, կը տո-  
նեն իրենց հարսանեաց մէջ կը զարգարեն, Մօքոսի նման կը գո-  
վեն. որով, կասէ Միխաս, հարսանեաց մէջ ծառ գովելու սովո-  
րութիւնը մնաց:

էրկըթէ դուռը ներսէն գոցեր է.

Դրսի դիուն էալ հողը վլեր գոցեր է:

Մօքոս հերստաւ Լամբայ թագաւորի վրայ,

Խալը թողած է մինակ, օգնութիւն էրած չէ:

Չեչել չերքեզ Չինաքեարի աւերումները կը թուէ:

Կոիւ կինէին Սուբ Լոսայ բերդը,

Փլեցին մենծ քարէ պետենը.

Քաղքին չորս դին կը յրեցին, մենծ, պգտիկ մոր-

թեցին.

Օխչար ու կով քերդեցին, փիսկընին էալ կախեցին.

Աղբիրներուն ալը քօռացուցին,

Հաւերուն սաղ սաղ խանաւը քաշեցին.

Ծառ էղածը շրջեցին, պիթուն ջրերը կը յրեցին.

Կրակ սէպպեցին մէշէն, վառուաւ օճնու կարիճը.

Մըսմը էջաւ անդունդը,

Թոռ (ուռկան) սէպպեցին խողերուն.

Բուածնին բոնեցին, փախողը փախաւ.

Եան էալ կրակը ընկաւ, վառուաւ:

Մօքոս կազատէ սուլթանը:

Մօքոս հողէ բերդը հասաւ, էրկըթէ դուռը տեսաւ,

Բացաւ<sup>1</sup> ներս մտաւ. իրա սուլթանը գտաւ

վաղեց բռնեց թեւէն, դուս հանեց բերդէն.

Օխչրին տիկը փչեց, սրբիին ճոթը կապեց.

Չրինայ գեղի առաջ սուլթանը հեծոց,

Չուրը խառնելէն Մուրաա գետն ի վէար գնըց

Թլա բերդը<sup>2</sup> տարաւ, սուլթանը ներս մտոց:

1 Դռան տակն որ փորած են. բաւալու համար, այժմ ևս  
նոյն ծակն կերևի. կասէ Միխաս, որոյ մօտ մի մեծ՝ պիտակ քար  
կայ, քարի վերան ծակ մի, ծակի շուրջն գրի նշաններ, որ իբր  
Մօքոս գրած է.

2 Թլա բերդն Բերդակէն մի ժամ հեռի է, և Բերդակի  
ստորոտն է, իսկ Աուլախաղթիլն մի աւուր ճանապարհ յարե-  
ւելս է. Արաբ կեչուտին անցքի բերանն, ուր է Տօնիկ իշխա-  
նին բերդն.

Զինաքեար եօթ տարի կռիւ կինէր, ինչ ըրըցի չկրցեր էր խալի խաղինէն ու սուլթանը ձեռք ձգել լսեց օ Մօքոս աղատուած ու սուլթանը թլա բերդը փախցուցած է: դահա շատ կաղտաւ. ըսըցի, — էանանկ ասկեր կը թոփիք. կերթըք թլա բերդը հողով ու ջրով Մուրատ գետը կըլնաք: Մօքոսը ու սուլթանը կը բռնիք:

Զինաքեարի ասկերը ջրին ընդին էին, գահ ջրի վեր, գահ ջրի վէար կ'էրթային, կեչուտ չկար. (իրեք ջուր մէկ տեղ կրխառուին):

Գաշեց ասկերը, էկաւ վրան,  
Հանան ասկերը կը յրերէ չորս թարաւը:

Էաս օ տեսաւ ծեփի Մօքոսը  
Պաշլայեց լացը, ճօշմիշ էղաւ, կըսէ.

Զինաքեարի ասկերը խաս է,

Անօթի փորուն կերածը մեղրը, կարագ է.

Հագածնին էալ կարմիր զրբի է,

Կը կանչիմ Մանուկ տղին...:

Մուրատ գետին դուռը՝ բռնեցին (օ ջուր չտանին).

Էրկըթէ դուռը կոյրեցին, քաղաքը աւրեցին,

Դարձան թլա բերդին վրայ բռնեցին.

Բերդը փլեցին, սուլթանը չգտան.

Մալ ու խաղինան առին, գցին.

Պաշլայեցին փնտրուիլը խալանտարին:

Խալանտար խարակէօզ սուլթանի տղան էր.

Մօրը մինէ չէր գատուեր,

Մօքոս սի ճար գտաւ, խալանտարը առաւ փախաւ.

Սուբ Տիկին տարաւ:

Սուլթան գիտցաւ խալանտար մեռաւ.

— Ես էալ չիմ ապրիր ըսաւ.

Աղուն ֆինճանը լեցոցի, խմեց, մեռաւ:

1 Գետի դուռ կասուի այն վայրն, ուր ժամանակաւ Մօքոս թլա բերդի մի ծայրէն ց'եղերս Եփրատայ գետնուղի փորած էր ջրի ճանապարհի համար. Զինաքեար այս բերդն եօթ տարի պաշարեց, չկարողացաւ առնել. իսկ երբ այս դուռը բռնեցին, բերդեցիք նեղը մնալով՝ անձնատուր եղան:

Զինաքեար օ լսեց սուլթան մեռաւ, շատ ցաւեցաւ.  
— Ես սուլթանի համար չալշմիշ կըլլիմ, էալ ինչ տ'էնիմ.  
Ասկերը քաշեց, առաւ ետ դարձաւ.

Մօքոս ու խալանտար մնացին Ս. Տիկին:  
Զորս թարաւէն օ լսեցին Մօքոս Սուբ Տիկին է.  
Ժողովուրդը ամեկն էալ թոփեցան՝ էկան.

Սուբ Տիկինայ մատաղ կը յրեցին,  
Մօքոսին բարև տուեցին.  
Բալ թագաւորի սուլթանը էրածը պատմեց,  
— Խորոզկնչուն Մօքոսը զնտնէն էլաւ.

Մուզուրայ ջրին ալը լողացաւ,  
Հաւատացէք Մանուկ տղին,  
Մօքոսը բերըց հասոց Սուբ Տիկին:

Ժամկոյր վազելէն գնըց Շուշայ սուլթանին՝ մուտտէ՝  
Շուշայ Սուլթանը բաբուճնին չհագաւ, վազեց,  
Մօքոսը տեսաւ, կարօտով համբուրեց.

Մօքոս ժողովուրդին կանչեց, շատ խրատ տուեց.

Մօքոս կը քարոզէ:<sup>1</sup>

Աղքտնին մի թարաւ կայնին, իշխաննին մի թարաւ,  
Էան Աստուած ինձիս ազատեց,  
Իշխաններ մի ալանջնիդ գոցեցէք, մէկը բացէք,  
Հազար տարուայ մի աւուր ապրողն էալ կը մեռնի.

Մօքոսի Աստուծոյն հաւատացէք.  
Էաս չլպաղնին հագոցէք. անօթիին կերուցէք.  
Հիւնդին տես գցէք, ծարաւին ջուր տուէք,  
Մանուկ տղին կանչեցէք, յիտին գցէք՝ իրուր սի-

րեցէք:

Վե՛վ օ աղքտին հագոց էան է մենձ,  
Վե՛վ օ մի ստակ տուեցի, էան կը մնայ.  
Վե՛վ օ աղքտին կուտեցնէ. էան կուշտ կուտէ.

1 Շուշայ սուլթանի թագաւորը Բելզ որսորդ էր, միշտ որսի կերթար լեռներն, արած որսն կը բերէր. Սինամի մօտ, որտեղ կուտէին, կը խմէին, ուրախութիւն կանէին. այս վերջի գեպքերուն այն տեղ չէր Բելզ:

վել օ Մանուկ տղին մատաղ կը յրեց, էան գրախտ  
կերթայ.

վել օ Մօքոսի Աստրծուն հետ կերթայ, էնի զըն-  
տընէն կազատի.

Մանուկ տղան օգնական պահապան կըլլի:

Զինաքեար լսեց օ Մօքոս Ս. Տիկին է. խալան-  
տար էալ հետը, դահա կաղտաւ, հերոտտաւ Բելդի ու  
Շիմշիրի վրայ. էասկեր թոփեց օ գայ անցնէ էդոց  
էրկիրը. Մօքոսը ու խալանտարն էալ բռնէ:

Մօքոս խալանտարը տուեց Բարունակ իշխանին,  
ինքն էալ Զինաքեարի ահուն փախաւ գնըց:

Զինաքեար իրա ասկրով հասաւ Ս. Տիկին.

Չկրցաւ քակեր էր պատը:

Մատուռին էրկրթէ դուռը զարպով բացուաւ. ձէ-  
նը աշխարհ լցուաւ.

Ս. Տիկին նստուկ էր մատուռին մէջ տեղը

Մանուկ տղան հրեղէն թուրը ձեռաքը խըռ ձինը  
հեծած.

Որու ծունկը քաշուաւ, որու թևը կոյրաւ.

Որը խենդրցաւ, քիմիտուն էալ աչքը քոռացաւ.

Որու բերանը էտին ծռուաւ, որը կաղտեցաւ.

Ձիովը պիթուն իվէար ընկան. սատկեցան:

Զինաքեար եր դուռը կը կոյրէ. Շուշայ սուլթան  
կըսէ.

— Դռնապաններուն խապար տուէք, զինճիւները  
թոփեցէք.

Չենկեղնուն կուլլէք՝ անցոցէք,՝ օխերուն լարե-  
րը ժրեցուցէք.

Խալխանները ձեռուանդ առէք, թրերը չլպխ-  
ցուցէք,

Մանուկ տղան օգնական է, սի կայնիք, զարկէք,

1 Երբ ձիերն դռան կը մերձենային, շղթաներն ժրածին  
(լարած) պէս իրենց առջևից ձիերն կը բռնուէին, այս միջոցին  
վերևից նետով կը զարնէին, կըսպանէին.

Մօքոս զնտընէն էկած՝<sup>1</sup> միզի համար օղօթք կինէ:

1 Մօքոս ի Զիմարայ, Զինաքեարի զնտանէն մինչև Ս.  
Տիկին հասաւ, հետեեալ վայրերէն անցաւ. զընտանը բերգի  
ստորոտն էր, ձորի մէջ, բերգը բարձր է. մի ժայռի վրայ.  
Ժայռի վերան մի ճանապարհ կայ բարձրանալու. ժայռի  
ստորոտն բաւական ջուր կը բղխի. երկու ձորի միաց-  
ման վայրը. այս տեղ Զինաքեար զնտանը շինած, ջուրն ևս  
մէջը կապած է, որ յատակը ջրով լիքն մնայ. Այս զնտանէն  
Մօքոս որ հրաշիւք ազատեցաւ, 5 ժամէն Խօստայու լեռն,  
Խօստայու լեռնէն 10 ժամէն Մուզուրայ ջրի գլուխն. Մզու-  
րայ ջրէն ևս մի օրէն Վեօկէոիկ. ուր պատահեցաւ քառա-  
սուն մանկանց աստի ևս 3 ժամէ Դանիէլ ձգնաւորի այրը,  
աստի 7 ժամէ Սնտամու քարի վերան, Սնտամու քարէն ևս  
3 ժամէն Սարու դայան, ուր Չեչել չեքքեղին հետ խօսեցաւ.  
աստի մօտ էր հոչակաւոր Բոինչ ծառն, որ Խոզաղաճի աղ-  
բիւրին վերայ էր, կիսուակէս չորացած, Մօքոսի աղօթիւք  
կանանչեցաւ. Բոինչի մօտէն բարձրացաւ բերգն և աղատեց  
սուլթանը և խալանտարն առաւ, Տէրաղբիր Մրզէն, Բաշաղակ,  
Մերձուժէկ, իջաւ Տերեւլի, ուստի Ս. Տիկին տարաւ.



Դ.

Մ ն տ ա մ :



Մտամ Մազին թագաւորի տղան էր ու շատ կը յրիճ. իր պապու մինչ քէն ըրըց, պապու քաղքին քով բարս լեառան գլխի քարին մէջ բնակուաւ, իրան էրկու մարդ ունէր, էտը կերթային, հաց կը բերէին, կուտէր: Հոտի մի ամիս ղգըր մընց, անըուաւ (համբաւը տարածուեցաւ), ըսդիուն, ընդիուն թոփեցան գլխը. էտը իրա պապու սայմանի գեղաննուն հաց կը բերէին, էտոց մէջ խելօք մարդ մի կար, ըսըց Մտամին:

— Պապուգ սայմանէն բան մի բերէր, ժողովուրդը կը գանգտի, պապդ կը լսէ:

— Հպի ուր էրթք, ինչ ընըք, տուն տեղ չունիք, անօթի չպտի մնըք:

— Լամբբայ թագաւորի սայմանէն կը բերիք: Ելան, տաս ետեա, հինգ ձիաւոր գցին, զարկին Լամբբայ սայմանէն բերին, իրանց համար վախտ մի սպրուստ էրին:

Իմաց էղաւ Լամբբայ թագաւորը, թուղթ գրեց պապուն Մազին թագաւորին: — «Բու տղան իմ սայմանը կաւրէ, կուտէ, տղադ էկը զաւթ կինիս, էրէ. չես էնը, կը զինիմ, քաղաքդ կանցնիմ:» Մազին մարդ ճանփեց տղին. — «Էադ բնիթինդ թերկ կինիս, էրէ, չէնը սայմանէս էլիւր կորի, անընս մաւրէր:»

Մտամ լսեց օ Լամբբայ թագաւորը իրա պապուն գիր է ճանփեր, հերոտուաւ ըսըց.

— Կեցիր, պապուս գիր կը ճանփիս, հա, ես քու սայմանը անցընեմ (աւերակ դարձնեմ), տեսնըք ինչուր կըլլի:

Մտամ 200 ձիաւոր, 200 ետեա հետը առաւ. գնըց, հասաւ Խղըխայայու լեառն. Լամբբայ սայմանի մարդիկը շատը էադ լեառը չատը կը զինէին, Մտամ քշեց գիշերը ինչ օ չատը կար, թալանեց, վերան ըրըց, առաւ էկաւ:

Ժողովուրդը Լամբբայ թագաւորին խնդիրը տուին:

— «Էաս էրկու տարի է Մտամ մեզ փլեց, մեր էրկիրը անցոց, Աստուծոյ սիրուն, ըսոր ափուցը միգի փրցուր:

Լամբբայ թագաւորը ըս հեղուն ձէան չհանեց, մարդ ճանփեց սայմանները պէյիլը. «Էնի սորուեր է, ըսըց, կինէ կուգայ, եա բունեցէք, եա զարկէք:»

Ամսուան մի սորա Մտամ կինէ գնըց, գեղ մի թալանեց. պէյուաճ մարդիկը իմաց էղան, առաջին կը յրեցին հազար հինգ հարիւր մարդ էին Լամբբայ մարդիկ, ջարդուան հինգ հարիւրը:

Խապար գնըց Լամբբայ, կաղտաւ, մնըց, իրա իրա ըսըց.

— «Էնի սորուեր է, կինէ տի գայ:»

Լամբբ պատրաստ տեսաւ, գնըց Շիլկայ ձորը պէյվեցաւ:

Շիլկայ ձորի բոլորը մէշէ է, կէսը ձորի ընդին, կէսը ըսդին. ձորը թեթեւ (միջակ) ջուր է, գարունը մարդ չկրնը անցնիր:

Մտամ մի ամսուան սորա առաւ իրա մարդիկը, էկաւ օ էաս ձորուն տի անցնիր Լամբբայ սայմանը, իմաց էղաւ Լամբբ, հատաւ օ էջան ձորը, իրան դէմ բունաճ կուգան, չեն գիտեր թէ Լամբբ հոն է:

Մտամ իրա մարդերով ձորը անցաւ նը, թագաւորը ձինը հեծաւ, առաւ իրեք չաթալէ մըրախը (նիզակ) քշեց գնըց Մտամի վրան, զարկեց սրտին, հանեց, նետեց ընդին:

Հոսի մենծ կռիւ էղաւ, էրկու թարաւէն իրուր ջարդեցին. արընը սէլ էղաւ գնրց, ողջ մարդը տարաւ: Սնտամ օ զարկուաւ, իրա մարդիկ փախան, լամբբայ մարդիկ ընկան էսոց էտեւ, կէսը ջարդեցին, կէսը փախուցին. պրծնողը ամեկը տեղ մը գնրց գուս էլաւ, էղան մուկ:

**Չիման թագաւորէն օգնութիւն:**

Սնտամ օ զարկին, մի տարի անցաւ, Մագին իրա տղայի վճիռը (վրէժ) առնելու համար շատ ասկեր թոփեց, լամբբայ վրան գնրց, սայմանները անցոց: լամբբ եօթ հազար ասկեր ուներ, կռիւ ըրրց. ջարդուան, մնրց հինգ հազար. իլաճը (հնարք) կը յրուաւ. թուղթ ճանփեց Բելգ թագաւորին:

— Մագին թագաւորնէ էկեր, Շիմչիրն ու Չինաքեարն էալ հետը բերեր, իրան սայմաններն անցոցեր. ինչ կինիս էրէ, միզի օգնութին հասուր օ ըն աստուածներուն ափուցը ազատիս:

Բելգի սուլթանը ըրրց. — Ըգ Շիմչիրն ու Չինաքեարնէ օ մեր բերգերը փլեց, ժողովուրդը ջարդեց. ինչ մարդ ունիս, օգնութին հասնիս:

— Սուլթան խորու բան մտածեցի. չըսիւր գրենք Չիման թագաւորին, օ գոյ միզի օգնութին:

— Սկայ Չիման մի տարուայ ճանփայ է. լամբբ հիմայ շատ նեղ վիճակի մէջ է. ե՞ք տի գան, օգնութին հասնին, մեր վճուի տ' առնին:

— Մօքոս էլեր է, գիր մի կուտանք, կը հասցնէ Չիման թագաւորին:

— Մօքոսը վեր տեղնէ, օ գիրը առնէ տանէ.

— Աբրահամ օ խամայելը գուս ըրրց, աշխարքը օլրտաւ. էկաւ Մուզուրայ ջրի վրայ խալի խարապային մէջ բնակուաւ. էան տեղ խամայելցիք ըսուեցաւ. Մօքոս էալ ընտեղ փախաւ, օրը ֆառլ մի գուս կելնայ. գեղի բոլորը կուլայ կոլրտի, կը մնայ էտոր տունը կը բնակուի. աշխարհ իրուր է խառուեր, բնակարան չունի:

բերգը ընկաւ, փլեցին, ժողովուրդը ջարդեցին:

Մարգ ճանփեցին, Մօքոս էկաւ գլոխ տուեց թագաւորին ու սուլթանին, կճկաւ պագեց օտքերնին:

— Մօքոս, էաս գիրը Չիման թագաւորին տի հասցնիս:

Մօքոս մօրուքը բռնեց, ալիքը ջուեց տուեց. ձեր խնդիրը կը կատարիմ, ըրրց:

Մօքոս վեր տեղ էրթը Չեչել չերքեղ հետը կերթը. ինքն էալ թուղթ մի գրեց, բերքեղին<sup>1</sup> շնլին կախեց. գառ մի մորթեց կերցոց, ճանփու գրեց:

Չեչել չերքեղ հաւալանմիջ էկաւ, էրկնուց կէսը էլաւ. զինք թող տուեց վէար, մի տարուայ ճանփայ մի աւուր գնրց, էջաւ սարայը թուղթը թագաւորին հասոց:

Թագաւորը գիրը բացաւ կարդաց, չեչել չերքեղ նոտաւ ճագին վրայ,

Թագաւորն ու սուլթանը պաշայեցին լացը:

Չեչել չերքեղին փորը կշտացուցին, ճանփու գրին:

Չիման կանչեց վեղիրնու Նագիրը— կը զատէք

լաւ կը յրիճներ. քառսուն հազար տղաք կը հագցնէք

գրրիս, կերթը, Բելգ թագաւորին իմտատ կը հասնիք:

Օ թեղ չկատարէք, էալ էաս էրկիրը չլտի տեսնրք:

Էլան բարեմնա էրին, ընկան ճանփայ էկան.

Թագաւորը էլաւ թամաշայ, գցողին օրթնեց:<sup>2</sup>

Ինգուր կերթը էան լւան էալ տի գաք ըրրց:

**Չինաքեար Ս. Տիկինայ վերայ կը յարձակի:**

Բելգ ինքը Չինաքեարի հետ լաւ էր. ալի կերթը կուգար, աչքը ճանփան էր թը եք օգնութին տի հասնի Չիմանէն: Չինաքեար ամեն թարաւ մարգ ունէր. լսեց օ Մօքոսի Չեչել չերքեղը նամակներ կը տանէ:

1 Այս հաւքի գլխուն վերայ մազ չլինելուն իբր քեչել (գնդակ) չեչել չերքեղ կասուի, Մինաս երբեմն Բերքեղ անուն կտայ, որոյ համար ես ես քանի տեղ նոյնը կրկնած եմ.

2 Չիման թագաւոր գիտէր թէ Բելգ գեռ կռապաշտ է, կասէ Մինաս, եթէ գիտնար թէ Մանուկ տղին կը հաւատան, իմտատ չպիտի զրկէր:

բերէ, կինէ ասկեր՝ կը թօփէ, կուգայ Սուբ Տիկինայ վրայ, օ Բելլ թագաւորին ինչ օ մնացած է անցնէ, վերջացնէ, Բելլ լեառն էր բանէ խապար չունէր. Շիմ շիր թագաւորի սուլթանը բարեպաշտ էր, գիր ճանփեց Շուշա սուլթանին իրա թագաւորէն գողտուկ. «Գլխուդ ճար էրէ, մի բերդ մտիր, քիզի պահէ, գէ Բելլ ավէն դառնայ, ըն անասուած Ձինաքեար ասկեր թօփեր, էկեր հասեր է սայմանին կէսը, օ գայ Սուբ Տիկին փլէ, ուխտ կուգամ, կրսէ, ջրլի ջրլի հաւատաս, քիզի տի բունէ, գուռնին չբանաս, կունաս նը զարկ:»

Սուլթան օ գիրը կարդաց, փուսուլան (գիտակ) առաւ, էլաւ պուրճի քէօշկը, օ բարս էր, փուսուլան գրեց աշխը, տեսաւ օ էրկնուց ասլին հասար կայ, էադ էասիլըրին չկայ, ըսրց.

— Տէմիր զըռ ձինը հեծեր, մու լաթերը հագեր է, Օսկի քեմերը կապեր, կարմիր զափուլթը վրան Չաթալ թագը գլխը գրեր էրեսը արաբ զարճեր է, կանչեցէք Մանուկ տղին . . . :  
Թագաւորս գնըց Քեալէու լեառը կէյիկան ավը. Մէկ տիուն զամ կուգայ ներսէս, մէկ գիուն ֆէրեատ կուգայ սրտէս,

Սիրտս կը գողայ, գլխուս էալ կելլա տուման, Ընկերիմ արընէ ծովը, կը լողամ, կը սեմ-եաման. Սրտէս արին է փրթեր, գետի պէս կերթայ. կը կանչիմ Մանուկ տղին . . . :

Շուշայ սուլթանին խապար տուին թէ Աղսուլյա կամուրջի դռները քակեցին, սուլթանը ըսրց,  
— Աղսուլյա կամուրջը կոյրեցին, քակեցին.

Մոքոսը ուր մնըց, Մօքոսը ուր մնըց. Պապուս մինէ միզի օգնութին իմաստ չբերըց. Գիրս հասուցէք ժամկոչին, օ հասցնէ թագաւորիս: Բերդը կու բերդի դռան վրայ պղտի մատուռ մի

1 Ասկեր զինուոր ասել է, որ Մինաս էասկեր երբեմն նաև ասկեր կը հչէր, որոյ համար ևս միօրինակութեան մէջ չպահեցի:

կայ, ճանփան էրկու է, մէկը կերթայ Սուբ Տիկին, մէկն էալ բերդը, Ձինաքեարի ասկրին կէսը ջուրի վեր էկան, բերդի բոլորը չեվերմիշ էրին, Շուշայ ըսրց.

— Ձինաքեարի ասկերը բերդի չորս գին առաւ կայնաւ, Պայրախտարը հասաւ Սուբ Տիկին,

Գիրս հասուցէք ժամկոչին, օ հասցնէ թագաւորիս: Ժամկոչը գիրը առաւ գնըց, սուլթան հաեաւ ըսրց.

— Ահա Սուբ Տիկինայ ցորեննուն գիզանը վառեց, էան անուստուածը ժամկոչը կրակին մէջ նետեց.

Թագաւորս խապար չունի, մնըց Քալէու լեառը. կանչեցէք համամճու տղին, օ խապար տսնի:

Համամճու տղան գիրը առաւ գնըց օ ճանփին բունած էին. — այ հայ, ըսրց սուլթան, համամճու տղան Մանին օլրուկի աղբրի վրան իրեք տեղով օխով զարկին ձգեցին, շնկն թրով կըյրեցին. մարմինը ջուրը ձգեցին, ջուրի վէար էկաւ համամին դուռը.

Սուլթանը էաս օ տեսաւ — ես վառուայ ըսաւ: Համամճու կնիկ՝ վազեց օ ջուր բերէ, խմցնէ.

Ձրին քնարը տեսաւ իրա տղի մարմինը, 0 ճանչեց, խենդրցաւ, ճնչեց, Քալէու ճանփան բունեց. պուսալէն գնըց, ըռաստ էկաւ թագաւորին:

Բելլ թագաւորի ճանապարհը ըննուած:

Թագաւորը ըն գիշեր էրազ տեսեր՝ Ծալտաշին էր դարճեր. համամճու մէարը դահա չէր տեսեր, թագաւորը Ծալտաշու քարերը ձգեց, 2 օ տեսնը թէ իրա բաղդը ինչ ցունց տի տայ. կը հայի օ քարերը սաճա-յաղի կայնան. — հայ վախ, ըսրց, ըն անասուածը կինէ

1 Համամճու տղան թագաւորը կը լողացներ, մայրն ևս թագուհին, որոց ցեղը այժմ ևս կան, Համամճի օղլի կասուին. ի վաղուց երևելի ընտանիք եղած են. որոցմէ մի ծեր հայերէն շատ երգեր գիտէ.

2 Ճանապարհի վերայ մի տափակ քար է, որոյ վերան երեք մանր կլոր քարեր կան. Ճանապարհորդներն մինչև ցայս օր ևս այս քարերը ձեռներն կաննեն տափակ քարին վերայ կը ձգեն որոյ կայնուածքէն գուշակութիւն կաննեն թէ իրենց ճանապարհը յաջող է:

միգի վրայ կռիւ է եկած, ըսրց ջըսըց՝ Համամճու-  
մէարը հասաւ, ըսրց ճչալով.

— Ինչ կինիս, Տերեղի 500 ձիաւոր էառջիդ կըյրած՝  
քիզի տի պանին. թեզ գլխուդ ճար էրէ. սուլթանը  
շատ նեղնէ:

Թագաւորը ըսի օ լսեց, շուարաւ ըսրց:

— Մեք մնացինք հոսի, ինչ տ'էնիք, մի նամակ ճան-  
փէ Սեւայ մայրաքաղաք թուրկան, <sup>1</sup> մի նամակ Խըշ-  
լան Գիրգոր բէկին, <sup>2</sup> մի նամակ Մաստարու Գեանա-  
նին, <sup>3</sup> մի նամակ Ուռեկս թորիկ <sup>4</sup> կըյրի՞ճ իշխանին,  
մի նամակ էալ Խալաճուխայ Մարտիրոսին, <sup>5</sup> օ թո-  
փին գան, իլաճ մի ինին:

Վեզիրը նամակները գրեց, իրանց տեղը հասոց,  
իշխանները ամեկն էալ Բելքին շատ կը սիրէին,  
պատրաստ տեսան, էկան իմտատ, գիշերը Չինաքեարի  
ասկերը քնուկ էին, զարկին կոյրեցին ընցան. Բելք  
գնրց հասաւ իրա բերդը:

Լամբը Մազինի կռուու մէջ եարալու էղեր էր.  
էնոր էալ իրեք թագաւոր վրան էկած էին ու ջրերուն  
քնարը բռնած. ժողովուրդը նեղը մնացած թոփուան,  
էկան Լամբայ քով կուլան, թագաւորը ըսրց:

— Տօնիկ իշխանին խապար տուէք, օ խապար հաս-  
ցընէ Բալ թագաւորին.

Լամբը թագաւորի սուլթանը ըսրց.

— Սեւ ամպը էլաւ չային ջուրը ծով կըյրուաւ,  
արզը էկաւ, աշխար պիթուն սեւ (հեղեղ) էղաւ,  
Տօնիկ իշխանը ինդուր խապար հասցնէ Բալ թագա-  
ւորին. ըստե վե՛՛վ կայ, նամակ տանէ Տօնիկ իշխանին:

Կարճ պոյով պզտիկ բուճուր կըյրի՞ճ տղայ մի  
կար, անունը Կօստօ էր, գիշերը առաւ գիրը. գէ ասկրի  
միջուն էլաւ, գնրց նամակը հասոց Տօնիկ իշխանին:

Կէս գիշերին Տօնիկ իշխան բերդին առջևուն  
լողալով ընցաւ. խապար տուեց Բալին, Բալ քառսուն  
հազար ասկեր ունէր, առաւ. քսանին կարմիր զրրիս,  
քսան հազարին էալ սև զրրիս հագոց, հեճաւ Արաք  
ձինը, պատրաստ տեսաւ էրթըլու, սուլթանը ըսրց.

— Կէս գիշերին ըս ի՛նչ է, թող լսնա, անտա.

Թագաւորը հերսոտաւ ըսրց.

— Էյ կիտի Արաք ձինս, մի գէնկու զարկեց, քշեց  
Դենկա գլխը <sup>1</sup> հասաւ, հատաւ ըս դիուն ջրին ըն-  
դին սալթ մարդ է շարուած, էրթողը կը զինին օխով  
ասկերը թոփուան, ինքը ընկաւ առջևնին, հասաւ  
ասկերը <sup>1</sup> բերդին, տեսան օ ջուրը էլեր, ծով է  
կըյրուեր, անցնելու ճար չկայ, Բալ կանաչ կարմիր թա-  
գը գլխուն վէար առաւ, ձեաւըը բացեց, աչքը տըն-  
կեց էրկինք. — կը ինդուրիմ Մանուկ տղին, օ գայ  
հասնի միզի, ըսրց, Արաք ձինը զարկեց բերդի առ-  
ջևու կօր, Մանուկ տղան օգնական հասաւ, ձինը  
անցաւ. գէ ծունկը էլաւ ջուրը: Բալ ձէան տուեց:  
— Կանչեցէք Մանուկ տղին, թրերը չլպղուցէք:

1 Սինամ թագաւորի որդին էր Թուրիկ, որ Սեւայ քա-  
ղաքը կը բնակէր, այս քաղաքն շատ հին է, Խարբերդէ 3 փամ  
արևմտեան կողմն գէպի Մատեն, ուր պանդոկ կայ ի վաղուց  
մնացած, «Սօբոսի վախտին շինած բան է» կասէ Մինաս:

2 Գիրգոր բէկ զօրավար էր, այս վայրն կը բնակէր:

3 Բալ թագաւորի որդին էր, որ միշտ կը միանար Թու-  
րկան ու կերթային Մաստարա լեանն որսի, այժմ ևս այս  
լեոն որսատեղ է:

4 Ուռեկու իշխանը ունէր հետևեալ գիւղօրայքն— Աւտօ-  
նին, Աարաքիլիսէ, Չոչեկ, Աղաճան, Թուֆան, Բարբիր ևլն:

5 Սա ևս մեծ իշխան էր, ունէր իշխանութեան ներքև  
Մրզէն, Վասկերա, Տէրաղբուն, Դալեկ, Տօլամաճ, Սմախ,  
Խարեսիկ, Բաշաղակ, Նոր գեղ, Թանց, Լուսադառիճ ևլն:

1. Դենկայ գլխի Փիրինայ ջրի մօտ մի գիւղ է.  
2. Տօնիկ իշխանի տունը գետ կայ, կասէ Մինաս, մենձ  
տուն է, որոց մեծ որդոց անունը միշտ Տօնիկ է: Արգէն հայ-  
կական ընդհանուր սովորութիւն է այս, պապու անունը նորա  
թոռան վերայ կը գնեն, շատ անգամ ևս հօրը անունը կը գնեն  
երբ նա հօրը մեռնելէն յետոյ է ծնած:

խախտանիդ ձեռուանդ առէք, ջուրը կեչուտ է, կեչուտը՝ անցէք, կայնելու վախա չէ, Մանուկ տղան միգի կը կանչէ:

Պիթուն թոփուան, իրուր էտե շարուան, կեչուտը անցան, տալմիշ էղան կուռի, իրեք օր, իրեք գիշեր Տօնիկ իշխանի բերդի բոլորը կուռ կինէին, լէաշերը բերդի գլխուն պարա էլաւ:

**Չիման թագաւորէ օգնութիւն հասաւ**

Բելգի չարէն կը յրաւ, բարս տեղ մի էլաւ, վորթա կը զինէր, փուսուլան աչքին գրեր կը հայիր թէ իմտատ կուգայ ջի... էն, տեսաւ օ շատ կը յրիճներ էկան էլան, կէս ա շուան հասան, Մուրատի կարմունջը փլմուն էր, ջրի քնարը կայնան, անցնելու տեղ չէր մնացեր, դմբիկինին զարկին, Բելգ թագաւորին իմաց տուին:

Բելգ օ դմբիկի ձէանը առաւ, շատ ուրախացաւ, իրա ասկերը առաւ, էջաւ Մուրատի քնարը, քելլեկ կապեց, անցոց Սուբ Տիկին, ձիանը հօնի կապեցին, Սուբ Տիկին համբուրեցին, գցին հասան Մուղուրայ ջուրը, օ կարմունչնին վկած էին:

**Չինաքեարի պատրաստութիւնը:**

Չինաքեար լսեց օ Չիման թագաւորէն իմտատ էկած է, ետ դարձաւ, պատրաստ տեսաւ, օ առաջ լամբայ վրան էրթայ, աղբրտոցը խաբար ճանփեց, Չիման օ օտարական է, ըսրց, իմտատ կը ճանփէ, դուք ի նդուր աղբէար ըլլիք օ, իմտատ չգաք:

Էդոնք հոտ թող մնան. Շիմշիր օ լսեց, Չինաքեարին մարդ ճանփեց, Չինաքեար էալ Մագինի, Մագին իօստայու լեռնէն ընցաւ, Մուղուրայ ջրի գլխուն էկաւ. շիտակ խարակետիկ անցաւ, հօնի պատուէր

1 Այժմ ևս այս վայրն անցք է՝ Արաբ ձին ջուրը հրաշիւք անցնելուն (Փերինայ ջրի վրայ), Արաբ կեչուտի կասուի:

տուեց— Մուղուրայ ջրի գլխուն գէ Մուրատ գետը, ջրի մէկ ճոթը իրար խառնուած տեղը խարակետիկ թող պահեն, մինչև թագաւորնին իմտատ հասնին:

Մագին մարդ գրեց օ ջուրը չանցնին. Սրճովու կարմունճը փլեց, կեչուտը բռնեց, — օ գան զարկէք, ըսրց:

Շիմշիր ասկերը առաւ, Չինաքեարին հասաւ, էրկուսը մէկ տեղուան, իօստայու լեռնէն ընցան, Մուղուրայ գլխուն խարակետիկ էկան, էլան Չանախչուայ սրթը, իրենք էալ զարկին դմբիկինին:

Մագին գէմ գնրց, իրուր հետ հաշտուան Շիմշիր, Մագին, Չինաքեար մէկ տեղուան, Բեամ էալ Հետերնին չորս էղան, Գցին Մեղկերտու բերդը մտան, Ասկերը տկու գէօրը լեցոցին, իրենք էալ բերդի մէջ չատը զարկին, նստան, ինչ օ ասկեր կար լամբայ վրան բռնեցին, Չինաքեար, Բեամ, Շիմշիր, Մագին լամբայ վրան գցին, Բերդին բոլորը կը յրեցին, շատ մարդ ջարդեցին:

**Չինաքեար պատերազմի մէջ կապանուի:**

Բելգ ու Շուշայ զորն հագած զուս էլան, Պատրաստ տեսան ասկերը Մագին թագաւորին. պօռստանը փչեցին, Սրճովու կարմունջը անցնելու էղան, Շուշայ սուլթան թուրը կապմուն, խախտան էալ շնին անցրմուն, մզրախը փեճը դրմուն, քէյլան ձին էալ հեծմուն, ասկրին առաջ ընկմուն:

Գնրց կարմունջը փլմուն տեսաւ, ջրի վէար դարձաւ, տեսաւ Չինաքեարի ասկերը օ ջրին քնարը կը պէյէին, հօսի կուռ էրին, իրուր օխով կը կինէին:

Շուշայ ջուրի վէար գնրց, ձիովը լողը զարկեց, անցաւ Չեչել չերքեզին կեչուտը, ասկերն էալ առաւ

1 Այս անցքի ծայրն մի ժայռ քար կայ, որոյ վրան շարունակ կը հանգստանային Չեչել չերքեզներ, որոց անունով կասուի «Չեչել չերքեզին կեչուտը»:

էան եանը՝ պէք չիստանը օ սուլթանը տեսան, իրուր խապար տուին փախան. սուլթանը մէկ մէկ կը ջարդէր, էնոց արինը կը խմէր:

Աւլա գարձաւ Արաբ կեչուտին, Աուլախազ Թիւր Հասնելուն վրայ տուին. հոսի իրուր խառուան. Շուշայ սուլթան ասկրին առաջ անցաւ, քշեց գնըց, իրա ասկերը զըրիս հագած էին, էնոց թուր չէր բանէր. իրանք կը զինէին, կը կըյրէին, իրեք հազար պէք չիստանը մորթեցին, մէկը փրթաւ. հասաւ իրա թագաւորին, ըսըց. — աշխարհնէ աւիրեր. ես իմ մնացեր:

Բարկացաւ Չինաքեար, ըսըց իրա մարդոցը:

— Թեղ թափեցէք (հաւաքուեցէք) Այաշնայ դէօրը. մենք էալ կը հասնիք ձեր էտեուն:

Ասկերը առաջ ընցաւ. Չինաքեար էալ էտեուն Հասաւ. Վամբայ դուրնուն գէմ բռնեց.

Մէկ թագաւորին էալ Արաբ կեչուտին ճանփեց:

Բալ գօրեց, քշեց Չիման թագաւորի ասկրին հահասաւ, տեսաւ մի խրա ձիով կերթի կուգար, ասկրին առաջ ձինը կը խաղցնէր, էան լմանը օ լեառտանը, քարերը ջրերը, ծառները, թփերը դող առած էին, գետնի կիրիրանին, թռչունին էալ էին սարսափած, էադ ձիաւորը Շուշայ սուլթանն էր, լեառտանը գիւրը գիւրը կը դողար առաջը:

— Տեսնայի Չինաքեարին կըսէր, վճիռս ձեռօքս առնէի, էալ բան չէի ուզեր:

Այաշնայ դէօրը իրուր գէմ առին, մենձ կռիւր պաշայեցին, սուլթանը տասը հազարի առաջ անցած Չինաքեարին կը փնտրուէր:

Մօքոս ընկաւ առաջ, սուլթանը տարաւ Օրղուն դափուսին. թուղթ գրեցին, Ձեչել չերքեզ դաւան ծկուն ներս սէսպեցին (թոյլ տուին, արձակեցին):

Վամբ ներսը փակուած կուլար, թուղթն օ տեսաւ, սիրտ առաւ. աշխարքը նոր մօրը մինէ էղաւ, էլաւ ձինը քաշեց, Օրղուն դափուսին բացեց.

— Վամբ, ըսըց Շուշայ սուլթան, ասկերիդ ըսէ թող գան. Չինաքեարի տեղը ցունց տան:

Վամբ ու Շուշայ ձինը քշեցին, Չինաքեարի չատրին հասան, տեսան Չինաքեար հոնի աղբրին վրայ կը վազուեր կարմիր զըրիս հագածուն էր, զախանը եաննիվէար կախմուն էր, թուրը մէջքը կապմուն էր, մզրախը հոն գետինը զարկըմուն էր:

Շուշայ սուլթան տեսնալուն քիմի մի մզրախ նետեց, շնոցը քոքուն էնանկ զարկեց օ ծակեց, անցաւ. մի մզրախ էալ Վամբ նետեց, կըծոցը զարկեց. Չինաքեար կործաւ գետին, հոգին փչեց:

Հոն ասկեր ասկերի խառուան, իրուր հեա շատ կռուան, էղած է «անա բարա կիւնի» կարմիր արինը ողջ մարդը կը տանի:

Մուգուրայ կելլը քառսուն ու եօթը ջուրը. <sup>1</sup>

Շուշայ ձինը կը խաղցնէր Վամբայ դէօրը.

Շահգատէ էր Վամբայ սուլթանի անունը.

Սրմա էր Բալի սուլթանի անունը.

Նավրէզ էր Չինաքեարի սուլթանի անունը.

Շահգատէն ու Շուշան ուրախացան.

Սրման աշխարքը մօրը մինէ նոր էղաւ.

Մօքոսն սւ Ձեչել չերքեզ կենձրցան.

Պիթուն աշխարք Չինաքեարի ափուցը տինձրցան:

Աշխարքը լուսաւորուաւ. պիթուն դարձան.

Չինաքեար զարկուաւ, Նավրէզ տամլա ըրըց մեռաւ.

էսսկերը գլխուն թոփուան, Շիմշիր բռնուաւ.

էզիկ Չինաքեարի սայմանի վրան ուրախացաւ.

Չորս թագաւորէն մնըց Մազին, էան էալ թաթխուած արընին.

Իրեք օր՝ իրեք գիշեր լուանկան կապուաւ.

Մարգ չմնըց, աշխարհ պիթուն թեւեֆ էղաւ:

Չինաքեար օ մեռաւ, դուրսը մնըց օրթնոտաւ.

Ասկերը տարտղնան, աշխարք արըջ պարըջ էղաւ (խաղաղութիւն):



1. Այս տեսակ ոտանաւորները եզանակով երգած է Միւնաս:

Թագաւորը հերստտաւ.— տարէք, նետեցէք լեղի աղբրի քովու օդան ըսրց:

Փանփուլ մնրց հոնի քառսուն օր հապոյ ըսրց: — Աղբէր ըսելով ըսելով դէրտ (հոգս ցաւ) փէյտայեցի. Ըս օր քառսուն օր է հապոսի մէջ մնացի:

Մի տեսնայի Պէնկիպօզս, պագնէի կուսնու նայր, Պէնկիպօզս իմ սէրս— իմ սրըս ու սրտաշս է, Հեր ուր էրթմ նէ, իմ ճանտան եօլտաշս է, Էկր գետին էս, Պէնկիպօզ, Էկոյ, հասիր մենգիլով, Էկր էրկինքն էս, Պէնկիպօզ, էջիր խանտիլով, Ուր մնացիր, Պէնկիպօզս, քառսուն աւուր ճանփան իրէք օրը: Էր կըյրէիր, հիմա սիրտս կը ճաթի, աչլընուս արին կը կաթի:

Պէնկիպօզ օ լսեց, սահաթին հասաւ. Փանփուլ հեծաւ, էլաւ առաւ իրէք հարիր ասկերը, գնրց Սօսեկու լեառը, Էգիկ էալ ասկերը քաշեց Ղորտունայ լեառան գլխը, Էկան իրուր դէմ, Էգիկ հերստտաւ ըսրց.— իրէք հարիր ասկեր ունի, Էկեր իմ մինէ սայման կուզէ:

Գիշերը փարզաշտաշու գեղի ու Ղորտունայ գլխու կեչուտը ընցան, Զմարու եաղին կոիւր մտան, տըվնուն առաջ փանփուլ քշեց, գնրց, ճանփան գոցեց, չթողեց օ ասկերը վէար էջնայ:

Էգիկ ասկերը շատ էր, վրայ տուեց. — Մի վախէք, տղաքս, պողաց սուլթանը, էգի դարերնիս է (վերջին ճգնաժամ), ես տի տաք ես տ'առնիր:

Էգիկ վրայ տուեց, Ղորտունայ դէօրը պաշայեց կոիւր. Ակուկ կուրի մէջ գարկուաւ, Փանփուլ էրկինք հաեաւ, Աստուած կանչեց.— իմ դատը գու տեսնաս, Աստուած երկնաւոր:

Փանփուլ հաեաւ օ Էգիկ լեառնի վէար կէջնայ կըճկաւ, իրա Պէնկիպօզ ձիու օտքը պագեց.— հա Պէնկիպօզ, ըսրց, գու իմ էրետը տի ճերմկցնիս:

1 Ակին Թագաւորի գերեզմանը Զիմարայու տակն է, կասէ Մինաս, մի ժամ Ղորտունայ վերգին, բարակ ձորի մի քովը. իրէք չորս Թագաւորի գերեզման էալ կայ, կասէ, հոն:

Ե.

Փանփուլի ու Էգիկայ կոիւր:



Ինաքեար օ մեռաւ սայման, էգիկայ մնրց, Ակուկ Թագաւորի Փանփուլ սուլթանը գնրց սայման ուզեց Էգիկայ մինէ, «Սայման չունիս, Զինաքեարի սայմանին կէսը ինձի կըյնի» ըսրց:

— Զիմ իտար, ըսրց Էգիկ, ափուցդ գալաճը էրէ:

— Ս սայման չես իտար նը փինկեանը տուր, ընի զաթի իմն էր:

Կեանը տուր, ընի զաթի իմն էր:

1 Արարտանու արար մի ձուկ բռնելու ժամանակին Թոռով ծովուն հանած էր հրեղէն ձին մի, ընոր կերածը խուրմա էր, արարը լսեց օ Զինաքեար շատ մենձ զօրքա Թագաւոր է. 40 էլ խուրմայ բարձուց, ձին էալ առաւ Էկաւ օ Զինաքեարին փեչկէշ տայ, Էկաւ հասաւ Ակուկի բերդը. հոնի գոնախ էղաւ:

— Զըլլիր օ էգոք ինձի տաս, ըսրց Ակուկ.— Զինաքեարին տի տանիմ հետիչէ, ըսրց Արարը:

— Թագաւոր մէալ էս իմ, ըսրց Ակուկ. էնի ինչ տուեց, էս էալ կուտամ, ստակով բան մէ:

Խանտուրմիշ բրբց, առաւ. արարը կէս գիշերուն մեռաւ. Զինաքեար լսեց, ձին ու խուրման ուզեց.— Ինձի է փեչկէշ բերբեր, ըսրց Ակուկ. Զինաքեար հերստտաւ, Փինկեանու գեղանը էադ ձիու ու խուրմայի տեղ զաւթ ըրբց—գէ հիմա էալ Փինկեանը Տիփրիկու վրայ է, կասէ Մինաս:

Փանփուլ սուլթան տղի զլլըրին մտաւ,  
 Թուրը կապեց, զալխանը ձեռքը առաւ,  
 Պէնկիպօզը հեծաւ, մզրախը փեծը գրաւ,  
 Իրա սակերը առաւ, քշեց առջ ընցաւ,  
 Զիմարու եագին կռուի մէջ մտաւ,  
 Էալ չեն ջոկուիր վեր մին վիրայոց է (որ մին որ  
 կողմից է)

Եագուին օրթալախը Էզիկը տեսաւ,  
 Պէնկիպօզին Էանանկ զէնկու մի զարկաւ,  
 Զէնկուստանը փորու մէջ իրուր առաւ,  
 Մզրախը նետեց Էզկայ միջացը, մէջքը կոյրաւ,  
 Մի մզրախ էալ կրծոցը նետեց, Էզիկ կործաւ,  
 Լուրտունայ գէօրը արինը սէլ էլաւ,  
 Ասկերը ըս օ տեսաւ, փախողը փախաւ,  
 Բռնուածն էալ առաւ, Եսիր ասարաւ,  
 Ինքն էալ թագաւորին սարայը էլաւ նստաւ:  
 Փանփուլ ինք իր մտօք անցոց, — իրեք Հարիր մար-  
 դըս ընցաւ (անհետացաւ), էնոց քսան Հազարէն  
 Հազար մնաց, ետ չկայնաւ, կռիւ ինելէն Հասաւ Զի-  
 նաքեարի սայմանը, մտաւ էնոր սարայը, պէքծիտանը  
 փախոց, նստաւ թախտը, առաւ Զինաքեարի սայմանը:

Արզուն եւ Փանփուլ:

Արզուն էաս օ լսեց, մտօքը անցոց. — Մի կնիկ  
 ըլլի, առնէ Էզկայ սայմանը, ինձի ամօթ չէ: Ասկերը  
 թոփեց, էկաւ Էզկայ սայմանը, Փանփուլ օ լսեց, թո-  
 փեց իրա կըյրիճ ձիաւոր մարդիկը:

Բարս լեռան գլխուն տեսաւ Արզուն օ Փան-  
 փուլի ասկրի վրուն կէծակ կը թափի, քաշուեցաւ  
 ետ փախուն, պէյուեցաւ, ըսրց.

— Հնարք չկայ Փանփուլի հետ կռիւ ինելու, մի պա-  
 ռապ ճանփիք, կըլլի օ ձեռաք ձգինք, պանիք,

— Փանփուլի քով մարդ չէրթր, ըսին, վե՛լ օ էր-  
 թայ, գլոխը կըյրել կուտայ, ընի եօթ գլխանի դե է:

— Փանփուլի խալայեխը փախեր իմ, քով էկեր է,  
 էնի վճիռ տի առնէ, իրկենք թող էրթայ:

Հարիր քառսուն ստակ տուին խալայեղին, ըսին.

— Գնա, բելքիմի Փանփուլին օլըցնես, սարայէն  
 Հանիս: Պապաուր գնրց:

— Դուք էկեք, պատրաստ տեսէք, ըսրց, Արմըտանու  
 ձէօրը,

Պառապը Հասաւ Փանփուլին, գլոխ տուեց, աղա  
 չանք ըսրց, օ կինէ իրան ընդունէ իրա քով:

— Դու լաւ կնիկ չիս, ըսրց Փանփուլ, հերսոտաւ, քա-  
 նի օ քովս էկեր էս, հայտէ բաղշեցի քիզի,

Քսանը չորս սահաթ մնրց, քէնը մէկ թարաւ ձը-  
 գեցին, արշ պարշ էզաւ:

Փանփուլ որոպայթի մէջ:

Սուլթան սէկ օր ըսրց — Ես շատ հիւանդ իմ.

— Էաս խորուն ձէօրը՝ էրթս նէ, հոնի անմահա-  
 կան աղբիւր մի կայ, տանիմ հոնի, օ սիրող հովի:

Մտուանը փոխեցին օ գան.

— Սուլթան ապրած, ըսրց պառապ, դու հիւանդ  
 իս, խալխանը շնոցդ վէար առ, թուրք քակէ.

Փանփուլ քակեց, պատնիվէար կախեց, պառա-  
 պին հետ էլան կետենեկու խորուն ձէօրը, գցին հո-  
 նի էզած պաղ աղբրի վրան:

Սուլթանը ա՛խ քաշեց, ջուրը ձեռօքը խմեց.

Վրան թմրութիւն էկաւ, գետնի վրան ընկաւ.

Պառապ Փանփուլին խափեց, փորձանքի մէջ ձգեց,

Զուրը շատ սերթ էր, թմրութիւն կը բերէր.

Ինդուր մարդ խմեր նը, կը թմրուեր:

Պառապ ձէօրի գլխու քարի վրան էլաւ,  
 Արզունի պէյուած մարդօցը ձէան տուաւ.

— Սարայէն էջօցի, դէ էջօցի,

խորուն ձէօրը հասուցի, դէ հասուցի,

խմուցի պաղ ջուրը, դէ պաղ ջուրը,

Թմրուաւ, մնրց Փանփուլը, դէ Փանփուլը.

1. Մինա՞ ձօրը ձէօր կը հնչէ, որ մի անգամէն պիտի  
 հնչուի:

Փանփուլը խորուն քուն մտաւ, դէ մտաւ.  
 Փանփուլը թմարուաւ ընկաւ, դէ քնաւ.  
 Հասէք ժրմնէք, օ փանփուլը բռնէք.

Արզուն թաղաւորի պէյված մարդիկ էաս ձէանը  
 օ ա՛ն, ձէօրի բոլորը բռնեցին. տեսան փանփուլը  
 պառկած, շատ վախցեր էին, չէին կրնր մօտենար. գի-  
 տէին թէ քնած է, պառապը քանի կը պոռար  
 թէ թմրած ընկած է, չէին հաւատար: Մարդ չէր  
 կրնր մօտենար, գիտէին թէ իրենց տի ուտէ:

— Կեցէք կըսէր Արզուն, օ քնուն արթըցաւ. վրան  
 օ սիւյ չեղաւ, բռնելը ղօլայ է.

Փանփուլ քնուկ թմարմուն ընկած վախտին  
 ինք զինք արնէ ծովի մէջ տեսաւ. թւերը ձգած  
 կը լողար, քնարը չէր կրնրը էլը. աչքը բացաւ օ  
 աղբրին վրայ է, վեր թռաւ, կանչեց պառապը, հա-  
 տաւ օ պառապ չկայ. լեռն ու լեանջ էասկեր է կը յ-  
 բուեր, ա՛խ քաշեց, ըսրց.

— Ախ պառապ, էգոր համար թուրս միջացս քակեցիր,  
 Ախ անիծած պառապ, խալխանը շնըցս հանեցիր.  
 Փանփուլ կը կանչէ՝ հէյ եաման, հէյ եաման.

Լեռն ու լեանջ կը յրուեր է ձիով ու ետեան,  
 Թուրս տունը պատնիվէար կախմուն է.

Օսկի խալխանս փենջիրէն դրմուն է.

Մզրախս հոնի գետինը նետմուն է,

Պէնկիպոզս ախուր կապմուն է,

Կը կանչիմ Պէնկիպօզին, — հասիր ինձի օգնութան:

Ասկերը քիմին կը մօտենար, քիմին կը հեռընար,  
 Փանփուլի կը յրիճութենը տեսեր էին, վախը իրանց  
 սիրտն էր:

Զիուն մազը փանփուլի ձեպն էր. չախմախ զար-  
 կեց. թիլը տուեց կրակը, ձին հասաւ, հատաւ օ սուլ-  
 թանը շատ նեղն է. չորս զին ասկերը բռնած, ինքն  
 էալ նստեր հերսէն կուլայ:

Փանփուլ պագեց ձիուն դռնախը (սմբակ), համ-  
 բուրեց ճակատը. մի չախմախ զինելուն խապարը հա-  
 սաւ սարայը, տեսան օ Պէնկիպօզը էկաւ. գիտցան  
 օ սուլթանը նեղնէ, թուրնու զալխանը, մզրախը կա-

պեցին վրան, սէպպեցին. ձին շտկուաւ փանփուլի  
 քով. փանփուլ սիւյնին կապեց. հեծաւ ձինը, քիշնէ-  
 միշ էղաւ Պէնկիպօզ, տալիշ էղաւ (յարձակուեցաւ),  
 խառնուեցաւ, մտաւ կուսի, կետենեկու ձորուն կռիւ  
 էրին էրկու սահաթ, թա Արմտանու ձօրը. փանփուլ  
 հոտի մօտեցաւ Արզուն թագաւորին, աչքը էնոր ա-  
 ռաւ չարաւ, ձին քշեց, Արմտանու կարմունջին վրայ  
 հասաւ թագաւորին. զարկեց մզրախովն ու ձգեց  
 ջուրը:

Փանփուլ հէջ սայման չունէր, իրա կը յրիճութե-  
 նով Զինաքեարի, էզկայ ու Արզունի սայմանները առաւ:

Գ ա ռ ե գ ի ն:

Արզուն թաղաւորի տղան էր Գարեգին, Գարեգին  
 լսեց օ իրա պապը շատ նեղնէ ընկած փանփուլի ձեանք  
 ասկեր թոփեց, էկաւ իմտաւ հասաւ. հասնելու օրը  
 իրա պապը կուսի մէջ զարկուաւ, մեռաւ. ինքն էալ  
 Մամախաթունայ կարմնջին վրայ դէմ առաւ փան-  
 փուլին. բայց չկրցաւ փանփուլի կատողուկ ասկրին  
 հետ զարնուելու, փանփուլի կը յրիճ մարդիկը Գարե-  
 գինը փախուցին. իրա զօրապետին հետ մի մազարա  
 մտոցին:

Գարեգին պաշլայեց լացը. ասկերը պիթուն տար-  
 տըղնան, մի ամիս մնացին անօթի ծարաւ, փանփու-  
 լի ահուց արևու առաջ չեն էրեւար: Գարեգին մա-  
 րը գիր ճանփեց օ գայ, իրա պապու քաղաքը պէյէ,  
 Գարեգին թուղթ ճանփեց մօրը.

— Մէարիկ, մի լար, դու քաղաքը պէյէ, դէ ես  
 գամ հոտի ու ասկեր թոփիմ գամ վճիռս առնիմ  
 փանփուլին մինէ. մէարիկ, ես էաս դեկենէկին տակ  
 չիմ մնրը, մի կնիկ ըլի, իմ պապ պանէ:

Զօրապետը առաւ Գարեգին, գիշերով ընկան ճան-  
 փայ, գցին հասան Արզունի քաղաքը. իշխանները իմաց  
 էղան օ Արզուն մեռեր է, Գարեգին էկերէ, թոփուան  
 էկան, Գարեգինը իրա պապու տեղ թագաւոր դրին.  
 Թուղթ գրեցին քրիստոնէական թագաւորնուն օ

Գարեգընին իմտատ հասնին, իրա պապու նշանը կախեցին կուրսը, թուրը կապեցին մէջքը, թուղն էալ կախեցին շնչին. թաճն էալ գրեցին գլխին:

— Գնա, ըսին, Գարեգին, ետ չպտի դառնաս. մինչև քու պապու վճիռը չառնիս:

— Գնա, Գարեգին, ըսրց մէարը, հոսի չպտի գաս, էան անդդամ՝ փանփուլի գլոխը տի բերես, օ օտացս տակ առնիմ:

Գարեգին իրա ասկերը թուփեց, ընկաւ ճանփայ, վեց օր գցին, հասան Աղսույա ջրին, մարդ մի ըռաստ էկաւ, հարցոց Գարեգին:

— Բեղք թագաւոր ո՛ւր կընտոի: — Դէ, հա՛, Սուբ Տիկին, ըսրց:

Իիշեր էր, գցին գտան Բեղք թագաւորի բնակարանը, էլան Շուշայ սուլթանի քօփ գիրը տուեցին էնոր, թագաւորը քնուկ էր, սուլթանը հատաւ Գարեգինի էրեսը օ կուլար, արթըցոց թագաւորին:

Թագաւորը էլաւ, գիրը բացաւ, մէկ գիտն կը կարգար, մէկ գիտն Գարեգենին էրեսը կը հայերտեսաւ օ Գարեգին կուլար:

— Գարեգին, ըսրց թագաւորը, շիտակ մեր օրուն էք հասեր. վեր մին օ Չինաքեարի թասուլը ջուր խմեց, էան լմանը կրլի, օտքը ընոր օտաց տեղ գրեց կատուկ գէալ կրլի, Չինաքեարի ափուցը փրձանք, փանփուլ էղեր է մեր գլոխ պէլա, մի վախիր, Մօքոսի Աստուածը մենձ է, քիզի էալ կազատէ էան անըգգամի ափուցը:

Գարեգինի սիրտը փլեր էր, արտըսուքը ջուրի լման կը թափեր, կճկաւ թագաւորի ու սուլթանի օտքը համբուրեց. — Աստուծու սիրուն, միզի իմտատ, ըսրց, փանփուլ անցոց միզի:

Մօքոսին կանչեցին, էկաւ բարև տուեց, ու նըստաւ. Գարեգին տեսաւ, զարմանք մնըց, ըսրց իրա, իրա — վե՛վ է օ թագաւորի քով նստաւ. զհար պապերնին է:

Բեղք թուղթը տուեց Մօքոսին. Մօքոս կարգաց, գլոխը տարաւ բերրց, ըսրց. — թագաւոր ապրած, էկեր

է օգնութին կուղեն, մեր էաս վախտին չպտի թուղեն օ մի օր ըռահաթ նստիք, ինչ տէնիք, չպտի թողիք օ էան անաստուած փանփուլ անցնէ Արզունի էրկիրը:

— Մօքոս, ըսրց Բեղք, դու գիտես, ինդուր օ կուղիս, ասկերը առնիս, իմտատ հասնիս:

Մօքոս Գարեգենին ըսրց, — կանչէ Մանուկ տղին օ հասնի օգնական:

Թոփուան, գցին Սուբ Տիկին համբուրեցին, Մօքոս սիւսիկը գրեց բերնին, կանչեց չեչել չերքեզին, չեչել չերքեզ զարաին (ուժգին) թաաւ, էրկնուց կուլուժուրտալէն էլաւ, Մօքոս գիր մի գրեց, ըսրց:

— էաս թուղթը Բալ թագաւորին կը հասցնես:

Չեչել չերքեզ թուղթը տարաւ: Բալի առաջ դրաւ, Բալ ու իրա սուլթանը էլած՝, քօշկի առաջ կօլրտէին, թագաւորը կարգաց, սուլթանին ըսրց:

— Գարեգին շատ նեղն է ընկած, Մօքոս Գարեգինի համար իմտատ կուղէ, «Գարեգինի համար ինչ օ կինիս, ինձի կինիս, կրտէ, չարա չկայ, էան անըգգամի ափուցը տի փրցունք Գարեգինին:

Պատասխանը գրեցին, չեչել չերքեզ նգուլով (կըտուց) վէրուց Մօքոսին տարաւ, մէջը գրմուն էր, «խօսացս չիմ՝ դառնար, ինչքան օ կուղիս իմտատ կուտամ». ես էալ իմ՝ ասկերովս կուգամ»:

Բեղք, Բալ, Վամբք, խալիս քրիստոնէական էին, վե՛վ օ Սուբ Տիկնայ ուխտ կուգար, Մանուկ տղին կը հաւատար, էնոր իմտատ կուտային. Գարեգին էալ էկաւ, համբուրեց, ու հաւատաց:

Բեղք հատաւ օ Բալ տի ուշանայ, Գարեգին նըստեր կուլայ, սիւսիկը կինէ գրեց բերնին, կանչեց չեչել չերքեզին, մի գիր էալ հասոց Բալ թագաւորին, մէջը գրմուն էր, — փանփուլ կաղտեր է, իզկայ սայմանը առած ու գցած է Արզունի քաղաքի բոլորը բռնած է, Գարեգինի մէարը շատ նեղն է, ինչ կինիս ըրէ, շուտ իմտատ էկոյ: փանփուլ Արզունի քաղաքի չորս գին է կապեր, ամեն մարդ նեղնէ ձգեր, զնդալու ճար չէ մնացեր, բան զբան է անցեր գցեր:

Ժողովուրդը իրեք ամիս բերգն է փակուեր, լեռան ջրերն է կըյրեր, գիրս իրիկուն հասաւ, կը թոփիս ասկերգ իրիկուն կը հասնիս. օ առտուն հասաւ, առտուն կը հասնիս:

Բալ գիրը օ առաւ, պատրաստ տեսաւ, թոփեց ասկերը Բալու, հրաման ըրրց, մուզիկանին փչեցին, դմբիկնին զարկին, գիշերը ճանփայ ընկաւ, էկան. ասկերի մէկ ճոթն էկեր Մուզուրայ ջուրն էր հասեր, մէկէալ ճոթը դահա Բալուայ բերգն էր, յետի ճոթը հասաւ Մուզուրայ ջուրն, պայրախտարը (գրօշակիր) օ առաջն էր հասաւ Գալգաշին: Գիշերուա, կէսին հասան Սուբ Տիկին: Մօքոս ու Գարեգին գէմ գցին, կեր կերակուր կերան, տեղաւորուան քնացան, Մօքոս, Բելդ, Բալ ու Գարեգին չքնացան. խորհուրդ ըրին թէ վե՛վ տի երթայ. — Բալ, ըսրց Բելդ, Մօքոսի Աստուածը կը կանչէ քիզի, դու տի էրթաս, Մօքոսի խօսքով տի նստիս կանիս:

**Մօքոսի երազը:**

— Մօքոս գնրց իրա օգան, չպոխը բերնին դրեց, նստուկ խորու քուն մտաւ, էրծին մէջ Մանուկ տղան տեսաւ, արթըցաւ ա՛խ քաշեց. էլաւ Մանուկ տղի սուֆաթին պատկեր մի շինեց, օսկի վարաղով օծեց. ավլա քունը մտաւ, Մանուկ տղան ավլա դէմը էկաւ, կանչեց. — Մօքոս, Մօքոս. էաս ջրին ակն օ գտար, հոնի արշունդ տնկեցիր, սալթադ վրան ձգեցիր, շուքը նստար քնացար, սորա մնրց հողու մէջ, էալ չգտար, էան արշունը կանչեցեր է, քառսուն ճրդ ծառ էղեր է. օրթըղի ճրդը կըյրես բերես, մենճ իսչ մի կը շինես:

Մօքոս արթըցաւ օ Մանուկ տղան չկայ, էլաւ գնրց աղբրին վրայ օրթըղի ճրդ կըյրեց, բերեց օգին մէջ ձգեց, պարկաւ, ավլա քունը մտաւ. ավլա աչիքը դէմը էկաւ, ձէան տուեց:

— Մօքոս, Մօքոս, էլիր կըյրէ իրեք արշուն, պատկերին բոլորը չերչիվէ շինէ: ձրագը փակոց օ տի շի-

նէր, մտացը գնրց, խաղ ըչիլ պաշայեց: — Մտացս գնրց, քանի արշուն կըյրիմ, չեմ գիտէր, քանի արշուն շինիմ:

Մօքոս ավլա քնաւ, ավլա ձէան էկաւ. — իրեք արշուն կըյրէ, չերչիվէ շինէ. Մօքոս, Մօքոս, աւտորցիր (շտապէ), Գարեգինին մէարը իրեք ամիս է, ու Աստուծուն կը կանչէ, ջուր հաց չունի:

Մօքոսը արթըցաւ, զիւանէ հանեց, պատկերը անցոց, իրեք արշունը խաչ շինեց, պատկերին գլխը կայնեցոց, գլխն էալ օսկի վարաղով թագ կապեց:

Ձէան էկաւ ավլա էրկնուց. — Մօքոս, Գարեգինին կըսիս օ սուրբ ըլլիս. իրա ձին էալ թեմիզ պէյէ, աշխար չպտի մննայ:

Մօքոս արթըցաւ, ընկաւ մտածոց մէջ:

Գարեգին օգնութեամբ մանասպար կընկնի:

Գարեգին խորու քնու մէջ էր, ձէան էկաւ.

— էլիր Գարեգին, խորոզը կը կանչէ, մէարգ ներուլթան մէջնէ, էկար Սուբ Տիկին, շնորք տուեց Սուբ Տիկին, ընդունեց, մուրատ տուեց Սուբ Տիկին, քաշէ պայրաղդ, ընկեր ճանփայ, պայրաղդ գիր փեճիգ վրայ, Գրիստոս բարսըցուր գլխիգ վրայ. քաշէ պայրաղդ, Գարեգին, օ ասկերը յետիգ շարուին:

Խորոզը կանչեց, չկանչեց, Մօքոս թռաւ. պօռստանը փչել տուեց. ձիանը օ էմը կըյրեցին. Մօքոս պայրաղը առաւ, ճանփու վրայ էլաւ, տուեց Գարեգինի ուր. էրկնուց կարմիր, կանանչ լոս էջաւ Գարեգինին վրայ, էլող ասկերը գցին տեսան, համբուրեցին ու ըսին. — ըս ինչ գարմանը բան է: Բելդ ըսրց. — էաս լոսն օ կը տեսնըք Մօքոսի Աստուածն է. կը հաւատաքնը, գցէք կռիւ: Բալ թագաւոր պաշայեց լացը. ինչ օ ստակ ունէր, հանեց, թափեց, շատ մասաղներ կըյրեց. իցցուն հազար հոգի էին, պիթունն էալ հաւատացին. հայ քրիստոնեայ դարձան. համրուրեցին, ճանփայ ընկան:

Գարեգինը ընկաւ առաջ, իցցուն հազարն էալ էտեւ շարունան: Բելզ օ ըսոք տեսաւ, ես էալ կերթմ' ըսրց, ընկան էտենուն գցին. ուրախ ուրախ խնկալէն, ուրախ ուրախ գրուցելէն: Մօքոսին Աստուածը կանչելէն, տահա լսը բացուած չէր, պատկերի լուսովը կերթն:

Մօքոս, Բալ, Բելզ ու Գարեգին առջևուն, ասկերն էալ էտեուն գցին: Հասան իլիճա գլխոր: Փանփուլբընաճ էր քաղաքի բոլորը, բանէ խապար չունէր: Գարեգինի մէարը քաղաքի մէջ շատ նեղն էր, հաց չունէր, ջուր չունէր, շատ մտածեցու մէջ էր օր պըղօր աչքը Գարեգինի յետին էր թէ եք տի գայ հասնի:

Փանփուլ տեսաւ իլիճա գլխոր կարմիր կանանչ, լոսն, էրկնուց բռներ էր, գետին էջեր էր, ըն գիշեր սև ամպը էլեր էր, մութ էր, ճանփան չէին տեսնր, կանանչ կարմիր լուսովը կերթային, վախցաւ, ասկերը գլխուն քաշեց (շուրջը հաւաքեց), զօրապետնուն մէկուն ըսրց. — վե՛վ օ իրա ձիուն կիւվենմիջ (վստահի) կըլլի, թող էրթայ, խապար մի առնէ:

Էրկու ձիով գցին, հաեան օ իսան (մարդ) էլցեր, տեսան Մանուկ տղի պաակերքը օակի մըրաղի մի վրայ, խաչը գլխոր, թագը գլխոր, բոլոր ասկերին լոս է տուեր, իրանք էալ պիթուն քնացած էին. տեսան նը վախստաննու սորսոփուկը զարկեց սիրտը, ատմները իրար կը զինէին, գարձան խապար տուին, ըսանկ, ըսանկ:

— Գուք հէջ մարդու մինէ խապար չառիք:

— Չէ, ըսին:

— Էրկու մարդ գահա գցէք, խապար մի բերէք, տեսէք, ի՛նչ նշանակ է:

Էրկու մարդ, մէկը ձիով, մէկը ետեան, գցին

Պատմոց հառաջանք քաշելով ասաց — ըն վախան օ էնք կռապաշտ էին. ցունց տի տար էրկնուց տեղձողը իրա հըրաշքը, օ էաս հրաշքը չըլլիր, զօլա՛յ էր էանքան հոգի քրիստոսի աւտալը, քանի օ քրիստոս մարդ կը սաղցներ, կինէ չէին հաւատար:

էան ըմանը տեսան, ետեանը հանեց վրու չուխան, լծուորի լեաթով էլաւ բարս քարի վրան, հաեաւ էրկնուց ասղին հասար կայ, ասկրին չկայ, հոնի մէկը կար, հարցոց:

— Բարև քիզի, բաբա, էաս ինչ բան է:

— Աստուծու բարին, Սրգուն թագաւորի Գարեգինն է, տես, ահա, Մօքոսի Աստուածը առեր է Գարեգինը կուգայ, իցցուն հազար մարդ էալ հետը:

Ետեան ու ձիովը հեծան, գցին Փանփուլի խապար տուին, ըսանկ ըսանկ, ըսանկ: «Բալ թագաւորը առեր կուգայ, ըսին, փախելու ճար չկայ, եա տի էլլես փախես, եա թէսլիմ տի ըլլիս, էան լոսն օ միզի դահա մօտենայ, տի վառէ միզի:

Փանփուլ ասկերը դէօր տեղ մի քաշեց, զօրապետին հետ հեծաւ, էկաւ իլիճան, պայրաղին մօտեցաւ. սորսրփուկը սիրտն ընկաւ, աչօքը տեսաւ, օ Գարեգին պայրաղին տակ քնացեր էր, թուրը մէջքը, թագը գլխոր պարկեր էր. էրեսը կարմիր արև դարձեր, կը հագարնը լոսը բերնէն կելլր, Փանփուլին միտքը փոխուաւ (գլջայ), ըրածին վրայ փոշովնաւ, դողն ընկաւ սիրտը, դարձաւ գնրց:

Լուսու ասղը օ էլաւ, Գարեգին ձինը հեծաւ, պայրաղը ուսը առաւ, դէպի քաղաք շտկուաւ, Փանփուլ հաեաւ, էան լոսը ճաղպուաւ, կէսը էկաւ բերգին տակ էջաւ, գետնէն կամար կապեց էրկինք:

Պաշայեց Փանփուլի սիրտը դողալը. — վայ ինձիս, ըսրց, ըս ինչ բան է բռնեցի, տուն տեղ վառեցի, քաղաք անցցի. Մօքոսի Աստուածը ուր էս. ինձի էալ տի օգտես: Մօքոսի Աստուածը:

Մօքոսը առաւօտնը օ լուսցաւ, քաղքին տակ հասաւ, Փանփուլ իր զօրապետի հետ էլաւ, Մօքոսի դէմը էկաւ. Գարեգին Փանփուլ օ տեսաւ նը, ըսրց. — Կիտի անասուած Փանփուլ, իրեք ամիս է բերգին ջուրն կըյրեր, քաղաքը հաց չկար, մեռան, Մօքոսի Աստուածը կանչեցին, դու ինչ էրեսով էկար հոսի. ահա Մօքոսի Աստուածն է էկեր, ի՛նչ տի անես դու: Փանփուլի բերանը բռուաւ, լեղուն գլորուաւ:

Համբուրեց նը լեզուն բացուաւ չիրցաւ պատասխան տար, մէկ դիտն կերթր, մէկ դիտն կուլար:

Փանփուլ քակեց կէծակէ թուրը, Հանեց շնոցը օսկի խալխանը, դրեց Գարեգինի առաջ — լայելի է քիզի, ըսրց, Գարեգին, անցիր իմ անձանքէս (ներէ) թագաւորութիսն քիզի ըլլի:

Բելք էկաւ տեսաւ օ փանփուլ Գարեգինի առաջ ծունկ չորած է, ըսրց, — Ի՞նչուր բռնեցիր փանփուլը:

— Անցիր սունչես, ես էրեցի, դու մինէր, ըսրց:

— Ե՛ս բռնեցի, Մօքոսի Աստուածը բռնեց փանփուլը:

— Ես էալ ձեր Աստուածը կը հաւատամ, անցիր սունչես, Գարեգին, ըսրց փանփուլ:

Բար, Բելք, Մօքոս ու Արզուն թագաւորի սուլթանը թոփուան, փանփուլ սուլթանի սունչը բաղշեցին, Մօքոսի Աստուածը կանչեցին:

Մօքոս Արզունի բերդին մէջ Մանուկ տղան քարողեց, տեսաւ օ էրկնուց լոսը էջեր, կամար է կապեր, Մօքոսին էրած էկաւ ինձի մատուռ շինէ, Մօքոս առաւօտնը նախ ըրրց, Մէարնը ըսրց — քար չկայ: — Քարը իմ մինէ, ըսրց փանփուլ: Գցին ամեն մի քար շալկեց բերց, մատուռը լոսը էջած տեղը շինեցին, պատկերքը խնկով մոմով տարին գրին մատուռի մէջ:



2.

Փանփուլ կը դառնայ Ս. Տիկին համբուրելու:



ի դառնային, Բայ՛ մենծերնինէր, ըսրց, — վե՛վ տ'էրթտ, վե՛վ տի մնը:

— Մօքոս գիտէ, ըսրց Բելք:

— Խօսքը փանփուլի քովը կը-

թմի ըսրց Մօքոս:

— Ես իմ խօսքը անցոցի Մօքոսին, ըսրց փանփուլ, թագաւորութիսն էալ տուեցի Գարեգինին:

Օ թագաւորութիսն անցոցիր, քովս տի մնըս:

— Կերթմ՛ Սուբ Տիկին կը համբուրիմ, անտա ագպայո՞վս դառնամ կուզամ:

Փանփուլ ու Մօքոս ընկան ճանփայ, իրեք աւուր Հասան Գերձանու Մամախաթուն, ընցան Գժխուն Հեղինայի կարմնջէն, Սև ջրի քնարը բռնելով էրկու օրուն էալ Հասան Էզկայ քաղաքը Էզիրկեան:

Ճողովուրդը Հոնի օ լսեցին փանփուլ ու Մօքոս էկած է, օրօրոցի տղան էալ չկայնաւ, էկաւ — տեսնրմ՛

1 Կարնոյ և Երիզայի միջափայրն է, ուր ի վաղուց շինութիւնք կան, այժմ զօրանոց է, Գերձանու ջրի վերայ շինուած. այս ջուրն երկու ժամ խոնար Սև ջրին կը խառնուի, ուր կայ կամուրջ մի, Մամախաթունայ կամուրջն. շատերն Գժխոյն Հեղինէի շինած կամուրջն է կասեն:

ըսրց, Մօքոս ինդուր մարգ է Ձինաքեարի զընտընէն խլըսաւ, փանփուլ ի նդուր կնիկ մի է, օ տղամարդու լմանը պիթուեն աշխարք տակնու վրայ ըրըց: <sup>1</sup>

Էզկայ քաղաքէն ճանփայ էլան, ժողովուրդ թուփուեր էկեր էին թամաշա. մայրու խոշոր ճանփինին բռնած էին, անցնելու ճար չկար, էրկու օր գցին հասան Բեամ թագաւորի քաղաքը Բեմախ (Սնի ամրոց): <sup>2</sup>

Բեամ հաեաւ օ պիթուեն աշխարքնէ դուս թափեր, վախցաւ, փանփուլի ու Մօքոսի առաջը գնըց, զօնախ կանչեց, օ պատիւ ինէ, Մօքոս ընցաւ, չընդունեց. ինչու օ Բեամ կռապաշտ էր.—ընոր հացը ուտել հարամ է, ըսրց:

Փանփուլ ու Մօքոս Բեմախու քշեցին. մի նեղ տեղ հասան, հոնի պարկան, ընկայ եալ էկան լիճքը, ընկայ էալ ընցան, գցին Չմարա, մտան Ձինաքեարի սարայը, գիշերը պարկան. առաւօտը նոր լոսը բացուած էր, բռնեց Մօքոս փանփուլի ձեառքը, տարաւ գէալուն տունը ու զընտանը սալըցոց, ըսրց.— փանփուլ. իմ Աստուածը իզիս ըսկայ ազատեց:

Փանփուլ պիրտէն պիրէ վրայ էկաւ, բռնեց Մօքոսի ձեառքը, գցին քարին տակ, ցունց տուեց մի ապուհանեթ ջուր, օ խըյար ձգեն, կը ճաթի:

— Մօքոս բաբա. ըսրց. ըս ջուրը ես խմեցի. վրաս թմրութին մի ընկաւ, ես ի զիս չիմ գիտցեր, ախլամիշ էղայ օր չորս դիս էալ ասկերը կըյրեր էր:

— Դու մի խմելուն օր թմարուեր իս, ըսրց Մօքոս, էազ ջուրը Ձինաքեար կապեր էր զընտանը, գէ գօ-

<sup>1</sup> Մինաս այս հատուածը պատմած է ծննդեան օրը, օրինակ կը բերեր ասերով թէ « մեր օ ամեն տարի խաչը ջուրը նետելը տեսած իք, կինէ կը թոփիք զլսուն հա գէս, հա գէն կը վազիք օ տեսնըք. էնոր օ տեսած չէին, գահա հաւեսով կը թոփէին օ բան տեսնէին.

<sup>2</sup> Երիզայէն մինչև Բեմախ Եփրատի (Սև ջուր) ալ ամիս ի վայր <sup>2</sup> օրուան ճանապարհ է ի հարաւ. Բեմախու կամուրջն օր անցար ձախ կողմի վերայ մինչև շուկայն բարձր ժայռեր են, որոց մէջ այրեր կան. Բեմախէն ի խոնար <sup>6</sup> ժամ յարևմուտս գետի ձախ ափէն պիտի գնանք:

տիս աիլ էր, եօթը տարի մնացի թմարմուն. վրուս միսը խլըսաւ, օսկորնիս մաշաւ, աչիցս լոսը գնըց. օտացս ըզընգուրնին թափաւ. Մանուկ տղան Մուզուրայ ջրի կաթոտ աղբրին մէջ սաղցոց իզիս:

— փանփուլ տեսաւ, սիրտը փլաւ, կուլայ:

— Մօքոս բաբա, ըսրց, դու քարէն, էրկըթէն մարգ էս օ դայրեր ես (դիմացեր) էաս զնտընի մէջ, իրաւ քու Աստուածը մենձ է, կը հաւատամ կը հաւատամ:

Գցին սարայը, պօռին փշուաւ, հացը տարտղնաւ, էլան ընկան ճանփայ, հասան ֆինկեանայ կարմունջը. կարմունջը օ ընցան, էկան Սոսեկ, հոսի պաղ ջուրը խմեցին, հոգեհանգչ էրին. մէկ մէկ չարիս քաշեցին. Շատ խորուն ձէօր է Սոսեկու ձէօրը:

Հոնի փանփուլի բերդը տեսան:

Մօքոս վլացուաւ, իրա իրա բան մի մտածեց, թւերը սոսթեց, տլերը նետեց, աղբրի աիլ բացեց, քարերը եաները շարեց, մի քար էալ վրան դրեց, քովի չախտոյով օ վրու քարը շատ կակուղ էր, փորեց, խաչ քար շինեց:

— Էազ ինչ է, կինիս, ըսրց փանփուլ:

— Սուլթան, անուն կը դնիմ աղբրին, ըսրց Մօքոս. Սուլթանը էկաւ հաեաւ, ըսրց. — Մէմի ըսգին է քաշած, մէմի ընգին:

— Ըս խաչ է, անունը կը դնիք խաչ աղբրի, ըսրց Մօքոս:

Փանփուլ ըսրց, ձիով մի էրթայ. օ աղջիկս իմաց ըլլի, միզի կը տեսնեն, սիրտերը կը ճաթի:

Մէկը խաչ աղբրի ձինը հեծաւ, էջաւ աւազը. ձինը թողեց, էկաւ էլաւ բերդը. մուժտէ տուեց փանփուլի Մարգրիտ աղջկան. իրենք էալ էտուհուն էկան էլան Սրճուայ բերդը. <sup>1</sup> Առաւօտնը էլան Տէլիք դաշը, ընկայ էալ Չարխափան, վզէին աղբրը, փանփուլ Տէմիր խափուն բացեց, մէկ մէկ ընցան:

<sup>1</sup> Փանփուլի բերդը Անայ <sup>2</sup> ժամ հիւսիս, ուր էր Փանփուլի աղջիկը, որուն կասեն Տէլիք տաշին բերդը, սա ջրի ձախ ափէն <sup>2</sup> ժամ հեռի, որոյ ստորոտն Հայ Հոռոմներու երկու գիւղեր կան. Շրջուն հայ գիւղն Էս հիւսիսային ստորոտն է:

Փանփուլ առաւ իրա ագապայր ու Մարգրիտ ազ-  
ջիկը, ընկան գգին, Շնկայու կարմունջը<sup>1</sup> ընցան, գգին  
Հասան Սուբ Տիկին, համբուրեցին, մատաղ կը յրեցին,  
իրեք օր հոտի մնացին:

Մօքոս մնրց իրա տեղը, Փանփուլ իրա ագապ-  
յովը, մալ ու խազինայովը, առաւ իրա մէկ ազջիկը,  
գնրց հասաւ էրզիւրումի իրիճան (Չերմուկ) Բալ, Բեղզ  
ու Գարեգին գգին դէսը փառքով բերին, էջոցին:

Մօքոս մնրց Ս. Տիկին, Մօքոս էնոց քարոզ կու-  
տար, աղօթք կինէր էնոց համար օ պիթուն զառնան  
Մանուկ տղին հաւատան:

Ուռեկու<sup>2</sup> Թորիկ եշխան:

Ուռեկու Թորիկ իշխան Բալ թագաւորի Նուկեկ  
տղին վարժապետն էր, Բալ թագաւորի սուլթանը  
առաւ մի օր իրա տղան, գնրց իշխանին քով օ էլլն  
էրթն Սուբ Տիկին ուխտ ու Մօքոսն էալ տեսնան:  
Ուռեկու բէրզը մնացին մի ամիս զտրբ: Նուկեկը  
ըսրց վարժապետին, — Ասեն բան սորուրցուցիր ինձի,  
կէյիկան ալ՞ (այժեամի որս) էրթալը չսորուրցուցիր,  
ամեն օր կէրթս, ինձիս օր մի հետգ չես տանիր:

— Տեղը կապան է, (անանցանելի ժայռեր), վէար-  
դին Մուրատ գետնէ, օլրտաճ տեղդ չէ:

1 Ճանապարհին վերայ կայ Աշուքբայա աղբիւրն ուստի  
երկու ժամ է Շնկայի կամուրջը, ուստի գետի ձախ կողմն անց-  
նելով դէպի յարեւոյս ուղղուած են, որով հեռացան գետէն,  
Բազարոն հասան, Շնկայու մինչև Բազարոն 8 ժամ է, Բազա-  
րոնէ 2 մշկածակու շուրը պիտի անցնիս, ուստի Գատրուէճ, աստի  
ևս Սուբ Տիկին:

2 Ուռեկ երկուք է վերին և ներքին, ներքին Ուռեկը  
ջրի աջ կողմի վերայ է, ունի բարձր բերդ մի, որ մի կողմէ  
Ճանապարհ կը բարձրանայ վերան, երկու կողմն ձորեր կան,  
որք բերդի շուրջն պատած են, և կըղղիացուցած, հողը դեղին  
է, սորա շուրջն անտառապատ լեռներ են, խոզկաղնի (փա-  
լուտ) փայտն առատ է Սև լեռն . .

3. Այժեամի որսն խիստ դժուարին է, հարիւրէն մի օր-  
սորդ հազիւ կը յաջողի որսալու, կասէ Մինաս:

— Չէ, դու քանը զընձիս սարերը կելլս, կապան-  
ները կօլրտիս: Առաւօտնը էլան գգին:

Իշխանը ըսրց Նուկեկին. — Դու էաս քարին տակ  
կը նստիս, ես կելլմ լեռան գլխը, կէյիկան առաջ  
կը կը յրիմ, էնօք օ ինձիս տեսան, կուգան քու վրայ,  
(կողմ) կէջնան ջուր խմիլը, օխիգ (նետ) լարը լաւ  
կը ժրեցնես, էրկան լաւ շիշ մի կը զինիս օխիգ բե-  
րանը, հըմն օր էկան, քեզ ընցան, վեր մին օ ազ-  
ջիրը էրկան է, կը նէտես, էնոր կը զինիս:

— Դու գնա, մենձը պզտիկը իմ բաննէ, ըսրց:

Մի չպող լեցոց, չախմախը զարկեց, խաւը դրեց  
վրան, մի նեֆես քաշեց, էան խտրը հաեաւ, վերէն  
վէար վրուն քար թափաւ, չպողը դրեց գետինը,  
մենձ կէյիկ մի օ տղան տեսաւ, վրուն ինքի զինք նե-  
տեց ջուրը, կէօղիւնէ տէօնտիւկիւմ Նուկեկ, օխը  
չնետեց, հաեաւ օ աղջրուրնին սիրուն է, մեղք է,  
ըսրց, վազեց էտեուն աղջիրը բռնեց, ինքն էալ հետը  
ընկաւ ջրին օլորը, ընկած տեղը կօլրցնէր, կը պլտրցնէր  
ջուրը, իրեք հեղ պլտրցոց ու կոխեց դայնախը, կորան:

Սուլթանը բերդի վրուն տիւպինը աչիչը դրած  
կը հայիր, տեսաւ օ Նուկեկը ու կէյիկը մէկէ մի աչիչը  
էրեաց, կորաւ, հոտի ճնչեց, էլաւ բորիկ վազեց  
դէպի Մուրատ գետը, հասաւ կապանին, տեսաւ ճանփայ  
չկայ, մէկ դին Մուրատն է, մէկ դին կարմիր կապան  
քար, պաշայեց գլխուն մագերը քաղիլը, ճընկուր-  
նուն զարնիլը, ճնչիլը— հասէք Նուկեկաս, հասէք  
իմտատ Նուկեկաս, ես չեմ կրնրը իմտատ հասնիր,  
աչքս մթնտեց, սիրտս կը գողայ, ճընկուրներս կոյ-  
րաւ, թեւերս թուլցաւ, վե՛վ օ Մանուկ տղան կուզէ,  
Նուկեկաս իմտատ հասնի:

Սուլթանը հաեաւ օ Նուկեկ գնրց կորաւ, պաշ-  
լայեց Մուրատը անիծիլը:

— Ա, ի արըներես Մուրատ, տարին հազար մարդ  
հէմի կուտես, հէմի կը պանես:

Դու իմ Նուկեկս տի տանէիր, ախ, ճընկուրնե-  
րա:

Սիրտս կը գողայ, աչուրնուս արին կը վազէ:

Ան Մանուկ տղան էաս քարը լնայ վրագ.  
 Ինձիս բռնեցէք, Մուրատ Նուկեկս կերաւ-  
 Չեմ գիատէր, վեր մի անատակ կէօլը տարաւ,  
 չանավարնուն քովը Նուկեկս պէնտ քրրց, թողեց,  
 Հասէք Մօքոսին, օ էրթայ լոխման հեքիմին,  
 Օ հայիլ տայ գւր գնրց մնրց Նուկեկս,  
 Արըներես Մուրատը վեր մի կօլը թողեց Նուկեկս,  
 կը խնդրուիմ Մանուկ տղին, օր գայ հասնի Նու-  
 կեկաս, քիզի չարցնէ, ցամքէցնէ:

Գալող էրթողը վրուգ գիմաց անցնէ:  
 Ան Մուրատ, Նուկեկաս աչքը չամիչ էր.  
 Ընքուընին թուխ, էրեսը կարմիր վարդ էր, արդնին սե-  
 տեֆ էր.

Մուրատ Մուրք Տիկինայ բերնօք անիծուխ,  
 Մուրատ, Մանուկ աչի բերնօք անիծուխ.  
 Մուրատ, Մօքոսի բերնօք անիծուխ:

Մանուկ տղան կատարեց սուլթանի խնդիրքը.  
 գեղին քարերը թափուան արըներես Մուրատի վրայ.  
 ճանփայ բացուաւ, սուլթանը անցաւ, ըսրց:

— կը հաւատամ Մանուկ տղայ, կը հաւատամ, դուն  
 օ ըս քարերը ըցցօցիր. Նուկեկս եալ տի հանես: Սուլ-  
 թան հաեաւ օ Նուկեկը ու կէյիկը ջրի օրթալախն  
 չուլամիչ էղիր էին, Նուկեկ կէյիկան աղջրուընուն  
 բռնած է դահա ժիր, ջուրը բերուընին գցեր էր կը  
 պճլտային (ցնցուէին) չէին մեռած, ձեռքը կէյիկան  
 աղջրվրնուն բացեց, սուլթան օ Նուկեկը տեսաւ,  
 հոգու կըսկըծուն լաթերով մտաւ ջուրը, գէ ծոնկը  
 էլաւ ջուրը բռնեց տղին ձեռաց, քաշեց, ձեռքը չեր  
 կրնր բանար, աղջիրը վրուն հաներ, ըսրց:

Սէապէ, որգեակի աղջիրը, էղի կէյիկան այ նէր.  
 էղի կէյիկան այնէր օ մնացիր Մուրատին կօլը,  
 Գիզի վեկ ըսրց, կէյիկան ավը էրթօ,  
 Միամիտ կէյիկը օխով զինիս պանիս:

Թորիկ իշխանը հասաւ բռնեց հանեց դուս, բերց  
 ծառնիվէար կախեց, չսաղցաւ, նետեցին իշխանի ձիուն  
 վրայ, պարկել ժամուն հասոցին Մօքոսին, Մօքոս  
 հաեաւ սուլթանի կրսկծուն հաեաւ էրկինքը. Նուկեկ

սաղցաւ. էլաւ նստաւ, ըսրց.  
 — ձերմակ մօրուքով մի ֆարֆուրի ֆինճանով ին-  
 ձիս գինի խմօց, էլայ նստայ:

Սաղցաւ, ետ տի դառնային վերէն, Նուկեկ,  
 ըսրց. — օխս հոնի չիմ թողիմ, ընկա տէրթմ:  
 Գցին հասան կէյիկան տեղը, Նուկեկի շինած  
 մեթերիսը դահա կեցեր էր հոնի, ըսրց:

— Մէարիկ, կը հայիք, ինդուր օ մազալը շիներ  
 իմ, դահա կեցմուն է, հաեայ օր հինգ հատ կէյիկ  
 հոնի քարին վրայ կայնուկ ին, օխը աչիս առի օր գե-  
 նէի, տեսայ մի տղայ, մի աղկէկ աղջիկ, մի էալ հարս,  
 մի պառապ, մի հալիուր, մօրուքը թա գօսին, օ աչի-  
 չըս վէար կառնէի. էան լման կինէ կէյիկ կը տես-  
 նէի, ավլա աչիս կը դնէի օ զինիմ, ավլա էան լման  
 մարդ կը տեսնէի, վախցայ վէար գրի օխս, իմաց էղայ.  
 օ էսօք աղպէթ (անուոր ընտանիք) են, չգարկի, հեմալ  
 հաեայ, գչխուս վրուն մի փոթորկի լման բան ընցաւ,  
 հաեա մենձ կիյիկ մի աղջրուընուն բռնեցի:

Գարեգին կամուսանայ փանփուկի աղջկայ հետ:

Ընցաւ մէկ տարի, աշխար խաղաղութին էր, Գա-  
 րեգին փանփուկի Մարգրիտ աղջկան հաւանաւ. թուլթ  
 գրեց, հարկը ձիով ճանփեց Մօքոսին, «Գարեգինը  
 տի կարգուի, նշան տուած առած է, Մօքոս բաբա,  
 թեղ էլլս, գաս, կարգիս, օճիս:»

Մօքոս հարիւր ձիովը թոփեց Մուք Տիկին, ըսրց:  
 — Մտիկ րրէք ժողովուրդներ, երիասարդներ,  
 Բաղդատ ծնայ, մէարս, պապս մեռաւ, որք մնացի,  
 Ղարակէօզ սուլթանի կաթը ծծեցի, մենձցայ. տաս-  
 ուերկու տարեկան Բաղդատու էլայ, տասուիրեքին  
 խոզաղածի հիմը ձգեցի, պաղ աղբիւրը փորցի. հա-  
 նեցի, տարիս գնրց քսանին Չեչել չերքեզին քարը  
 փորեցի, կուտ ու կերակուր էնոց կերուցի, էռսու-  
 նին Վամբայ քարէ քաղաքը փորեցի. Բերդըկու բեր-  
 դը շինեցի, պաղ աղբիւրը հանեցի: Տարիս քառսու-  
 նին հասաւ. խելքս անտա նոր գլոխ էկաւ. անմա-

հական ջուրը հանեցի, Սուբ Տիկինայ մատուռը շինեցի. տարիս հասաւ իցցունին, Սուբ Տիկին կայնեցուցի. թագաւորնուն մէջ Մանուկ տղան քարոզեցի, վացցունին Ձինաքեարի զնտանը փորեցի, գէալուն տունը շինեցի: Տարիս գնրց սէքսենին, Ձինաքեար կաղտաւ, խափելով տարաւ ինձիս գէալուն տունը նետեց. հանեց զնտանը ձգեց, տարիս գնրց տոխսանը, զնտնէն էլայ, Խօստայու լեառը էջայ, Մուզուրայ կաթոտ ակը լողացայ, քառսուն Մանուկները տեսայ, Գանիէլ ձգնաւորի հետ զրուցեցի. Չեչել չերքեղին գանգատը լսեցի, Բռինչը օրթնեցի, սուլթանը բերդէն ազատեցի: Տարիս գնրց հարիր քսանը, Լամբբայ մենձ կռիւր էղաւ, Ձինաքեար զարկուաւ մեռաւ, տարիս հարիր էռսունը հասաւ, Մեզկերտու բերդը խարապա դարձաւ. տարիս հարիր քառսունը հասաւ, Փանփուկ կռուի բռնուաւ, տարիս գնրց հարիր իցցունը Գարեգինը էկաւ. Փանփուկ քրիստոնէական դարձաւ, աշխար խաղաղութին ընկաւ: Տարիս գնրց հարիր վացցունը, ականջուրնիս կռուաւ, աչուրնիս պսացաւ, արդընիս թուլցաւ: Հաւատացէք Մանուկ տղին, օր աշխարք խաղաղութին ընկաւ, ըռահաթաւ:

Մօքոս թուղթ մի ճամբեց թագաւորնուն, թուղթ մէալ քառսուն մանկան, ըսրց, — «Աշխարք խաղաղ է, էալ Կէօկեռիկայ լեառան վրուն էջէք. պիթուն աշխարք կը հաւատան Մանուկ տղին. էկէք օ տի էրթք Գարեգինը կարգէք, օձիք, թախտը նստեցնիք:»

Թոփեցան Սուբ Տիկին, էլան գցին, հասան Իլիճա Չերմնուկին, խապար գնրց Գարեգինին օ էկաձ է Մօքոս ու թագաւորնին, խոնչա պէզաթմիշ էրին, գցին առջևնին, սեղանը գրեցին ճանփու վրայ, գալողին տուին, գալողին տուին, գալողն էալ օ կերաւ ու խմեց. — «Կայիրլի բլլի Սատուաձ չամչցնէ», ըսրց:

Մօքոս ու քառսուն մանուկ հոտի ձեռուանը բացին. — «Սատուաձ, ըսին. ինչ օրու էաք, ինչ օրու հասաք. գէալնու գառը մէկ տեղ կարծուին, փառք քեզ, Սատուաձ.»

Էլան ընկայ, հայով հույով գցին Էրզիւրում հա-

սան, մտան Մօքոսի շինաձ մատուռը, համբուրեցին, վառեցին մոմերը, ծխեցին անուշ խունկերը, գցին իրանց տեղը:

Հարսնիքը պաշլայեցին, Մօքոս ըսրց, — Գցէք, բերէք Փանփուկ սուլթանը, Օր գայ գովէ թագաւոր Գարեգինը, Գցէք, բերէք Պէնկիպօզը Պէնկիպօզը, Օր հէճնայ թագաւոր Գարեգինը, Գցէք բերէք սուլթանի կէճակէ թուրը, Օր մէջքը կապէ թագաւոր Գարեգինը, Գցէք բերէք թագաւորական քուրսին, Օր վրան նստի թագաւոր Գարեգինը: Գցէք, բերէք արպըշմէ բճերը. օսկի կօշիկը, թէփէն օսկի գզակը, օսկի քեմերը Էլն...:

Փանփուկ Պէնկիպօզը, կէճակէ թուրը, օսկի զալխանը, լալով բերց տուեց Գարեգինին, Մօքոս իմաց էղաւ օ դահա աշխրքէն սիրտը կըյրաձ չէ, ըսրց. — «Աշխրքէն, աշխրքէն, Փանփուկ, ձեռաքղ կը քաշես, ըսկուց դէն Մանուկ տղին խունկ ու մուձ կը վառես:»

Փանփուկ սուլթան գնրց բերց. ինչ օ թանկագին ակունք ունէր, տուեց քառսուն մանկանց, օ թագաւորի կուսնիվէար շարեցին չորս խոռ (կարգ) ու կախեցին:

Թագաւորը օտացը դէ գլխը զարգարեցին. մնրց թագը. Մօքոս պաշլայեց ըսիլը:

— Էկէք, Մանուկ տղի առաջ մայրու խոշոր,

Օ թագը իջեցնէ մեր թագաւոր Գարեգինին:

Ճողովուրդը մայր ու խոշոր ձեռուանը բացին, գէպի Մանուկ տղան կը հայէին, տեսան օ Մանուկ տղան ինք իր թագը գրեց Գարեգինի գլխը:

Բերին Գարեգինը կարգեցին, նստաւ թախտին վրան, աշխարք խաղաղութին էղաւ. գէալն ու գառը մէկ տեղ կարծուէր, Արտուձ թագաւորին լման թագաւոր էղաւ Գարեգին:

Քառսուն Մանուկ պաշլայեցին երգ ըսիլը,

— Ասըր պայգար մեր թագաւորին,

Օսկի խաչը պայզար մեր թագաւորին,  
 Թուրը կը յորուկ մեր թագաւորին.  
 Աշխարքի տէրը մեր թագաւորին:  
 Կէճակէ թուրը մէջքը կապմուն մեր թագաւորին,  
 Օսկի զալխանը կուրսը կախմուն մեր թագաւորին,  
 Թագը գլուխը, թաճը գլուխը մեր թագաւորը,  
 Խաչը գլուխը, թախար նստած մեր թագաւորը:  
 Հարսնիքը վերջացաւ, էլան օ պիթուն իրանց  
 տեղանը աի էրթային, Գարեգինի մէարը Մարալ սուլ-  
 թան ըսրց. — Մօքոս բաբա, մեր թագաւորը օրթնէ:

— Չեր թագաւորը Աստուած օրթնեց, ըսրց Մօքոս,  
 Մանուկ տղան խաչը ձեառքը օձեց ու գոլեց, իրա  
 ձեռք թագը գլուխը դրեց, թող Աստուած շնորհա-  
 ւոր ինէ, խաղաղ թագաւոր ըլլի:



### Յ Ա Ւ Ե Լ Ո Ւ Ա Ծ

#### Խ Ա Լ Ա Ն Դ Ա Բ

Ըստ Մինասի Խալանտար անուն թուրքերէն երգեր ունեցող Հէքիաթն, որ սիրահարական բաւական ընդարձակ վէպ մի է. որը Մօքոսի շարունակութիւնն է և արդէն այն էր առիթ առած Մօքոսն պատմելու, չգիտեմ ուղղակի կապ ունի՞ Մօքոսի հետ թէ Մինաս յարմարացած է մի այլ Խալանտարի հետ. Խալանտարի համառօտութիւնը այս տեղ կը ներկայացնեմ: 1

— Մօքոս Խալանտարն Թլա բերդէն ազատելով՝ կը յանձնէ Լճքայ Բարունակ իշխանին, նա ևս ուսման կտայ, սա ուսման մէջ շատ յաջող լինելով՝ ընկերներն սորա վերան կը նախանձեն. քանի անգամ գետը խեղդել և սպաննել կը փորձեն, մի օր ևս ուռկան կառնեն ձուկ որսալու, ուտել խմելու և զբօսնելու պատրուակաւ Սանախուսայ գետը կը տանեն, ուր սորա ընկերները նախ ջուրը կը ձգեն, ապա ծառին կը կապեն՝ սաստիկ կը գանեն, իբրև մեռած թռչ կտան. վարժապետն կորոնէ, աշակերտներուն հարց ու փորձ կանէ, նոքա կուրսնան. Ագա րագցի երկասարդի օգնութեամբ կը գտնէ նախ հազուստներն, որ այրած էին՝ ապա զինք տուն կը տանէ, կը դարմանէ. — «Ձի-նուքեար զալում է, ժողովուրդը զուլում է, ես թագաւոր էի չխնդացի, հիմի՞ աի ինդամ.» կասէ Խալանտար, այս երկիրն չեմ կարող մնալ. կը մեկնի վարժապետի հետ, կանցնի ջրի այն կողմ Սերկեյիլ Մատօ իշխանի տունը, սորա կինը Մարան բունաւոր էր, այն տեղ ևս չէ կարողացած մնալ երկար. առանձին ձանապարհ ընկաւ, հասաւ Իերձանու Մեղիքեն գիւղն, գիւղեր էր, ցորենի թեղի վերայ պառկաւ, անօթութիւնէ քունը չտարաւ, ելաւ աշխատեցաւ, ահագին թեղն հոսեց, թեղի տէրն Ասլան աղան եկաւ տեսաւ, շատ ուրախացաւ. Խալանտարը մշակ բունեց, Խալանտար միտք չունէր մնալու, հաց ուզեց, Ասլան աղայի աղջիկ Սեվլինազ հաց կը բերէ, Խալանտար նմա կը սիրահարի, կը մնայ, Ասլան աղան մի օր տունը կը յանձնէ Խալանտարին, Կարին կերթայ իւր վաճառականի հետ հաշիւը մտքրելու, Ասլան աղայի կինը Խուճարկեօզ կը տեսնէ Խալանտար և Սեվլինազ սիրահարած են, դրացիներն կը կանչէ, նշան կը դնէ:

1 Խալանտար Մինասի ըսրբառով զրի առած եմ, թուրքերէն երգերն ես գրի առած հանդէպն հայերէն թարգմանութիւնն արած եմ. հակառակ իմ ցանկութեան չկարողացայ այս տեղ ներկայացնել տեղւոյ սղութեան առթիւ:

Աղան աղան տուն կը դառնայ, վաճառականն ևս այլուր գնալու վերայ լինելով՝ այս տունը իջեանեցաւ, տեսաւ Սեփինազ, իւր տղայի համար ուզեց, Ասլան աղան խօսք տուեց, լսեց Խալանտար, միօր արտի մէջ եօթ խոփ կոտրեց տուն դառնալու պատրուակաւ, Ասլան աղան գանելով կը հեռացնէ Խալանտարը, Խալանտար անձրևի ու ձեան ներքև կը մերձենայ Սեփինազի լուսամուտին, երգով կը յայտնէ իւր վիճակն. վաճառականն ու Ասլան աղան դուրս կելլան, կիմանան որ սիրահարներ են ստրա, Ասլան աղան սաստիկ կը գանէ Խալանտարը, որ այլ ևս իւր դուռն չմերձենալու սպառնալիք կը կարգայ, Խալանտար կը մեկնի Երիզայ, ուր խնդիր կուզէ տալ փաշային, գրողներն դրամ կը պահանջեն, դրամ չունէր, երգով իւր վիճակն կը յայտնէ, չեն զթար, փաշային կը գիմէ, նա ևս չզթար, կերթայ Կարին նահանգապետին, ուր ևս խնդիր գրելու համար իրենց երկու մասը շարժելով գրամ կը պահանջեն, Խալանտար այս տեղ նաև երգով իւր վիճակ կը յայտնէ, նոքա ևս չեն զթար, ապա կը մերձենայ վալիի դրան, երգով իւր վիճակը կը յայտնէ, փաշան կզգածուի, մահապարտից բանգէն կը կանչէ Թանդրիթանիմազը (Աստուած չճանաչող), կազատէ, Ասլան աղայի գատաստանը նմա կը յանձնէ, նա Խալանտարի հետ կը գնայ, նոյն ժամանակ Ասլան աղան ու վաճառականը հարսանիք կանէին, երբ լսեցին Թանդրիթանիմազը եկած է, դռները գոցեցին, Քաղրթանիմազը մի կիւրզ զարկեց կոտրեց դուռն, մտան ներս, հարսանիքն շարունակեցին Խալանտարի համար, Ասլան աղան ու պագրկեանը Թանդրիթանիմազի խոտեկի տակ սկսան դրամ գնել, այնպէս որ Թանդրիթանիմազը մի արշուն բարձրացաւ, Խալանտար զգաց, գնաց Սեփինազի լուսամուտի առաջ երգով եղածն յայտնեց, Սեփինազ ևս երգով յայտնեց թէ ինք ուր և լինի, ինչ վիճակի մէջ ևս գանուի, միայն Խալանտարի կը պատկանի, վաճառականն Թանդրիթանիմազը դուրս հանեց որ լսէ թէ Խալանտար իւր վերայ վատ բառերով կերգէ, — կաշառք առած է կասէ, սակայն Թանդրիթանիմազը կզգածուի Խալանտարի երգերից, Սեփինազը կը պսակէ Խալանտարի հետ:

Գրքիս մէջ գտնուած յատուկ անուանց ցուցակն այժմեան կարգով որ իբրև տնդագրութիւն կը ծանօթացնէ Տէրսիմի ևս որոյ շուրջն պատած երկիրներու աշխարհագրական դիրքի հետ:

Ազրակ. — Երկու Ազարակ գիւղեր, որոյ մին Երեզայի հանդէսն գտնուած գիւղէ 1 ժամ յարեւելս, Սեւ ջրի ծախ արեւելս 1 1/2 ժամ հեռի, երկրորդն Խոստայ լեռան արեւելեան հարան, որ Սուրբ Թորոսի Ազարակ կասուի:

Աղսու. — Փոքր շուր որ Խոզաթէն կգայ՝ ճօղ օվայի միջից կանցի. խոսարի Բերդկու մօտէն կիջնայ Խարնմա կամուրջի ներքև Դուրատի կը նստնուի: Այս ջրի վերան է Ցագման գիւղն:

Ապուչախ. — Ավայ հարան է 1 1/2 ժամ, որոյ ծանապարհն վերայ է Արեգի գիւղն. որոյ մօտ է Չերագ:

Ապտօնի. — Բալուայ (Եփրատ) ու Մուզուրայ ջրի խառնուած վայրն, ջրի աջ կողմն կայ Ապտօնի գիւղն, գիւղի առաջն լաստ կը բանի, որոյ հանդէսն է Բիւրդ Էլէմեղից գիւղն:

Ատասին. — Իսկել է, լաստ կը բանի. աստի Խարնեքը քաղաքը 4 ժամ է:

Արաք կեչուտի. — Փերին ջրի վերայ. Փերինայ ի Մուզուր խառնուրդէն 5 ժամ քարծր. ուր ջրի աջ կողմն կայ փոքրիկ բերդաւոր Դուլխսագ Թիւն. ուր է նաև Տօնիկ իշխանի բերդն, սորա առաջն է Արաք կեչուտի անցքն. ջրի մէջ, աստի կանցքն Լայաշնայ դէօրի, (10 հայ գիւղեր) քնակիշներ Բալու գնալու համար. որ 10 ժամ հեռաւորութիւն ունի:

Արշնու մատեն. — Կողմնիկայ ծովուն ետև, ուր պղնձի հանք կայ:

Միւրտան. — Չմարայի հիւսիս 2 1/2 ժամ, երկու Արմուտներ կան, մին 500 տուն, իսկ միւսն 500 տուն հայ են:

Բալ, Բալու. — Մուրատի եւ Փերինայ ջրի միջավայրն, երկուքէն ևս 5ական ժամ հեռի:

Բաղնիք. — Փերինայ ջրի եզրն, Փերին գիւղէ 1/2 ժամ հեռի:

Բաղին. — Լամբայ 1 ժամ քարծր. հին քաղաքավայր, հանքային ջրամուկներ ունի, մտնողը կատողնայ, հրաշալի է սորա առաջնը, երախայ մտնի մէջն, ջուրը վեզը կելլայ, մարդ մտնայ՝ նոյսպէս վիզն կը քարծրանայ ըստ Մինասի:

Բաշաղակ. — Խալանտարի եւ Մրգանայ միջավայրն գիւղ մի է:

Բատունայ օվան. — Մուզուրայ եւ Փերինայ ջրի միջավայրն, ունի հայ գիւղեր. Բաղին. Մաստան, Լամբ. 2որակ, Լայաշին, Դուլխսագ Թիւն, Բիւրեքքն, Հայվալի, Մրգէն, Խուշին, Ուրծ:

Բարունակ. — Լծրայ իշխանն էր որ որդեգիր առաւ Խալանտարին:

Բերդակ. — Մուրատի աջ կողմն ջրի վրայ, մի ժամ որոյ յարեւելս Թիւն, մի ժամ արեւելս հիւսիս Ս. Տիկին:

Չիմարայ. — Հայ գիւղ է Ավնայ 5 ժամ հիւսիս. ուր եղած է Զինաքեար:

Չիւսքեար. — Էլպիս մէջ պատմուած բնաւոր Թագաւոր է:

Շրկան. — Բերդկու արեւմտեան հիւսիս 5 ժամ. որոյ մօտ Ցաղման, վայնան, Զմպեղ, այս գիւղն շատ նշանաւոր եկեղեցի մի կայ:

Շիւրատ. — Սկնցիք Սեւ ջրի Շիւրատ կասն. իսկ շրջակայ ժողովուրդը Ավնայ ջուր: իսկ Զարանմագու կողմն ևս Մուրատի Բալուայ ջուր կասն:

Թիւ. — Բերդկու Թիւն, Բերդակէն մի ժամ յարեւելս, ջրի վրայ, հայի գիւղ 100 տուն, լաստավար են, ջուրի վայր Մալաթիա են. վայրեր կերթան:

Թողկի. — Մինամ Թագաւորի տղան, որ Սեւայ քաղաքը կը բնակէր:

Խամայիցիք. — Գիւղս է հարեւիք մէկս պատմող Մինաս քաղաքին, որ է Մեզկերտէ 5 ժամ հարաւ, մի ժամ Փերինայ արեւմուտք եւ Մուզուրայ ջրի ծախ կողմն, ջրէն 1/2 ժամ հեռի:

Լամբ. — 7 ժամ յարեւելս Մեզկերտէն, Փերինայ եւ Մուզուրայ ջրերու միջավայրն. անիկ Փերինայ ջրի մօտ, որոյ քաղաքն Բալու. ուստի 6 ժամ ի հիւսիս է Լամբը:

Լիծք. — Խոստայ լեռան արեւմտեան ստորոտն Ակին ջրի ծախ կողմն ջրէն մի ժամ քարծր. Լծքայ մի ժամ հարաւ Ս. Քրկել վարք կայ. նշանաւոր հայ գիւղ է:

Լոս աղբիւր. — Խամայիցիք եւ Փերինայ գիւղերու միջավայրն ուխտատեղի է. ուր կայ հին աներակներ մի քարծրավանդակի վերայ այս.

դարի վերան գտնուած է հողի մէջ հնուօրիններ, ոսկի, կարաս կծուծ, կաւէ ամաններ—Յոգադարձի սահմանի մէջ է դարս:

Լորտուն.— Զիմարայի յարեւելս 2 ժամ, սորա հանդէպն Փիսկան, որ ջրի ծախն, կարմիր գլուխներու գիւղ է:

Խալաճուխ.— Մօտ Բաշաղակու, հին աւերակ բերդ ունի, փոքր գիւղ է այժմ:

Խալաճուխ.— 3 ժամ յարեւելս բերդակի, փոքրիկ բերդ ունի:

Խաճար.— Երկու Խաճար վերի վարի, մին Մզուրայ ջրի աջ կողմս. Մըր-ձողու 1 ժամ յարեւմուտս:

Խոզաթ.— Զարանձագէ բարձր, Տէրսիմի մէջ գիւղաքաղաք ուր փաշա կընստի:

Խոզադամ.— բերդաւոր, 6 ժամ յարեւելս բերդակէն 1), ժամ հարաւ Խամայիցից գիւղէ, բազմաթիւ հին աւերակներ ունի:

Խարակետիկ.— Զկնտ փոքր ջուր, որ Մուզուրայ կը խառնուի:

Խազկիլիսէ.— Հայ գիւղեր կան քանի հատ 300 տուն Տէրսիմի մէջտեղն ընակիչ ունին Մեզկերտէ մի օր ի հիւսիս բարձր:

Խոստայ լեռ.— Զիմարայի հանդէպն 4 ժամ ի հարաւ յարեւելս:

Խուզ օվայ.— Խարբերդու երկու դաշտերու արեւմտեանն է:

Խտրոս.— Զիմարայիցի ի հարաւ սպառուած Եփրատի ու Մուրատի խառ-նուելու վայրի մէջ գիւղ է:

Ժառգովիկ.— Խոզադամի բերդէն կերելի ժառգովիկ լեռն, ուր առաջին անգամ ծինը կը ղնէ. ունի շատ խիտ անտառ, գովելի ծառներ (կաղնի) Մեզկերտէ մօտաւորապէս 5), ժամ ի հիւսիս, Մեզկերտու եւ Մերձան լեռան մէջ բարձր դիրք գրաւած հողէ լեռ է:

Ժովցից.— Կովցիկայ ծովս նախ դաշտ էր. Մաստարու լեռան ջուրն նախ արտերը ջրելու չափ կգար, երբ շատացաւ, դաշտն լիժ դարձաւ. դաշտեցիք քաղաք եւլն. վայրեր տարածուեցան. ի Խարբերդ կան ընտանիքներ, որոց ծովցից կաստի:

Կարմիր գլուխ.— Ըստ Թուրքաց ղզլպաշ, ամբողջ բռնած են Տերսիմի վիճակն, որք մահմետական չեն. քրիստոնէական սովորութիւններ ունին, մօտ 100,000 կը լրանան:

Կարջլա.— Ալինէն 1), ժամ գետի վերայ, ուստի կանցնի Կարմրկալ, որ Ալինէ մի ժամ արեւելեան հարաւ, Եփրատի աջ եզրն:

Կեղի.— Բր Բրի եւս կաստի, Բալուայ հիւսիսային յարեւելս 2 օր:

Կետնեկ.— Զմարայու ետեւն, ձորի մէջ գիւղ մի է:

Կէօկեռիկ.— Այս լեռն 5 ժամ հիւսիսային բարձրութեան վերայ է Խոզադամի բերդին, նաեւ Մտամու քարէն 5 ժամ բարձր, որոյ վերան է 40 մանկանց ուխտատեղին. որպէս ամեն գաւառ իւր սերմանելու ժամանակի նշաններն ունի, որպէր եւս Խոզադամ, ուստի երբ գարնան վերջերն Կէօկեռիկ լեռան վերայ ձեան նշան կերելի. սերմանուած սերմս կաճի, իսկ երբ ծինը չերելի, այլ եւս չաճիր:

Կործինայ մօրին.— Անտառին մօրի կասեն. Կործն ունի կաղնի անտառ այս անտառի միջէն կանցնի Մեզկերտէ Փերին գը-նացողն:

Կօլմիկայ ծով.— Խարբերդու ի հարաւ մի ատուր ճանապարհ:

Հաւլորու լեռ.— Մեծ եւ բարձր լեռ է. Մզուրայ ակներու մօտ Մեծ-կերտէ 8 ժամ ի հիւսիս յարեւմուտս է. որոյ կողերու վերան, մարձ Տուճիկի կայ մի վանք. ըստ ոմանց Մ. Կարապետ եւ ըստ բազմաց Հաւլորու վանք, ըստ Մի-նասի Հաւլոր Հաւլոր, որեւ աւելոր, որ ծեր կը նշա-նակէ. Տուճիկի քրդեր եւ ընդհանրապէս հեռաւոր վայ-րերէն ուխտի կգան տեղս, Թուրքեր Հաւլայ տաղի կա-սեն լեռանս:

Չորակ.— Լամբքայ սահմանի մէջ գիւղ, աստի միջեւ Բաղին 2 1/2, ժամ ժայրերն փորուած մէջը այսեր շինած են բազմաթիւ. շարու-նակութիւն է Լամբքայ քարէ քաղաքի:

Չայաշայ դէօր.— Դուլախսոց Թիւլէն մինչեւ Լամբքայ սահմանը. տափա-րակ վայր, առաջ երկար ծառներ ունի կաղնի եօթը տան վերայ մի գլուխ երկարացած տեսած է Մինաս:

Ղզուրալա.— Լամբքայ բարձր Շիւք գիւղն, որոյ բարձրն Ղզուրալա:

Ղուլախսոց Թիւլ.— Փերինայ ջրի աջ ափը. Արար կեչուտի վերան, Լամբ-քայ 2 ժամ յարեւելս, ուր էր Տօնիկ իշխանի տունը. ունի բերդ. ուստի հանուած է գինւոյ կարաս, որ խիստ մեծ է, առած դարձած է, երբ—գինի բեր, կասեն—Տօ-նիկ իշխանին կարանն է, կասեն:

Ղուրիչայ.— Գիւղ մի է. երկրի մի անուն նաեւ Ղուրուչայ կաստի, Խոստան օ կելլս Տերմակ կերելայ, Մլանաստառին խօծա կուգայ հողի, կնիկը կըտէ Թէ գցիր ջաղաքը մաւէ ցորենին, կերթայ կու-գայ կը մտնայ օ մաղէ, կուգայ էադ Ղուրուչայուց վերդու լեռան գլուխ օ կելլայ, սիրտէն միտքը կը յնի, ութ բեռ ալերը կը բերէ, կը հոսէ կը տանէ հողուն երեսը կը կորցնէ, հիմա էան հողը է ուսկա օր նայես Տերմակ է, կուտենը, նէ ալիք է, նէ հող է:

Մեզկերտ.— Մուզուրայ ջրի վերան 2 1/2, ժամ արեւցամբ, Փերինայ ջրէն 5 ժամ արեւմուտք. ուր գայմագամ կը նստի գիւղաքաղաք է. մեծ մասն հայ:

Մաստան.— Բաղինէն բարձր գիւղ ունի բարձր լեռներ:

Մաստարայ լեռ.— Խարբերդէ 6 ժամ ի հարաւ յարեւելս: Կօլմիկայ լճի հարաւային եզրին վերայ բարձրացած, շրթային մէջ ամենէ բարձր լեռն է, ժողովրդեան մէջ Մաստան ընու համար կըստի, Նոյ նահապետին կեմին գնաց Մաստարու գլուխ կայնեցաւ, Նոյ նահապետ տունանը (ղեկ) օլըրեց, կեմին գետինը դպաւ, խրիւրաց, ըսցը Նոյ նահապետ.— տղաք, աշուսնդ լու, ջուրը էջեր է: Բերին մաս տարտողնցին, անունը մտք Մաստարու լեռ.:

Մեղիքն.— Մրձան լեռան հանդէպն 1 ժամ հեռի ի հիւսիս, Գերձանի վիճակն մէջ:

Մերձան լեռ.— Մնձուր լեռան մի միւղն է հանդէպ Երիգայի, մարձ Սեւ գետի կսպառի, որոյ ստորոտն Մուր Լուսաւորիչ անուն վանք մի կայ:

Մզուր.— Մզուր կամ Մնձուր լեռն Մուզուրայ ջրի գլուխն 5 ժամ արեւմտեան հիւսիս Հաւլորու լեռնէն, հանդէպ Կամախի:

Մուշունայ լեռ.— Սա եւս Սեւ լեռան նման անտառապատ է, եւ որոյ կցուած (յարեւելս), Մուզուր եւ Փերին ի Մուրատ խառնուրդի աջ կողմն բարձրացած է այս լեռն:

Մուրատ.— Արձանին որ Մուշի սահմանէն անցնելէն յետոյ Մուրատ կամ Բալուայ ջուր կաստի միջեւ Սեւ ջրի խառնուրդ:

Նոր գեղ.— Ս. Տիկիմայ լեռան գլուխն հայ գիւղ է յարեւելս 3 ժամ. 1 ժամ յարեւմուտս Խալաճուխայ. ունի 10 գեղ, գեղանք արեւցամբ կը հայի, Ս. Տիկիմ լեռան տակ արեւապտը.— որոյ համար Մինաս կը պատմէ հետեւեան.— Նոր գեղու չո-պանը կը տանէ դաւաքը գեղին վերդին արծիւը, կը հայի օ իրա օխշօրի այժ) մօ ուրը ամին օր ջուր է, մէկ օր պէլէց օխշաքը գատուաւ սիրիւին միւնէ, գնաց ծնկայ վրայ շոքաւ շոպանը իրա իրա ըսցը. հոսի մի բան կայ, էլաւ գնաց օ դօժա ջնոշի մի ջուր խուշուրտայ, կերթայ, էտալին քարով ու շամրով կը բռնէ, կը գծի Թը ջուր խմէ. խաւալը կոնակներ

գարկէր, կընի ջուրը: Մի ամիս խառար կը մըր. մէկ օր  
կնիկը դուարը կը տանի, ինք էջը կը բառնայ. կերթայ Ս.  
Տիկին Ջաղացը, կէջնայ Տերեւիէն Չամաքօր: Կոտ ջուր չկար,  
կը հայի օ ջուր կայ, վրան էալ Ջաղացը շինած է. կերթայ  
Ջաղացը օ իրան խաւարը պատնիսէն կախմուն է.— Տուր  
էադ խաւարը բարս, կըսէ Ջաղացին. կառնէ ձեռքը  
կըսէ.— Իսա իմ խաւարն է, բարս.— Ինչո՞ն տի ըլիք քու խա-  
ւարը.— Էաս ջուրը ոսկա գուգանը, ջուրնէ բերեր — Զառնչան  
իրա մտածեց օ իրա ջուրնէ բերեր, խաւարը շտար. գեղա-  
ցոց խաւարը տուեց օ խաւարին տէրը էլալ. ըսանկ ըսանկ-  
էաս պուրտուրը շատ ջուր կը վերցնէ.— Իշխան Խաչոն իմաց  
էրաւ, ժողովուրդը թոփեց, չոպնիս էալ փարայ տուեց — Էկոյ  
ջրին տեղը միգի սալոցուր, ըսցց. օ շաւղոցուրի, նէ էջը. նէ  
բեռը, նէ խաւարը կուտար. Ենող մըց, տարաւ նոր գեղու  
եագիի օրթալախը աղբի վրան, գցին հանակ օ էրկու Ջաղի  
ջուր կերթայ. յէրը ձգեցին. գնաց էլալ էան Ջաղացը. չո-  
պանը հոնի տուս ու փոս պանեցին, կոխեցին հողը. ջրի էառ-  
չին բռնեցին, իրնց ոնն դառուցին. Խաչոյ եղբանը էմը ըսցց.  
հազար քարիակ շինեցին. օ ջրի ու չոպանի տեղ կորի: Հի-  
մայ Տիրեւուայ ջուրը նոր գեղու եագիէն կնւայ: Թլացցոց հո-  
ղուն վոյա կուգայ, ինչ ըսիս կեննն (կը սերմանն) քելըքով  
կը տաննն կը ծակին. Մալաթիա ցորենով ու կանանջով կտա  
ցնողը թին է:— Մէջը յիշուած հովին հըր Մօքոսին մօտ կգար  
ուխտ, շատ անգամ կաթ ու մածոն կը բերէր, Մօքոս տեսաւ  
որ այլ եւս հովիւ չերեիր, կը հարցնէ, Զեչիւ չեքեք կը վերոյ-  
գրեան կը պատմէ:

Նուկի կեչուտի. — Նուկի անցքն Եփրատի վերան, ուստի շատ անգամ ծով  
կանցնին. Ուռեկու բերդի ներքեմ է, Բավէյու լեռան  
ստորոտը, սորա քիչ ներքեմ է Ատատինայ Խակելէն:

Եիկկայ ձոր. — Լամբքայ բարձր 2 ժամ, պատուական ջուր ունի, վերան  
50 ջրաղաց կը լինի, Փերինայ ջրին կը խառնուի:

Եոտտան. — Հայի գիւղ, Նշանաւոր վայր. Մեզկերտու 9 ժամ յարեւել:  
Ուլի օվայ. — Դաշտ մի է մեծ, Խարբերդու առաջ, որ մինչեւ Եփրատի  
եզքն կը հասնի:

Ուռեկ — Երեք ուռեկ գիւղեր կան. բերդաւոր Ուռեկը Բերդկու յարեւել  
5 ժամ, Մուրատի եզրի վերան, Սեւ լեռան ստորոտը, արեւ-  
մտեան կողմն. ուր կը նստէր Թորիկ իշխանն:

Զանախի. — Մի ժամ յարեւմուտս Մեզկերտու, Մզուրայ ջրի ձախն  
Զարսանձագ. — Աղսույա եւ Փերինայ ջրի միջավայրն եղած վայրն է.  
եւ Մուրատի եզրէն մինչեւ Խոզաթ կը բարձրանայ. այս  
տեղ չորս գայմագամ կը նստի, 1 Բերդակ, 2 Խոզաթ  
3 Մեզկերտ, 4 Փերին:

Զեչիւ չեքեք. — Մօքոսի թղթատար թռչունն է:  
Զինան թագաւոր. — Զինաստանի թագաւոր Եռույս սուլթանի հայրն.  
Պէնկիսօզ. — Փանփուր սուլթանի ձին, որ հեռէն էր ձուկ ելած Ակուկ  
Արաբից առած էր:

Պուզլուխ. — Խարբերդու 2 ժամ յարեւել:  
Սեւայ քաղաք. — Մինամ թագաւորի որդին Թուրքկան քաղաքն:  
Սեւ լեռ. — Այս լեռն մեծ լեռ մի է եւ անտառապատ, աստի Խարբերդու  
փնակին գերան եւ վառելափայտ կը մատակարարուի, Թուրքք  
Ղարաղաղ կասնն, սորա միջէն խիստ խոր ձոր մի կիջնայ  
ը ֆանու ձոր անուամբ. 4 ժամ Խարբերդու արեւելեան հի-  
սիսն է. անհաշիւ վայրենի խոզ եւ այլ կենդանիք կան այս  
լեռն, սորա արեւելեան հարան կայ Ապտոցիկ գիւղն, յարե-  
ւել Զոչեկու բերդն, յԱրեւմուտս Ուռեկ. հիսիս Աղաճաներ,

առջեւէն կանցնի Մուզուր, Սորա ջրեան կերթայ Ժաղաղիկ,  
կը խառնուի Տէրսիմի լեռներուն:

Մինամ. — Թագաւոր Խարբերդի:  
Մնտամայ բերդ, Մեզկերտու 1 ժամ յարեւել:  
Մուրը Դանիէլ. — Մեզկերտու Կէօկեռիկ լեռան եւ Մնտամու քարի մի-  
ջավայրն:

Մուրը Թորոսի գիւղեր. — Խօստայ լեռան յարեւելս մօտ 150 գիւղեր:  
Մուրը Յայրօն. — Պուզլուխի գիւղին էրկու մեծ քարերու միջավայրն գե-  
րեզման է, ուխտ կերթան:

Մուրը Նշան. — Կուլմայ ծովի մէջ վանք մի:  
Մուրը Տիկին. — Բերդակու յարեւելս 1 ժամ.  
Սըմձող. — Մուզուրայ ջրի աջ ափի վերան ուր կամուրջ կայ, Մեզկերտու  
յարեւմուտս 2 1/2 ժամ:

Սօսեկ. — Լեռ Փնկեանի 2 ժամ յարեւել:  
Վասկերտ. — Գիւղս բերդ ունի, Խուլխախին կամուրջ կանցնի անտառ է  
մինչեւ Վասկերտ 2 ժամ, ուր մեր պատմիչ Մինաս աւերակ  
մի փորած, թռնուիք մի գտած է, որոյ կողին թխուած եր-  
կու հաց տեսած հանած կերած է որ նոր հացի համ ունէր,  
ինչ կերած եւ գիւղացոց եւս տուած է: Վասկերտի շուրջ  
շատ մզնաւորի այրի կան, ժայռերու մէջ փորուած քնակա-  
րան շինուած է. քարի միջից եւս լուսամուտներ հանուած է:  
Տաղալաղի. — Խոզաղաճի գիւղին, ուր սազլո, մորմենի անտառ կայ, նաեւ  
պտղատու ծառեր եւ վայրենի հաւեր:

Տերեւի. — Չոր մի է, որոյ ջուրն նոր գեղու լեռնաղաշտէն կիջնայ, այս  
ջրի վերան ջրաղաց կայ, ուր կան թլացեք, Բերդկեք:

Տէրօվան. — Տուփկայ յարեւելս 6 ժամ քրդական բարձր հովասուն վայ-  
րեր բազմաթիւ գեղօրայք:

Տիվրիկ. — Զինարայի յարեւմուտս 2 ժամ, Սեբաստիոյ կը պատկանի:  
Տուփիկ լեռ. — 11 յս լեռան մի ծիւղն մինչեւ Բալու խնարհելով Եփրատի  
եզքերի վերան կընդհատի:

Յաղման. — Աղսույա ջրի վերան Եփրատէ 5 ժամ բարձր:  
Փերին. — Փերինայ ջրի աջ ափի վերայ. Փերին ի Մուզուր խառնուածքէն  
1 1/2 ժամ բարձր հայ գիւղ, 500 տուն:

Փերենեկ. — Պուզլուխէն իջած ձորն է, շատ խոր:  
Փինկեան. — Զինարու հանդէպն 1 ժամ յարեւելս ջրին ձախ ափին վրայ,  
500 տուն հայ:

Բավէյու լեռ. — Թլայ եւ Ուռեկու մէջ տեղն է, եղնիկ շատ կայ, տեղ  
տեղ անտառ է. մի բարձրուիւն ունին իրարու դիմաց  
սեւ, Բավէյու լեռ, Պուզլուխ եւ Մուրչունայ լեռ:

Բիւրեքէն. — Բասունայ կողմն ամենէ վերջի հայ գիւղն է, Արաք կեչուտի  
գիւղին:

Օվաճուխ. — Բեմախու հարան 3 ժամ, Խօստայու յարեւելս 5 ժամ,  
Մզուրայ ջրի գիւղին օվաճուխէն կնւայ, բազմաթիւ քուր  
գիւղեր կան:

Օրդուն Ղափուսի. — Օրդուն ղափուսիք (գետնուրի) երկուք են. մին Սեւայ  
քաղաքին երկրորդն Լամբքայ, որ Լամբքայ քարէ  
քաղքի էտեուն արեւապտը կը բարձրանայ

Փալաղաի. — Մէրճիմէկ գիւղին տակ Մ. Տիկինայ 1 ժամ յարեւել:

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Բ Ա Ռ Ի Բ

Աղսեկ — Դատու  
Այսին — յայտնի

Ապուհաեաթ — կենսատուրը  
Ավլա — դարձեալ

Արեւաատը — արեւմուտը  
 Արեւցաթ — արեւելք  
 Ափուց — ձեռքէն  
 Բանին — կերթեւեկեն  
 Գննըն — գտնեն.  
 Դայրել — տանել  
 Դարման — յարդ  
 Գէօթ — տափարակ  
 Դուման — դեկ  
 Զաւթ — ըմբռնել  
 Զիւանեն — եզր  
 Զնծիւ — շղթայ  
 Զնար — ժայռ  
 Զօրպա — ըռնաւոր  
 Էգի այգի  
 Եկը — եթէ  
 Էմեկ — աշխատանք  
 Թարաւ — կողմ  
 Թեմել — հիմն  
 Թէյնա — առանձին  
 Թօփել — հաւաքել  
 Խաթար — խումբ ուղտի  
 Խալըսէ — ազատե  
 Խափուշ — միացումս  
 Խարասպա — աւերակ  
 Խարսըմուն — սպիտակացնել  
 Կարմնը գլուխ — դարւաւաշ  
 Կեմ — խոտի խրձան կապ  
 Կուս — կուրծք  
 Հազը — պատրաստ  
 Համամ — բաղանիք  
 Հափուզ — լոգարան  
 Հելպէթ — հարկաւ  
 Հերսէն — կրքէն  
 Դազա — վիճակ, գաւառ  
 Դասաֆէթ — հոգ  
 Ծաղպուել տարածուիւ  
 Ծաշուայ դէն — հարաւ

Մեշե — անտառ  
 Մըշնել — փռել, տարածել  
 Մօրի — անտառ  
 Ուտա — վարպետ  
 Չայ — գետ  
 Չլպախ — մերկ  
 Պառ — այգի  
 Պար — չափ, պտուղ  
 Պանել — սպաննել  
 Պէտէն — պարիսպ  
 Պէօլիւք — խումբ  
 Պուզ — սառոց  
 Սալթա — կարծ վերարկու  
 Սալկցնել — յայտնել  
 Սարայ — ապարանք  
 Սելուի — սոսի  
 Սըրթ — ող լեռան  
 Սիւզմէշ — քամուիւ  
 Վախտ — ժամանակ  
 Վարանաթաք — մենչեւանգամ  
 Վերան — աւերակ  
 Տամա — յանկարձամահ  
 Տարտղնել — ցրուել  
 Բալամ — կաղամբ  
 Բելլէք — լաստ  
 Բեմեր — կամար  
 Բեն հնել — ռի պահել  
 Բէյլան — նժոյգ  
 Բիմիսին — մի քանին  
 Բիւլունկ — սուր մեծ մուրճ  
 Բնար — եզր  
 Բուլլին — ամբողջն  
 Բօշել — գաղթել  
 Օլըրտիւ — մանգալ  
 Օխ — նետ  
 Օվա — դաշտ  
 Օրթ ըլե — մէջին  
 Փասլ — սակաւ ինչ



« Ազգային գրադարան



NL0242596

